Էջմիածին



ՌՆԸ
ԺԶ ՏԱՐԻ

Փեսրուար

ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՀՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Բ

1959



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	էջ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ— Եկեղեցական ուխտապահություն և հայրենասիրություն	3
ՎԱՉԳԵՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ— Մեր հարազատ լեզուն	6
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ	9
Վարդանանց տոնը և Վեհափառ Հայրապետի անվանակոչության տարեդարձի հանդեսը Մայր Աթոռում	11
Տերազույն Հոգևոր խորհրդի անդամ պրոֆ.-դոկտ. Ա. Ղարիբյանի ճոբելյանը Մայր Աթոռում	15
Վ. ԱՌԱՔԵԼՅԱՆ— Արարատ Ղարիբյան	19
Հակոբ Կոչոյան	23
Նկարիչ Աբրահամ Գուրգենյան	26
Վեհափառ Հայրապետի ճոբելյանը Սփյուռքում	28
ՄԱՐԻ ԱԹՄԱՃՅԱՆ— Էջմիածնի մեղրամոմը	40
ԶԱՎԵՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ— Սուրբ Անանիայ գաղութը այսօր	41
Հայաստանը ԺԸ դարի ռուսական նկարչության մեջ	43
Ս. ԱՎՉՅԱՆ— Թբիլիսիի Մեյդանի Սուրբ Գևորգ Կարոզիկե Սուրբ Աստվածածին կամ Բերդի Մեծ եկեղեցին	46
Հ. Գ. ԽԱԼՓԱԽՉՅԱՆ— Արձանագրությունները հայկական ճարտարապետության ստեղծագործության կոմպոզիցիայում	52
«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ— Հայաստանյայց Առաքելական եկեղեցու և հայ ժողովրդի մասին սխալ և վնասակար մտքեր	62

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ՝
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ, ԷՋՄԻԱԾԻՆ
«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала „Эчмиадзин"
Redaction of the magazine „Etchmiadzin", Etchmiadzin, Armenia, USSR

Երևան, 1989 թ.

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՎԱՂԳԵՆԱՑ ԱՌԱՋՆՈՑ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՈՒԽՏԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

(ՂԵՎՈՆԴՅԱՆՑ ԵՎ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՈՆԵՐԻ ԱՌԹՎ)

Հազար հինգ հարյուր տարիներ մեզ բաժանում են Ղևոնդյանց և Վարդանանց հերոսական ծանր օրերից, մոայլ ժամանակներից, բայց երբեք չեն թառամել հայ հավատի այդ քաջարի նահատակների և Հայրենիքի անձնուրաց մարտիկների լուսապայծառ անունն ու խոնկելի հիշատակը հայ հոգիների անդաստանի մեջ, որ հայոց պատմությունն է:

Ղևոնդյանք և Վարդանանք «վասն Տիրոջ» և «վասն հայրենեաց» մղված հերոսական պայքարի ոգեշնչողներն ու կազմակերպիչներն էին, որոնք 451 թվականի մայիսին Ավարայրի դաշտում զեկավարեցին հավատի և հայրենասիրության դյուցազնամարտը, բռնության և խավարի ուժերի դեմ:

Ավարայրի նակատամարտը անցյալում հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարի պանծալի բարձունքն է, հերոսական արտահայտությունը Հայ Ազգի բարոյական բարձր նկարագրի, հայրենասիրության, եկեղեցական ուխտապահության:

Ղևոնդյանք, նահատակ հոգևորականների այդ լուսե փաղանգը, Հայ Եկեղեցու պարծանք սրբերն են և «խոյանան Եկեղեցւոյ», որոնք երջանիկ արիությամբ «ճեղին զարիւս իւրեանց ի նորոգումն Եկեղեցւոյ», և նրանց անձնուրաց նահատակությամբ «եկեզեցի՛ Հայաստանեայց պայծառապէս զարդարեցան»: Նրանք փորձության ժամին մնացին արի, տոկուն, անկաշառ՝ դավերի և փառքի խայծերի առաջ, որովհետև ջանակիրներն էին ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ և զինակիրները ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ:

Նրանք զոհեցին ամեն ինչ՝ եկեղեցական ուխտապահության և հայրենասիրության նվիրական գործի համար:

Իսկ Վարդանանց պատերազմի արգասիքը հանդիսացավ հայության գոյության հավերժացումը, որպես ուրույն Ազգ և եկեղեցի: Վարդանանք, Ավարայրում իրենց հերոսությամբ, մանվան դեմ խիզախումով և «օգնականութիւամբն Աստուծոյ» այնպիսի գործ կատարեցին, որի «համբաւն պատմեսցի յաւիտեան», որպես հայոց պատմության «ազգապանծ և հոգեզմայլ մի էջը»:

Հայ ժողովրդի սրտում Ղևոնդյանց և Վարդանանց ՈԳԻՆ անմեռ է մնացել: Վարդանանց և Ղևոնդյանց տոնը հայ մարդու սրտին խոսող ազգային մեծագույն տոնն է: Վարդանանք և Ղևոնդյանք հավատավոր, անձնուրաց, Հայրենիքի սիրով և Ավետարանի կենդանի հոգով առլցված սուրբ եղան և մնացին այդպիսիք ընդմիշտ մեր ժողովրդի ազգային զգացմունքների առաջ: Նրանք հայության բյուրեղացած նկարագրի չքնաղ արտահայտությունն էին, որոնք միասիրտ հանձնառությամբ կռեցին եկեղեցական ուխտապահության սրբազան ուխտը «ուխտ հաւատոց մերոց», և ցանեցան Ավետարանի ոգով ու Հայրենիքի շնչով կենդանի պահել ՀԱՅՈՒԹՅԱՆԸ և այդ սուրբ եղբայրակի իրա-

գործելու համար, սիրահոժար հանձն առին նվաստացումը: Ոչ ուխտապահությամբ բաժանվում էր այդ համազգային միաբանությունից, այդպիսին դասվում էր մատնի, Հոգալի կարգը:

Եկեղեցական ուխտապահությունն ու հայրենասիրությունը իրար էր բերել, միացրել բոլորին, դարձրել մի սիրտ ու մի հոգի, պատրաստ ամբ գործի համար «ի մեռանել և ի սպանանել»: Տերն ու ծառան, ազնվականն ու գեղջուկը, նախարարն ու հոգևորականը, այր թե կին, բոլորը լցվել էին ճավասարապես արիական ոգով, և սպառազինված՝ հրիտոնեական հավատով. «Բաղութեամբ միայն մեռցուք... բայց միայն յարութիւն բաղութեան վատութիւն մի՝ խառնեսցուք»: Ու բոլորը կռվեցին բաղությամբ, անհանգիստ արիությամբ, որպեսզի «ԻԱՐՔՐԱՍՑԻ ԿԻՂՄՆ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ ԵՒ ՄԻ՝ ՔԱԿՏԵՍՑԻ ՈՒԽՏՆ ՀԱՒԱՏՈՑ ՄԵՐՈՑ»:

Ղևոնդյանց և Վարդանանց հանճատակությամբ պայծառացավ եկեղեցին, կոփվեց եկեղեցական ուխտապահությունը և փառավորվեց Հայրենի հողը:

Նրանք իրենց մարտիրոսությամբ արժանացան ոչ միայն հանճատակության անբառամ պսակին, այլ նաև անջինջ ու հավիտենական ճիշատակ բոլոր ապագա հայ սերունդների սրտում:

Եվ հետագա դարերում, երբ օտարները սուր բարձրացրին մեր եկեղեցու և Հայրենիքի անկախության վրա, Ղևոնդյանց և Վարդանանց եկեղեցական ուխտապահության և հայրենասիրության ոգին նորից ոտքի հանեց հայ սերունդներին: Այդ ոգին այդպես հավերժացավ հայոց պատմության էջերում ու դարձավ անխորտակելի վեմը մեր ժողովրդի գոյության:

Այսօր, երբ մի անգամ ևս սիրով և երախտագիտությամբ ոգեկոչում ենք խնկելի ճիշատակը Ղևոնդյանց և Վարդանանց հանճատակների, արդարորեն ոգեշնչվում՝ նրանց սուրբ գործով, միաժամանակ ապրում ենք խորունկ վիշտը Սփյուռքի մեր ազգային-եկեղեցական կյանքի այն տխուր և խորթ երևույթների, որոնք ընդհանուր ոչինչ չունեն ՂԵՎՈՆԴՅԱՆՑ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՈՒԽՏԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՈԳՈՒ ԵՎ ՊԱՏՔԱՐԻ ՀԵՏ:

Բավական չէ սուրբ պատարագով, հանդիսահերով, խնկով ու աղոթքով ոգեկոչել ճիշատակը Ղևոնդյանց և Վարդանանց: Իսկապես այն է, որ ԱՊՐԵՆՔ ԵՎ ԳՈՐԾԵՆՔ նրանց ոգով, գնանք նրանց հանապարհով: Սակայն դժբախտաբար միշտ չէ, որ այդ հաջողվում է: Հանախ մոռանում ենք մեր մեծ հանապակներին: ՇՐԹՆԵՐՈՎ հարգում և մեծարում ենք նրանց ճիշատակը, իսկ ԳՈՐԾՈՎ քանդում ենք նրանց հանճատակության գծով ձևավորված և կրթված եկեղեցական ուխտապահությունը, ազգային միասնականությունը:

Վերջին երկու տարիների ընթացքում հրապարակ են իջել Սփյուռքում մի շարք ուղեկորույսներ, որոնք հատվածական և անձնական նեղ շահերից առաջնորդված, փորձում են խլել սրբազան «ուխտն հաւատոց մերոց», որի պաշտպանության համար արյուն թափեցին Ղևոնդյանք և Վարդանանք:

Ցավ ի սիրտ, այստեղ պետք է արձանագրել, որ եկեղեցական ուխտապահության դեմ դավանանողների առաջին շարքումն է նաև մի հոգևորական, Կոստանդնուպոլսի ծերունազարդ պատրիարքի դիպուկ բնութագրումով՝ «դավի ընկեր» և հայ հոգևորականության շարքում «սև մոմ» խորհն եպիսկոպոս Բարոյանը, մեր օրերի Ջանգակ երեցը, «ժանտ սերմ և անօրէնութեան որդի», որը «դրժելով իր ուխտին և կրոնական կոչումին, կուսակցական փոքրոտ կերաներ եղբայրատեցությունը եկեղեցիներ»:

Այս օրերին նա, Ղևոնդյանց և Վարդանանց հանճատակության հանապարհի վրա, արձամարհելով նրանց սուրբ ճիշատակը և «դարձած կամավոր կույր և անատակ՝ գտնելու ճշմարտության հանապարհը» (Ղևոնդ երեց), փորձում է իրեն նման այլ ուղեկորույսների հետ խլել Թեհրանի, Սպահանի, Թավրիզի հայ հավատացյալ և հայրենասեր ժողովրդի ուխտի և հավատի միասնականությունը, հակառակ իրանահայ հոգևորականության ուխտապահության և համայն հայ ժողովրդի կամքին, քարոզելով «զխաւարային խորհուրդս մոլորելոցն»:

Ղևոնդյանք և Վարդանանք Պարսկաստանում ախտորի հանապարհը անցան շղթայակապ, բոկոտն, բայց արի, վճռական ու հավատարիմ «ուխտին հաւատոց հարցն մերոց և Աւետարանին»: Բարոյան եպիսկոպոսը, հանճատակության այդ արյունոտ նույն հանապարհի վրա, հանճատակների արյան հետքերի վրա պատեցնում է իր այլանդակ ստվերը որպես «հաղթական»-ի, եկեղեցական ուխտապահությունը խլել փորձողի տխուր, անփառունակ դերի մեջ, երեսուն արծաթի վարձով: Վաղուց նրա նախանձի անօրեն ոգին դատարկվել է Ղևոնդյանց առաքինությունից և Վարդանանց հավատից, դարձել «մանկան դեղագործ և բոլոր տակրամիտների հոգիների կորստյան մատռվակ» (Ղևոնդ երեց):

Վեհափառ Հայրապետը, 1959 թվականի Ս. Մենդյան Իր պատգամի մեջ, Իր հայրական օրհնությունը տալով նաև Վարդանանց և Ղե-

վեղյանց ուխտին և ոգուն հավատարիմ Իրանի հավատացյալ և հայրենասեր Իր զավակներին, գրում էր.

«ԵՎ, ՍԻՐԵԼԻ՛ ՊԱՐՍԿԱՀԱՅԵՐ, ՄԱՆԱՎԱՆԴՈ՛ՒՔ, ՀԱՎԱՏԱՎՈՐ ԵՎ ՔԱՋԱՐԻ ՈՐԴԻՔ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴՅԱՆ, ՈՐ ԴԱՐԵՐԵ Ի ՎԵՐ ԿԱՊՐԻՔ ՄԵՐ ԴՐԱՑԻ ՀՅՈՒՐԸՆԿԱԼ ԻՐԱՆԻ ՄԵՋ, ԶԵԶ ԲՈԼՈՐԻԴ ԿՈՉ ԿԸՆԵՆՔ՝ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՎ ՄԻԱՑԵ՛Ք ԵՎ ԶՈՐԱՑԵ՛Ք, ԵՎ ԹՈՒՑԼ ՄԻ՛ ՑԱՔ, ՈՐ ԶԵԶ ՀԱՓՇՏԱԿԵՆ ԱՆՀԱՐԱԶԱՏ ԶԵՌՔԵՐ:

ԱՅԴ ԱՆՀԱՐԱԶԱՏ ԶԵՌՔԵՐԸ ԿՓՈՐՁԵՆ ԱՆՋԱՏԵԼ ՁԵՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԵՆ, ԹԵՀՐԱՆԻ, ԹԱՎՐԻԶԻ ԵՎ ՍՊԱՀԱՆԻ ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՈՒ ՀԱԿԱԿԱՆՈՆԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ, ԵՎ ԿԿԱՄԵՆԱՆ ԶԵԶ ՄԻԱՑՆԵԼ ԱՅԼ ԿԵԴՐՈՆԻ, ՈՐ ԱՎԱՅԻ ՎՐԱ Է ՀԻՄՆՎԱԾ, ԵՎ ՈՐՈՒՆ ԱՆԼՈՒՅՍ ՂԵԿԱՎԱՐՆԵՐՈՒ ԿՅԱՆՔԻ ՆՊԱՏԱԿՆ Է՝ ՔԱՆԴԵԼ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՍՐԲՈՑ ԱՍՏՎԱԾԱԿԱՌՈՒՅՑ ԷՋՄԻԱԾՆԻ ՀԻՄՔԵՐԸ: ԱՅԴ ՁԱՐ ՈԳԻՆ ԹՈՂ ՀԵՌԱՆԱ ՁԵՐ ՍԱՀՄԱՆՆԵՐԵՆ, ԹՈՂ ՀԵՌԱՆԱ ՁԵՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԵՆ, ՁԵՐ ՏՈՒՆԵՐԵՆ, ՈՐՊԵՍԶԻ ԴՈՒՔ ԳՏՆԵՔ ՁԵՐ ԿՅԱՆՔԻ ԵԱՂԱՂՈՒԹՅՈՒՆԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՍՈՒՐԲ ԶՈՐՈՒԹՅԱՄԲ»:

Անեղ է զորությունը Ս. Էջմիածնի և անքակտելի՝ «ուխտն ճաւատոց մերոց», որովհետև մեր եկեղեցական ուխտապահությունը ոչ եթէ ընդ մարդոյ է... այլ ունելությամբ Աստուծոյ, որում չիք ենար քանդել և ի բաց ելանել ոչ այժմ, և ոչ յապա և ոչ յաւիտեանս և ոչ յաւիտենից յաւիտեան»:

Բարոյան եպիսկոպոսը և իր եմանեները պիտի տեսնեն մոխրանալը իրենց սին երազների: Մեր հավատացյալ և հայրենասեր ժողովուրդը, հայ մամուլը, վճռական հակահարվածը տվել են նրանց: Հակառակ Բարոյան եպիսկոպոսի և իր եմանեների քուռալից խոհուրդների, սատանայական ծրագրերի և դավադրությունների, մեր ժողովուրդը համախմբվել է Ս. Էջմիածնի և իր Հայրենիքի շուրջ, և չի ցանկանում լսել իրենց խիզեը վանառած և հայրենադավ մոլորյալներին:

Ղևոնդյանց և Վարդանանց հաղթական դրոշը իր սուրբ և վստահելի ձեռքումն է պահում Հայաստանյաց Առաքելական Մայր Եկեղեցին՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի գլխավորությամբ, որպես վեմը եկեղեցական ուխտապահության և օջախը հայրենասիրության:

Աղոթենք, որ մեր սրտերում միշտ վառ մնան Ղևոնդյանց եկեղեցական ուխտապահությունը և Վարդանանց հայրենասիրական ոգին:

ՎԱԶԳԵՆ Ա.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՄԵՐ ՀԱՐԱԶԱՏ ԼԵԶՈՒՆ*

«Թող բարձր և խոսխ ճնչի հայ լեզուն ամենուրեք»:
(«ԷՋՄԻԱԾԻՆ»)

Հայ գաղթաշխարհի ամենալուրջ ուշադրության արժանի հոդված մը լույս տեսավ մեր Մայր Աթոռի պաշտոնաթերթ «Էջմիածին»-ի մարտ-ապրիլ 1949-ի համարին մեջ, «Մի ծանրակշիռ խնդրի շուրջ» խորագրով, հայ լեզուն գաղութներու մեջ կենդանի պահելու անհրաժեշտության վերաբերյալ, Ամերիկայի Հայոց Առաջնորդարանի «Հայաստանյայց եկեղեցի» հանդեսին մեջ, 1948 թվականի հոդվածի մը հրատարակության առթիվ:

Տրված ըլլալով խնդրույն կենսական կարևորությունը Սփյուռքի հայության համար, պարտք կզգանք թույլին հանձնելու քանի մը նշումներ և դատումներ, հայ լեզուն արտասահմանի մեջ կենդանի պահելու նվիրական գործին նկատմամբ:

Ռումանահայ գաղութը ևս մտահոգված է մայրենի լեզվի պահպանման խնդրով, մանավանդ որ իր աչքին առջև ունի Անիի գաղթականության տխուր պատմությունը, որ թեև 80—100 տարի առաջ քանի մը տասնյակ հազարներու հասնող ժողովուրդ մը կկազմեր, իր եկեղեցիներով, կալվածներով, մշակութային-բարոյական հաստատություններով, սակայն վերջին հարյուրամյակի ընթացքին այդ ժողովուրդը ուծացավ, հալեցավ և կորսվեցավ: Այսօր կգտնենք միայն տեղոց մնացորդները, քանի մը հարյուր հոգի, ցրված երկոտասնյակ մը քաղաքներու մեջ, որոնք տակավին հայ ծագում ունենալու գիտակցությունն ունին և ինքզինքին կկոչեն «լուսավորչական ռումիններ», որոշ կապ պահելով մեր եկեղեցիին հետ:

Ակներև է սակայն թե, եթե Ռումանիո մեջ շքլլար ներկայությունը նոր թրքահայ գաղթականության, այդ հին հայության մնացորդներն ալ կորսված կըլլային առանց հետքի:

Մոլդավիո երբեմնի հայաշատ կեդրոններու մեր տասնյակ եկեղեցիները, վանքերը, եկեղեցապատկան շենքերը, այսօր գրեթե դատարկ և անկենդան, միակ վկաներն են հին հայության անցյալ փառքին: Մնացյալը խոր լռություն է...:

Պատմությունը մեզի կսորվեցնե, թե այս իրողության պատճառներեն գլխավորներն են.

ա) Մայր երկրի, Հայ Հայրենիքի հետ կենդանի կապի պակասը.

բ) Մայր Աթոռ Ս. Էջմիածնեն բաժնվիլը կամ անոր հետ սերտ ճարաբերությանց պակասը.

գ) Հայ լեզվի կորուստը:

---

* Առանձին հանույթով վերահրատարակում ենք Վեհափառ Հայրապետի վարդապետության ժամանակ գրված այս արժեքավոր հոդվածը, իր այժմեականության համար, վերցնելով այն «Էջմիածին» ամսագրի 1950 թվականի մարտ-ապրիլ համարից։— ԽՄԳ.:

Լենինականի և Տրանսիլվանիոյ նոր թվով հայությունը իր հոգին, իր լեզուն և դիմագծությունը կորսնցուց իբրև ուղղակի հետևանք Մայր Աթոռին, Հայաստանյայց Եկեղեցիին բաժնվելուն և Պապական անհարազատ եկեղեցիին գիրկը իյնալուն:

Հայ Եկեղեցին և ժողովուրդը երբ կարեցին կապերը Մայր Երկրին և Մայր Աթոռին, այլևս անզոր դարձան պահելու հայ ժողովուրդի ազգային ինքնուրույնությունը:

Պապական Եկեղեցին իր սխալ հասկացած համամարիստոնեական միությունն ստեղծելու կոսմոպոլիտ գաղափարախոսությամբ, սպանեց մեր ժողովուրդի ազգային ոգին:

Մոլդավիոյ և Բուքովինայի հայությունը դիմադրեց ԺԸ դարու դավանափոխության հոսանքին և մնաց հավատարիմ Ս. Էջմիածնին: Այս կերպով ան պահեց իր ինքնությունը, իր լեզուն և մշակույթը մինչև գրեթե ԺԹ դարու վերջերը: Սակայն ինչ-ինչ պատճառներու բերմամբ, այդ շրջանին չկրցավ իր կապը պահպանել Մայր Աթոռի հետ, չունեցավ բեմական առաջնորդներ, թեև բոլոր Եկեղեցիները շեն և պայծառ վիճակի մեջ եղան միշտ. բազմաթիվ քահանաներով, չկրցավ պահել իր վարժարանները, չկրցավ մանավանդ կենդանի պահել մայրենի լեզուն և կորսնցուց իր ազգային դիմագիծը:

Արդ, եթե կկամենանք, որ մեր այսօրվան գաղութները նույն վախճանը չունենան, ամեն գնով և բոլոր միջոցներով պետք է պահպանենք հայ լեզվի կենդանի գործածությունը Հայաստանյայց Եկեղեցվո մեջ և Եկեղեցիներ դուրս մեր առօրյա կյանքին մեջ, հայկական հայրենասիրության ոգիով առաջնորդված:

Հեռու մեզմե այն մոլորությունը, թե առանց հայ լեզվի կրնանք հայությունը կենդանի պահել միայն կրոնքով ու եկեղեցական պաշտամունքով:

Ժողովուրդի մի կյանքին մեջ, լեզուն լոկ «իբր անդրուվար ծառայող» գոյություն մը չէ: Լեզուն կենդանի մարմին մըն է, օրգանիզմ մը, ժողովուրդի հոյզերեն և մտածումներեն ծնած, զարգացած ու ծաղկած, ան մշտաև կենդանության և անմահ մեջ գտնվող և ինքն ալ իր կարգին այդ ժողովուրդին յուրահատուկ զգայնությունը, մտածելու կերպը, հոգեկան նկարագիրը պահելու պաշտոնն ունեցող կենդանի ուժն է:

Ամեն անհատ կգա ու կմտածե այն լեզվով, զոր կխոսի իբր մայրենի լեզու: Ամեն անհատ իր ազգակիցներու հետ կրնա հասկրցվիլ մանավանդ մայրենի լեզվով:

Հոգին, գիտակցությունը անկախ չեն խոսված լեզվեն: Այս վերջինը իր դրոշմը, իր գույնը, իր կաղապարները, իր շունչը կպարտադրե մտածումին և զգացումին:

Լեզուն ժողովուրդի մը հոգեծին որդին է. որ հասունության հասնելով, իր ծնողը կպահե, կպահպանե և կառաջնորդե:

Հայաստանյայց Եկեղեցին անշուշտ որ գաղութներուն մեջ վճռական դեր ունի հայապահպանման գործի մեջ, պայմանով սակայն, որ հայ լեզուն կենդանի պահվի անոր մեջ և անոր կողին: Վասնզի եթե լեզուն մոռցվի, ինքը Եկեղեցին ալ կուծանա, անարյուն իրականության կվերածվի ազգային տեսակետե: Առանց մայրենի լեզվի, հայ հավատացյալը անխուսափելի կերպով կկորսնցնե իր հայու հոգին, ազգային ուրույն դիմագիծը ու ինքնուրույնությունը:

Լեզուն հավիտենական ճշմարտություն է, կենդանի ուժ և արժեք այն իմաստով, որ կապահովե ժողովուրդի հավիտենականությունը:

Սանոթ է բոլորին, թե ինչպես ֆրանսացիք հպարտությամբ կըսեն. «Ֆրանսան՝ այդ ֆրանսերեն լեզուն է»:

Լեզուն կենդանի իրականություն մըն է. որ կյանք կառնե ժողովուրդեն և կյանք կուտա անոր. այո, ան կրնա մեռնիլ, բայց իր հետ կբաղե և այդ ժողովուրդը որպես ազգային ամբողջություն, կբաղե նաև անոր մշակույթը:

Եթե Ե դարու մեր երջանկահիշատակ նախնիք Հայ Եկեղեցիին չտային սեփական լեզու, գիր ու գրականություն, մեր Եկեղեցին վստահաբար շատոնց ի վեր կորսնցուցած կըլլար իր ազգային նկարագիրը, իր անկախությունը և իր գոյությունն իսկ:

Ահա թե ինչ կգրե այս մասին մեր վեհափառ Հայրապետը, «Հայոց Եկեղեցին» հոդվածին մեջ. «Հայ Եկեղեցին, որ իր առաքելական ծագմամբ ինքնագլուխ է, դարձավ կատարելապես ազգային. երբ Ներսես Մեծի

ուդին՝ Սանակ կաթողիկոս և Մեսրոպ Մաշ-
տոց հայ տառերը հնարեցին, Ս. Գիրքը հա-
յերենի թարգմանեցին և հետզհետե ստեղծ-
վեցավ ե դարի հայ կլասիկ գրականությունը:
Այդ օրվանից հայ լեզվի և Հայ եկեղեցու
ուղիները միանյուսվեցին և նրանք համբե-
թաց քայլեցին»:

Խորին մեջ ժողովուրդ, Հայրենիք, սեփ-
ական լեզու և մշակույթ մեկ անբաժանելի ամ-
բողջություն կկազմեն, կարելի չէ երկար
ժամանակ մեկը պահել առանց մյուսին:
Ամեն ժողովուրդ այն չափով է ժողովուրդ,
ինչ չափով որ ան ունի սեփական երկիր,
սեփական լեզու, մշակույթ և ինքնավար հա-
վատական կյանք:

Երջանկություն է մեզ բոլորիս համար
հաստատել՝ թե այսօր, երկար ու մռայլ ալե-
կոծ պատմության մը հորձանքներեն վերջ-
պես ազատագրված հայ ժողովուրդը, իր
հորատեղն, հարազատ պետության՝ Սովե-
տական Հայաստանի մեջ, վերագտած է և
ամուր կերպով հաստատած իր ազգային
կյանքի ու զարգացման բոլոր հիմնական
պայմանները:

Հայ ժողովուրդը փրկված է այլևս, կմնա
Սփյուռքի մեջ ցրված մեր ժողովուրդի զա-
վակներու պահպանման և փրկության հար-
ցը:

Տարակույս պետք չէ ունենալ, թե Մայր
Հայրենիքեն դուրս, գաղութային պայմաններ-
ու մեջ, անհնար է հայը հայ պահել տևա-
կանորեն և լրիվ կերպով, սակայն միշտ մեր
ժողովուրդի ամբողջական վերագարձը դեպի
Մայր Հայրենիք, բոլորիս սեպուն պարտա-
կանությունն է մեր եկեղեցիներու կողքին
հիմնել հայրենասիրական մշակութային
հաստատություններ և մեր նախնիներու
հավատքին հետ միասին և հույն սրբության
զգացումով պահել ու ապրեցնել մեր մայրե-
նի մեծասքանչ լեզուն, զոր Նարեկ Զարյան
արդար հպարտությամբ կկոչե «Հերոսական
լեզուների հերոս եղբայր, հայոց լեզու»:

Այսօր մանավանդ, երբ հայ ժողովուրդը
իր վերածնած, հասակ ենռող և օրե օր աճող
սեփական Հայրենիքը ունի, սովետական մեծ
ու ազատ եղբայրության աշխարհի մեջ,
Սփյուռքի մեջ հայ լեզուն, հայ հոգին, հայ
հայրենասիրությունը կենդանի ու վառ պա-
հելու նվիրական գործը Հայ եկեղեցիին ու
անոր բոլոր սպասավորներուն թե՛ պատմա-
կան սեպուն պարտականությունն է և թե՛
անոնց ազնիվ հպարտությունը:

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ՀՈՒՆՎԱՐԻ 11-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց արժանապատիվ Տ. Հովհաննես քահանա Մարուքյանը, «Արթուն կացէք, զի ոչ գիտէք երբ տէր տանն գայցէ» (Մատթ. ԺԴ 35) բնաբանով։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ՀՈՒՆՎԱՐԻ 12-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, ամանորի և Ս. Ծննդյան տասնօրյա արձակուրդից հետո, դասավանդությունները վերսկսվեցին Հոգևոր Ճեմարանում։

***

ՀՈՒՆՎԱՐԻ 13-ԻՆ, ԵՐԵՔՇԱԲԹԻ, «Տօն անուանակոչութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»։ Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Մաշտոց արեղա Թաջիրյանը։

***

ՀՈՒՆՎԱՐԻ 15-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, «Տօն ծննդեան Յովհաննու Կարապետին»։ Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Մկրտիչ ավագ քահանա Մկրտչյանը։

***

ՀՈՒՆՎԱՐԻ 15-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, երեկոյան ժամը 4-ին, Հոգևոր Ճեմարանում դասախոսեց Երևանի գեոլոգիական Թանգարանի դիրեկտոր Լևոն Ավագյանը՝ «Հայաստանի հանքային հարստությունները և նրանց օգտագործման հեռանկարները» թեմայի շուրջ։

Դասախոսությունը լսվեց մեծ հետաքրքրությամբ։ Վերջում վերատեսուչ սրբազանը ջերմ շնորհակալություն հայտնեց բոլոր ներկաների կողմից՝ շահեկան և բովանդակալից դասախոսության համար։

***

ՀՈՒՆՎԱՐԻ 15-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, երեկոյան ժամը 7-ին, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահության տակ, Վեհարանում դասավարվեց միաբանական ընդհանուր ժողով՝ նվիրված վանական ներքին կարգապահության վերաբերյալ հարցերին։

***

ՀՈՒՆՎԱՐԻ 16-ԻՆ, ՈՒՐԲԱԹ, գերաշնորհ Սահակ արքեպիսկոպոսը մեկնեց Թբիլիսի՝ Ս. Ծննդյան տոնի (հին տոմարով) առթիվ նախագահելու համար եկեղեցական հանդիսություններին։ Սրբազան հորը ընկերակցում էին բարեշնորհ Սանդրո և Սարգիս սարկավագները։

Սրբազանը Մայր Աթոռ վերադարձավ ամսի 20-ին։

***

ՀՈՒՆՎԱՐԻ 18-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Անթարյանը՝ «Այրին այն աղքատ ավելի արկ քան զամենեսին» (Ղուկ. ԻԱ 2) բնաբանով։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ՀՈՒՆՎԱՐԻ 22-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, երեկոյան ժամը 4-ին, Հոգևոր Ճեմարանում դասախոսեց Երևանի Խաչատուր Աբովյանի անվան Հայկական Մանկավարժական ինստիտուտի դասախոս, ֆիզիկոս դոցենտ Երեմ Ագաջյանը՝ «Տիեզերական հրթիռներ» լափաղանց հետաքրքիր թեմայի շուրջ։

Դասախոսությունը լսվեց խորունկ հետաքրքրությամբ։

Վեհափառ Հայրապետը ներկա էր դասախոսությանը։

Գերաշնորհ Տ. Հայկազուն սրբազանը ներկաների կողմից չերմ շնորհակալություն հայտնեց դասախոսին, այդ շահեկան դասախոսության համար։

***

ՀՈՒՆՎԱՐԻ 24-ԻՆ, ՇԱԲԱԹ, երեկոյան ժամը 6-ին, Վեհափառ Հայրապետը Հոգևոր Ճեմարանի դահլիճում ուսանողություններ խոսեց «Կարգապահության մասին», որը լսվեց մեծ բավականությամբ և հետաքրքրությամբ։

***

ՀՈՒՆՎԱՐԻ 25-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Մկրտիչ ավագ քահանա Մկրտչյանը և քարոզեց հոգեշնորհ Տ. Հուսիկ աբեղա Սանթուրյանը՝ «Զի որ ըստ Աստուծոյ տրտմութիւն է՝ ապաշխարութիւն ի փրկութիւն առանց զղջանալոյ գործ է» բնաբանով (Բ Կորնթ. է 10)։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ՀՈՒՆՎԱՐԻ 28-ԻՆ, ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, Հոգևոր Ճեմարանում, երեկոյան ժամը 4-ին, բանախոսեց Ճեմարանի կրոնի դասախոս պր. Սարգիս Կոնսուլյանը՝ «Հիսուս Քրիստոս ցնո՞րք թե պատմականություն» կարևոր թեմայի շուրջ, որը լսվեց հարաճուն հետաքրքրությամբ։

Նախագահող սրբազանը վերջում շնորհակալություն հայտնեց հարգելի բանախոսին՝ նրա շինիչ դասախոսության համար։

***

ՓԵՏՐՎԱՐԻ 1-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Մաշտոց աբեղա Թաքիրյանը և քարոզեց «Մեծ է մարդ՝ և պատուական այր ողորմած, բայց զայր հաւատարիմ գործ է գտանել» (Առակք. Ի 6) բնաբանով։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։



ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՈՆԸ ԵՎ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՆՎԱՆԱԿՈՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԴԱՐՁԻ ՀԱՆԴԵՍԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Փետրվարի 5-ին, հինգշաբթի օր, Մայր Աթոռում ավանդական հանդիսությամբ տոնվեց «Սրբոց Վարդանանց զորավարացն մերոց հազար երեսուն և վեց վկայիցն» տոնը և Վեհափառ Հայրապետի անվանակոչության տարեդարձը։

Չորեքշաբթի, փետրվարի 4-ին, Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ, Մայր Տաճարում կատարվեց Վարդանանց նախատոնակը։ Վեհ ու հանդիսավոր հնչեց «Նորահրաշ պսակաւորս Վարդանանց գեղեցիկ շարականը, և բոլոր ներկա հավատացյալների հիշողության մեջ մի անգամ ևս պայծառացան խնկելի անունները եկեղեցու և Հայրենիքի անվեհեր մարտիկների, Ղևոնդյանց քահանաների՝ Հովսեփ կաթողիկոսի, Ղևոնդ երեցի և իր ընկերների, կարմիր Վարդանի, Խորեն Խորխորունու, Արտակ Պալունու, Տաճատ Գնդունու, Հմայակ Դիմաքսյանի, Ներսեհ Քաչբերունու, Վահան Գնունու, Արսեն Ընծայեցու, Գարեգին Սրբվանձտյանցի և Ավարայրի ճակատամարտում ընկած բոլոր նահատակների, որոնց ընդհանուր թիվը հասնում էր 1036-ի։

Հինգշաբթի առավոտյան, ժամը 11.30-ին, սկսվեց հանդիսավոր սուրբ պատարագը։ Ազգային մեծ տոնի առթիվ Մայր Տաճարում պատարագեց Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն սրբազանը։

Ժամը 12-ին, եկեղեցական թափորով, հանդիսավորությամբ Մայր Տաճար առաջնորդվեց Վեհափառ Հայրապետը։

«Հայր Մերս»-ից առաջ քարոզում է պատարագիչ սրբազանը՝ «Արդ, ով քաջ նիզակակիցք իմ. եթէ հասեալ իցէ ժամանակ կենաց մերոց սուրբ մահուամբ պատերազմիս, ընկալցուք խնդութեամբ սրտի, բայց միայն յարութիւնս քաջութեան՝ վատութիւն մի՛ խառնեսցուք» ընարանով։

Սրբազանը գեղեցկորեն նկարագրում է Ավարայրի ճակատամարտի սուրբ առավոտը և բովանդակ հայ ժողովրդի վճռականությունն ու քաջությունը՝ կռվելու «վասն Յիսուսի, վասն Հայրենեաց»։

«Հաղկերտը նորեն կուզեր իր թաթը դնել հայ ժողովուրդի խղճին ու հոգիին վրա, կուզեր լռեցնել Հայ եկեղեցիին կոչնակի ձայնը և խեղդել մեր Աստուծո ձայնը մեր իսկ սրտին մեջ։

Ահա թե ինչո՞ւ ամեն կողմ հավաքույթ ու ճառեր, ամեն կողմ ուխտ և հավատարմություն, աղոթք և պատարագ՝ դիմագրավելու մեծ վտանգը։

Վարդան և Ղևոնդ, կազմակերպող ոգիները այդ պայքարին, տուին տուն կպտտեին, կխոսեին ու կխրախուսեին բոլորը։ Ամենքը լեցված էին Ավետարանի սուրբ հոգիով և Հայրենյաց պաշտպանության ուխտով։ Բոլորը մեկ կմտածեին. «Եթե հասած է ժամանակը մեր կյանքին՝ սուրբ մահով վերջ տանք անոր՝ սուրբ պատերազմի մեջ, զայն ընդունինք ուրախությամբ և արիությամբ, բաշ հույսերով, բայց վախկոտություն չխառնվի մեր հավատքին մեջ»։ Ամբողջ հոգևորականությունն ու ժողովուրդը զինվորագրված էին վասն Հայրենյաց, վասն Յիսուսի։

Կա՞ արդյոք հայ ժողովուրդի համար ավելի մեծ սրբություն մը, քան Հայրենիքը և քան քրիստոնեական սուրբ հավատքը։ Այս

երկուքեն՝ ոչ մեկ բան կարող է մեզ անջատել, «ոչ հուրը, ոչ սուրը և ոչ իսկ ամենասոսկալի տառանպանքը մեր մարմիններուն, որովհետև մենք մեր հայրը Ս. Ավետարանը կճանչնանք, իսկ մեր մայրը՝ Առաքելական Ս. Եկեղեցին»։ Այսպես մտածած, զգացած և ապրած է մեր ժողովուրդը. «մահ ոչ իմացեալ մահ է, մահ իմացեալ անմահութիւն է»։

Հայ ժողովուրդը հարազատ զավակն է իր Մայր Հայրենիքին, որուն ամեն մեկ թիզ հողը և քարը իր արյունով է շաղախեր դարեր շարունակ։ Հայ ժողովուրդը ոչ մեկ ատեն չի սակարկեր իր արյունը՝ իր Եկեղեցվո և Հայրենիքի համար։ Այսպես ըրավ ան նաև մեր օրերուն։ Երբ օտարները կուզեին ներխուժել մեր երկրի սահմաններեն ներս, մեր ո՞ր երիտասարդը խնայեց իր արյունը։ Ո՞ր տուն չունեցավ իր զոհը այդ սուրբ պայքարին մեջ։ Եվ եթե այսօր կապրինք խաղաղ և երջանիկ, այդ կպարտինք մեր զավակներու սուրբ արյունին և նահատակութեան։

Այսօր անվանակոչության տոնն է նաև մեր Վեհափառ Հայրապետին։ Նա բազմած է Ս. Լուսավորչի Աթոռին վրա, իբրև արքուն պահակը մեր սրբություններու։ Վա՜յ անոր, որ սրբապղծությամբ կհամարձակի մտնել այս սուրբ կամարներեն ներս՝ պառակտելու Հայաստանյայց Եկեղեցին և հայ ժողովուրդը։ Թումբ պիտի կանգնենք անոնց դեմ ու անոնք իրենց կատաղության մեջ պիտի դարնվին Իշման Ս. Սեղանի պատվանդանին ու պիտի խորտակվին, ինչպես խորտակվեցան Հազկերտներն ու Վասակները, Հայ Եկեղեցվո և Հայրենիքի բոլոր թշնամիները»։

Քարոզից հետո կատարվեց հոգեհանգիստ «վասն համօրէն ննջեցելոց», որոնք ընկել են դարերի ընթացքում մարտի դաշտերում, մեր Եկեղեցու և Հայրենիքի պաշտպանության աննահանջ դիրքերում։

Սուրբ պատարագի վերջում, Իշման Ս. Սեղանի առաջ կատարվեց Հայրապետական մաղթանք՝ Վեհափառ Հայրապետի անվանակոչության տոնի բարեբաստիկ առիթով։

Հավարտ սուրբ պատարագի, Վեհափառ Հայրապետը Մայր Տաճարում ընդունում է բոլորի շնորհավորությունները իր անվանակոչության տոնի առթիվ։

Ժամը 2.30-ին, Հոգևոր Ճեմարանում կազմակերպվել էր գրական-գեղարվեստական երեկույթ՝ Ղևոնդյանց և Վարդանանց նահատակներին նվիրված։

Հանդիսության նախագահում էր Վեհափառ Հայրապետը, շրջապատված գերաշնորհ հոգևոր հայրերով և միաբանության անդամներով։

Հոգևոր Ճեմարանի փոխ-տեսուչ, հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետը հանդեսի բացումը կատարեց բովանդակալից ներածական ճառով։

Ճեմարանի երգչախումբը հաջողությամբ կատարեց «Նորահրաշ պսակավոր»-ը, «Թե հայրենյաց պսակադիր»-ը, «Իմ հայրենյաց հոգի Վարդան»-ը։ Բարեշնորհ Կարապետ սարկավագը հուզումով երգեց «Լռեց։ Ամպերը եկան ծածկեցին»-ը, Նուպար Պայլանը՝ «Արշակ Բ-ի արիոզոն» (համանուն օպերայից), բարեշնորհ Հակոբ սարկավագ Կարա-Ցագուպյանը Եղիշեից կարդաց Վարդանի ճառը (գրաբար), Ժիրայր սարկավագ Ճերեճյանը՝ Ալիշանից «Կարմիր Վարդան»-ը, Խորեն Մեյխանեջյանը արտասանեց «Հայաստանի Արծիվին»-ը (Հ. Պարիկյանի), և Ժոզեֆ Ավետիսյանը՝ «Եղիշե»-ն (Գամառ Քաթիպայի)։

Ղևոնդյանց և Վարդանանց հիշատակին նվիրված դրավոր շարադրությամբ հանդես եկավ Սանդրո սարկավագ Բեհբությանը.

«Այս օրը կրկնապես նվիրական օր է մեզ համար։ Այսօր հայ ժողովուրդը իր եկեղեցիների կամարների տակ և իր հասարակական բեմերի վրա խանդաղատանքով ու հպարտությամբ ոգեկոչում է Վարդանանց Խորհուրդը, մի խորհուրդ, որով ավելի քան 1500 տարի պայմանավորված և իմաստավորված է հին մեր ժողովրդի կյանքը։

Մենք ուրախ ենք, որ այսօր միաժամանակ նշում ենք և մեր սիրելի Հայրապետի անվանակոչության բերկրաբեր տոնը։ Համազգային այս ցնծատոնին ինձ վրա քաղցր պարտականություն է դրված թարգմանը հանդիսանալ Հոգևոր Ճեմարանի ուսանողների երախտագետ զգացմունքների և բոցավառ սիրո ու սրտագին շնորհավորել Ձերդ Վեհափառության անվանակոչության տոնը։

Այսօր հայ հավատացյալ ժողովուրդը պատվում է իր սիրելի, եկեղեցաշեն Հայրապետի բարձր անձնավորությունը և սրտառուչ անկեղծությամբ իր սերն ու հավատարմությունն է արտահայտում դեպի Հայաստանյայց Եկեղեցու դարավոր կենտրոն, անսասան ու հավիտենական Ս. Էջմիածինը։

Այսօր Ձերդ Վեհափառության եկեղեցաշեն գործունեությամբ ծլում, ծաղկում ու բարգավաճում է հայ ժողովրդի հավատքի և հույսի վառարան ամենասուրբ Էջմիածինը և իր Հոգևոր Ճեմարանը։ Հայ ժողովուրդը Ձեզ անվանում է «Շինարար» Հայրապետ։

Այսօր հայ ժողովրդի ազգային-եկեղեցական միասնական ոգու տոնն է։ Որքան լավ ըմբռնենք ոգու միասնության նշանակությունը և գործադրենք այն մեր կյանքում, այնքան երկար ու երջանիկ կապրենք իբրև ազգ։ Այդ ոգու կիրառումն էր, որ հանգեցրեց նվաստակի դաշինքին, բոլոր տեսակի սուրբ ադատությունների վերանվաճման՝ պարսկա-

կան բռնակալ իշխանությունից։ Միասնական այդ ոգին այսօր էլ, ավելի քան երբևէ, զգացվում է, աճում հայության ծոցում։ «Գլխովը շատ ամպեր կանցնեն, սարը միշտ կա անսասան»,— երգել է ամենայն հայոց բանաստեղծը՝ անմահ Թումանյանը։ Նա աչքի առաջ է ունեցել հայ ժողովրդի հարափոփոխ ճակատագիրը, երբեմն՝ պայծառ, երբեմն էլ թխպոտ երկնքի նման, և կանխազգալով այսօրվա երջանիկ վերածնունդը՝ ավելացնում է. «Սարը միշտ կա անսասան», այսինքն՝ հայ ժողովուրդը, Ս. Էջմիածինն ու Հայրենիքը միշտ անսասան կմնան։ Եվ այսօր Մասիսի դեմ հանդիման, մշտադալար կաղնու նման կանգնած է Ս. Էջմիածինը՝ հայ ժողովրդի միասնության, անպարտելիության հավերժահոս աղբյուրը։ Ս. Էջմիածինը մեր մեծանուն հայրապետների խաչապակ արձանն է։

Վարդանանց ոգին ինչքան հավատի, նույնքան էլ հայրենասիրության է կոչում հայ ժողովրդի զավակներին։ Հավատի և հայրենասիրության այդ միասնությունը այսօր էլ պահպանվում է, և մենք, Հոգևոր Ճեմարանի սաներս, դարգացնում ենք դրանք մեր մեջ իրարից անբաժան։ Մենք տեսնում և հրճվում ենք, թե ինչպես այսօր, մեր Հայրենի հողի ծոցում պահված մեր պապերի հազարավոր անկատար իղձերի սերմերը ծլել ու ծաղկում են՝ ի հավերժացումն հայ ժողովրդի։

Վեհափառ Տե՛ր.

Այսօր Դուք հայ ժողովրդից միայն մեկ բան եք սպասում, որ Հայրենիքում տիրող միասնությունը տարածվի ամբողջ աշխարհում, հայ ժողովրդի բոլոր զավակների վրա անխտիր։

Մեր սրտերը ալեծփող այս ընդհանուր ուրախություն թո՛ղ պատրաստի մեր սիրավառ սրտերից մի անհուն բուրվառ, Ամենայն Հայոց Հայրապետի սուրբ իղձերի և ցանկությունների խունկով առլցուն՝ մեր երախտագիտության և գոհունակության աղոթքը առ Աստված։

Բազկատարած աղոթում ենք Լուսավորչի սուրբ կանթեղի առաջ Ձեր թանկագին կյանքի արևշատության ու առողջության համար՝ ի բարօրություն Հայ Եկեղեցու և Ազգի։

Հավերժ փա՜ռք Վարդանանց քաջերի սուրբ և անմահ հիշատակին։

Ապա Հոգևոր Ճեմարանի Հայ ժողովրդի պատմության դասախոս, դոցենտ Համո Հարությունյանը հանդես եկավ Վարդանանց պատերազմի ազգային-եկեղեցական նշանակության նվիրված ընդարձակ և բովանդակալից զեկուցմամբ։

Վարդանանց և Ղեոնդյանց հիշատակին նվիրված սույն հանդեսում Վեհափառ Հայրապետը խոսք առնելով, եզրափակեց օրվա տոնի նշանակությունը և ասաց.

«Ինչ լավ է, որ ամեն տարի կվերանորոգենք մեր գիտակցության առջև հիշատակը Սրբոց Ղևոնդյանց և Սրբոց Վարդանանց և կվերակենդանացնենք պատմությունը անոնց նահատակությանց։ Ինչքան լավ է, որ տարեկան զնք մեկ անգամ վերստին կապրինք այդ սուրբ օրը, որ ավելի քան 1500 տարիներ վեր պայծառ կերպով կլուսավորե ամբողջ հայ ժողովուրդի հոգեկան-բարոյական աշխարհը։

Երբեմն մեզմե ոմանք կտարվին մտածել՝ ի՞նչ հարկ կա ամեն տարի կրկնել նույն խոսքերը, լսել տարիներով կրկնված պատմություններ, մտքեր։

Այդպիսի մտածում ունեցող մը եթե այսօր այստեղ գտնվեր, պիտի հասկնար իր սխալը։ Մեր այսօրվան հանդեսը, Մեր կարծիքով, ճշմարիտ կերպով ամբողջապես իր նպատակին հասավ։ Կակնարկենք հանդեսի Վարդանանց հիշատակին նվիրված մասին և առաջին հերթին կրնդգծենք պր. Համո Հարությունյանի ներհուն հարը, որ հագեցված էր պատմական ճշմարտությամբ, գիտությամբ և հայրենասիրությամբ, հուզումով մատուցված գեղեցիկ կերպով։

Մենք ամբողջապես կյուրացնենք հարգելի բանախոսի մտքերը՝ իր ճշմարիտ ու հարազատ Մեր հոգիին։ Երբ հնար ըլլար, պիտի փափագեինք, որ մեր ուսանողները այս դասախոսությունը ամբողջությամբ անգիր բնեին։

Ղևոնդյանց և Վարդանանց սրբազան պատերազմը ճշմարիտ հիմնարարն է մեր ժողովուրդի հոգևոր, ազգային և հաղթական կյանքին։

Հայ ժողովուրդի գիտակցության առջև այդ հերոսամարտը և անոր մղիչ ուժ հանդիսացող կրոնա-հաղթական մտածողությունը պատմության ընթացքին ոչ միայն չէ տկարացած, այլ ավելի խտացած է, բյուրեղացած ու առավել իմաստ ստացած, և մնացած է միշտ այժմեական։

Դարերու ընթացքին փոխվեր են պայմանները և սլարազաները, փոխվեր են անունները և դերակատարները, փոխվեր են դրդապատճառները և պայքարի ձևերը, և սակայն շատ հաճախ հայ ժողովուրդը իր տագնապալի, ճակատագրական պահերուն, գտնվեր է

միշտ նույն կացության առջև, միշտ նույն հարցերու առջև։ Եվ Վարդանանց օրինակին հետևելով, նույնպիսի կողմնորոշումով, նույնպիսի վճռականությամբ և նույնպիսի զոհողության գնով միայն ան կրցեր է իր գոյությունը պահպանել և հասնիլ փրկության ափին։ Այս իմաստով՝ Վարդանանց հերոսամարտը երբեք չէ վերջացած։ Կարելի է ըսել՝ դարեր շարունակված է ան։ Այսօր իսկ, Սիսյուտի պայմաններուն մեջ մանավանդ, նույն մարտը կշարունակվի «վասն Հայրենեաց և վասն հաւատոց», վասն մեր ազգային-եկեղեցական միասնության, վասն մեր սուրբ իղձերու իրականացման և ի խնդիր հայ ժողովուրդի պահպանության և մեկտեղման Հայրենի հողին վրա։

Ս. Էջմիածինը այն սրբազան վայրն է, այն սուրբ հաստատությունը, ուր շաղախվեցավ և մարմին առավ Ղևոնդյանց և Վարդանանց ոգին, ուրկե հայ ժողովուրդը իր պատմական պատասխանը տվավ պարսից արքունիքին և ուր շողաց Վարդանի սուրը։ Այսօր մենք հպարտ ենք, որ մեզ է վիճակված ապրիլ ու գործել նույն այս սրբազան կամարներու տակ։ Ս. Էջմիածինը այսօր ալ իր ձեռքին մեջ կկրե նույն դրոշը՝ Ղևոնդյանց և Վարդանանց դրոշը, և կշարունակե Ավարայրեն սկիզբ առած մարտը. կշարունակե իր պատմական առաքելությունը հայ ժողովուրդի կյանքին մեջ։

Եվ այդ սուրբ գործը պիտի շարունակվի, մինչև ամբողջական իրականացումը մեր Ս. եկեղեցվո և մեր ժողովուրդի արդար ու սրբազան իղձերուն։

Այս հանդեսը կփակենք եկեղեցանվեր և հայրենանվեր ապրումներով։ Կուխտենք շարունակել Մեր սկսած գործը՝ Ղևոնդյանց և Վարդանանց տեսիլքներով, հաղթելու տենչով, «վասն Հայրենեաց և վասն հաւատոց»։

Հավետ փա՜ռք և օրհնությո՜ւն Ղևոնդյանց և Վարդանանց սուրբ հիշատակին։ Կեցցե՜ մեր Վերածնած Մայր Հայաստանը։

Կեցցե՜ Հայ ժողովուրդը։ Կեցցե՜ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը»։

Վարդանանց հիշատակին նվիրված այս հույժ դաստիարակիչ գրական-գեղարվեստական հանդեսը վերջացավ խմբովին երգված «Տերունական աղոթք»-ով և Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով։



ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄ ՊՐՈՖ.-ԴՈԿՏ. Ա. ՂԱՐԻԲՅԱՆԻ ՀՈԲԵԼՅԱՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Հունվարի 31-ին, շաբաթ օր, ժամը 3.30-ին, Հոգևոր Ճեմարանի հանդիսության սրահում, նշվեց Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ, ծանոթ լեզվաբան և Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ պրոֆ.-դոկտ. Ա. Ղարիբյանի ծննդյան 60-ամյա և գիտական-մանկավարժական գործունեության 35-ամյա հոբելյանը։

Հանդեսին նախագահում էր Վեհափառ Հայրապետը։ Ներկա էին Գերագույն Հոգևոր Խորհրդի և Վերստուգիչ հանձնաժողովի անդամները, Մայր Աթոռի միաբանությունը, Ճեմարանի դասախոսական կազմը և վանքի պաշտոնեությունը։

Հոբելյանական հանդեսը բացվեց Հայկական ՍՍՌ Պետական Հիմնի նվագով, որն ունկնդրվեց հոտնկայս։ Ապա հանդեսի բացման խոսքով հանդես եկավ Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ դերաշնորհ Տ. Հայկազուն սրբազանը։ Նա ասաց.

«Հայ մամուլը, մտավորականությունը և մեր ընթերցասեր հասարակությունը նշեցին հարգելի և արդյունաշատ գիտնականի ծննդյան 60-ամյակը և գիտական գործունեության 35-ամյակը։ Այսօր Հոգևոր Ճեմարանն է, որ կնշնե անոր հոբելյանը, ուր կդասախոսե հարգելի Հոբելյարը։

Պրոֆ.-դոկտ. Ա. Ղարիբյանը մեր տաղանդավոր և հեղինակավոր գիտնականներեն մեկն է, իրրև ներհուն գիտնական, բազմահմուտ լեզվաբան, հայ մշակույթի արդյունաշատ աշխատավոր և հասարակական անխոնջ գործիչ։

Ա. Ղարիբյանը իր ստեղծագործական ողջ կյանքը, իր գիտական բազմակողմանի զարգացումն ու կարողությունները մեծ սիրով նվիրել է իր ժողովրդին, ի մասնավորի հայ բարբառագիտության և հայոց լեզվի մեթոդիկայի ուսումնասիրության ու զարգացման շնորհակալ աշխատանքին։ Ավելի քան երեսունհինգ տարիներ, ան հայագիտություն հարստացուց արժեքավոր շարք մը աշխատություններով և ուսումնասիրություններով։

Պրոֆ.-դոկտ. Ղարիբյանը Հոգևոր Ճեմարանի անվարժ մշակն է։ Նա իր վարակիչ եռանդով ոչ միայն լեզվական գիտելիքներ կուտա մեր սաներուն, այլ նաև սեր ու հարգանք կներշնչե դեպի հայ լեզուն և ժողովուրդը։

«Պատիւ պատուաւորաց, հարկս հարկաւորաց»։

Մշակները արժանի են իրենց վարձին, բայց ան նիւթական, հոգեկան կամ մտավոր։

Այսօր հավաքված ենք, Հոգևոր Ճեմարանի մատաղ սերնդի հոգևոր դանձերու փոքր փունջ մը կապած՝ մատուցանելու հարգելի պրոֆեսորին։

Գործադրվեց գեղարվեստական ծրագիր՝ երգ, արտասանություն, նվագ, Հոգևոր Ճեմարանի ուսանողության ուժերով։

Հոբելյար գիտնականի կյանքի և գիտական ու մանկավարժական գործունեության նվիրված բովանդակալից զեկուցումով հանդես եկավ Հոգևոր Ճեմարանի լսարանական բաժնի գրաբար լեզվի դասախոս և Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Լեզվի ինստիտուտի ավագ գիտաշխատող դոցենտ Վարազ Առաքելյանը։

Հանուն Հոգևոր Ճեմարանի ուսանողության, Բ լսարանի ուսանող բարեշնորհ Պետրոս սարկավագ Պերպերյանը հոբելյարին ողջունեց գրավոր գեղեցիկ ճառով։

«Մեծարգո Հոբելյար։

Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանում սովորող Ձեր ուսանողները սրտի անհուն բերկրանքով բերում են հարգանքի և մեծարանքի իրենց բաժինը Ձեր ծննդյան 60-ամյա և գիտական-մանկավարժական գործունեության 35-ամյա հոբելյանի առթիվ։

Դուք, որ Ձեր ամբողջ գիտակցական կյանքը նվիրել եք մեր մեծասքանչ լեզվի ուսումնասիրման և զարգացման նվիրական գործին, այսօր լիովին արժանի եք այն մեծարանքին, որ հայ ժողովրդի երախտագետ զավակները ցույց են տալիս դեպի Ձեր անձնավորությունը։ Դուք Ձեր դաստիարակչական, մանկավարժական և գիտական գործունեությամբ թանկագին ծառայություն եք մատուցել հայ լեզվաբանության և հայագիտության զարգացման գործին, Ձեր ուսումնասիրություններով ի հայտ եք բերել մեր լեզվի զարգացման շատ ու շատ օրինաչափություններ և հարստացրել մեր լեզվաբանությունը։

Ամեն մի հայ իր ազգասիրական, հայրենասիրական զգացումները արտահայտելու իր ուրույն եղանակն ունի։ Մի՞թե լեզվի սերը գերազանց հայրենասիրություն չէ։ Կա՞ մեր կյանքում մի երևույթ, որ այնքան վառ կերպով վկայի մեր ժողովրդի ստեղծագործական կարողության մասին, որքան մեր մատենադիրների, մեր անմահ գրողների կողմից ճոխացված, հարստացված մեր լեզուն։

Ահա թե ինչու պայծառ ճակատով կանգնելու իրավունք ունեք Ձեր 60-ամյակի շեմքին։ Դուք Ձեր փայլուն օրինակով և Ձեր մտքի լուսավոր շավղով ներշնչել և առաջնորդել եք բազմաթիվ հայ երիտասարդների, որոնց վաստակը այսօր զարդարում է մեր լեզվաբանական գիտությունը։ Նրանք միշտ էլ հիացումով ու երախտագիտությամբ պիտի հիշեն իրենց ուսուցչին ամեն անգամ, երբ ստեղծագործական ոգևորությունը նրանց հոգին լցնի՝ երևան բերելու համար մեր լեզվի գեղեցկությունները։ Երկու տասնյակ տարի է, ինչ մեր երիտասարդ սերունդը Ձեր պատրաստած դասագրքերում իր մայրենի լեզվի հմայիչ օրինաչափություններն է դիտակցում։

Մենք նույնպես՝ Հոգևոր Ճեմարանի ուսանողներս, սովորում ենք այդ դասագրքերով և ոչ միայն հարստացնում մեր լեզվական գիտելիքները, այլև գիտակցում, որ հայոց լեզուն մեր ցեղի կենդանի պատկերն է՝ ու մեր ազգային միության ամենահզոր շաղախը. մեր անցյալի արձագանքը, ձայնը ապագայի ու հայ ոգու իսկության։ Մենք սիրում ենք մեր լեզուն, որովհետև նա մեր սրտի արձագանքն է, մեր հոգու խոյանքը։

Մեր սիրելի դասախո՛ս, Ձեր գիտությամբ Հոգևոր Ճեմարանում Դուք դաստիարակում եք մեր ժողովրդին ծառայելու ոգով այս սուրբ տան մեջ կանչված այն որդիներին, որոնք աշխատում են լինել մեր նվիրական թարգմանիչների, նրանց ոգու արժանի ժառանգորդները։

Ձեր դաստիարակչական, գիտական-մանկավարժական աշխատանքին ներդաշնակ և արդյունավետ կերպով զուգակցվում է նաև Ձեր վարչական գործունեությունը մեր Եկեղեցու ծոցում։ Ձեր անսպառ եռանդը, Ձեր ողջ մտավորական-բարոյական ուժն ու կարողությունը ի սպաս եք դրել Հայ Ազգի, Հայ Եկեղեցու պահպանման, առաջադիմության և պայծառության մեծ գործին։

Ձեր ծննդյան 60-ամյա և գիտական-մանկավարժական գործունեության 35-ամյա հոբելյանի երջանիկ առիթով, ընդունեցեք, սիրելի հոբելյա՛ր, մեր սրտաբուխ շնորհավորանքները։ Մենք՝ Ճեմարանի ուսանողներս, ի սրտե ցանկանում ենք, որ բազմաթիվ երջանիկ գարուններ դան և բարդվեն Ձեր արդյունավորված վաթսուն տարիների վրա։

Թո՛ղ Աստված դեռ երկա՜ր տարիներ Ձեր ներկայության վայելքը շնորհի մեզ։

Թո՛ղ երկարի Ձեր տարիների թիվը, և մենք երախտագետ սրտով երջանիկ առիթը ունենանք նշելու նաև Ձեր այլ հոբելյանները։»

Գերագույն Հոգևոր Խորհրդի տեղապահ գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տ. Հովհաննիսյանը, հանուն Մայր Աթոռի Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամների, սրտագին ողջունելով հոբելյարին, ասաց.

«Հարգելի պրոֆեսո՛ր.

Մեզ համար բախտ է, հոգեկան վայելք, որ մասնակցում ենք Ձեր ծննդյան 60-ամյա և գիտական գործունեության 35-ամյա տարեդարձին։ Հեշտ է թվել անցնող տարիները, բայց պետք է պատկերացնել այն մեծ նառանդը, որ Դուք սպառել եք հասնելու համար այն արդյունքին, որի տերն է մեր ժողովուրդը այսօր։ Ձեր մեջ մենք ոչ միայն լեզվագետն ու մանկավարժը, այլ նաև գիտության մարդը և գրագետը։ Մեծ է Ձեր վաստակը լեզվի դասագրքերի և մեթոդական առաջնորդներ պատրաստելու տեսակետից։ Ավելի քան քառորդ դար Ձեր դասագրքերի անընդհատ հրատարակումը և գործածումը փաստ է նրանց արժեքին և գոսած ընդունելության։ Ադգը Ձեզ պատվել է ամեն տեսակ պատվանուններով՝ պրոֆեսոր, դոկտոր, վաստակավոր, նույն մեր ժողովուրդը Ձեզ ընտրել է անդամ Գերագույն Հոգևոր Խորհրդի, որտեղ նույնպես մեծ է Ձեր ավանդը։

Ձեր քաղցր բնավորությունը, մեծ հմտությունը, համեստությունը, անձնվեր նվիրումը գիտության և Հայրենիքին՝ Ձեզ Ձեր շրջապատի սիրելին են դարձրել։

Մաղթում եմ Ձեզ երկար կյանք գիտության և մանկավարժության ասպարեզում, նորանոր նվաճումներ կատարելու համար ի փառս Հայ ժողովրդի և Հայրենիքի»։

Հարգանքի երեկույթին խոսք առավ հոբելյարը, որին ջերմորեն դիմավորեցին ներկաները։ Նա ասաց.

«Վեհափառ Տե՛ր.

Ամբողջ սրտով անկեղծորեն զգացված եմ այն մեծ պատվի համար, որը տրվեց ինձ։ Համեստ է իմ գործունեությունը, բայց մեծ արձագանք տվեց այն, քանի որ նվիրված էր մեր լեզվին, նրա անցյալին, ներկային և ապագային, որը նույն ժամանակ ներկայացնում է մեր սիրելի ժողովրդի անցյալը, ներկան և ապագան։ Ահա թե ինչու ես ընդունում եմ հարգանքի այդ արտահայտությունները ու այն փոխանցում եմ հայ լեզվին, հայ ժողովրդին, որովհետև իմ անձի միջոցով այդ հարգանքը նրանց է ուղղված։

Վաղ եմ սկսել իմ աշխատանքը։ Երբ առաջին անգամ մայրս ինձ դպրոց էր ուղարկում, պատվիրեց, որ ծառայեմ իմ Ադգին, ծառայեմ անշահախնդիր և նվիրված կերպով։ Ապրի զավակն ես դու, ծառայի՛ր դու նրան ո՛չ թե փոքի ու փառքի համար, այլ ծառայի՛ր ժողովրդին, որպեսզի նրա ամեն մի որդու սրտում տեղ ունենաս, ամեն մի հայի սանր տուն ունենաս։ Ես զգում էի, որ իմ մոր բերանով խոսում էր մեր բոլորի մայրը՝ հայ ժողովուրդը։

Իմ ամբողջ աշխատանքն ընթացել է մորս պատգամի ուղիով։ Իմ, մեր ժողովրդի բախտից էր, որ հաստատվեցին սոցիալիստական կարգերը, որոնք մարդը տրամադրում են ծառայելու իր ժողովրդին։ Առանց այդ կարգերի, ես ոչ մեկ հնարավորություն չէի ունենա անելու այն, ինչ որ արել և դեռ փորձում եմ անել։ Իմ ամբողջ աշխատանքն ու ընդունակությունները իզուր կլինեին։ Ադգին ծառայելու տեսանկյունից էր, որ ես սիրահոժար ընդունեցի Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամությունը։ Ս. Էջմիածինը հայության սրբազնագույն հաստատությունն է, նրա բոլոր ձգտումների, առաքինությունների, ստեղծագործության խտացումն ու մարմնացումը։ դրա համար էլ նոա կոչով ես մտա մի նոր ասպարեզ՝ իմ ժողովրդին ծառայելու։ Այդ ասպարեզում էլ ես աշխատել եմ այնպես, ինչպես լեզվաբանության կամ մանկավարժության ասպարեզում։ Բանաստեղծը ասում է. «Երնեկ հազար ու մեկ կյանք ունենամ, հազարը քեզ տամ, մեկը պահեմ քեզ երգելու համար», ես եթե հազար ու մեկ կյանք ունենամ, հազար մեկն էլ քեզ կնվիրեմ, իմ ժողովուրդ, ամբողջությամբ, առանց սակարկության։

Այսօր ինձ մատուցված հարգանքը ուղղված է ինձ ծնած, աճեցրած հայ ժողովրդին, դրա համար ես այն ընդունում եմ շնորհակալությամբ։

Ապա խանդավառ ծափերի տակ խոսք առավ Վեհափառ Հայրապետը, Իր օրհնությունը տալու հոբելյարին.

«Հայաստգրի մեջ Մեր անունի դիմաց նշանակված է՝ «փակման խոսք և օրհնություն»։ Մենք համաձայն չենք փակման խոսքին։ Պրոֆեսոր Ղարիբյանի ծննդյան 60-ամյա և գիտական ու մանկավարժական գործունեության 35-ամյա տարեդարձի առթիվ փակման խոսք չի կրնար ըլլալ։ Ո՛չ, Մենք չենք կարող Մեր խոսքով փակել մեր սիրելի պրոֆեսոր Ղարիբյանի գործի ընթացքը, Մանի որ ան այսուհետև ալ հաղրական կերպով շարունակելու է իր աշխատանքը։

Փակման խոսքը միայն Աստված կարող է ասել, այն ալ մաղթենք, որ շատ ուշ, 30—40 տարի հետո ըլլա։

Մեր օրհնության խոսքը սակայն սիրով կրնենք հանուն Մայր Աթոռի։ Ս. Էջմիածինը այն սուրբ հաստատությունն է, ուր ծնունդ է առած գիրն ու գրականությունը, մշակված և պահպանված է հայ լեզուն դարեր շարունակ և հասցված մինչև մեր օրերու վերա-

ծնունդին: Ս. Էջմիածինը շատ երջանիկ է, որ ունի այս ճարկին տակ սանելու հոգիքը մի այս ճարկին տակ սանելու հոգիքը արդի հայ լեզվի տաղանդավոր մշակներեն մեկուն, ինչպիսին է մեր սիրելի պրոֆ. Արարատ Ղարիբյանը:

Դոցենտ Վարազ Առաքելյանի զեկուցումը փառավոր կերպով և ջերմությամբ ներկայացուց պրոֆ. Ղարիբյանի կյանքն ու գործը:

Ուրախ ենք, որ շնորհիվ վերջին 40 տարիներու մեր երկրի խաղաղ կյանքին, մեր ժողովուրդը հասավ մշակույթի և գիտության իրավ բարձունքներու: Այս տարիներու ընթացքին առավել մշակվեցավ ու գեղեցկացավ մեր մայրենի լեզուն և առավել ճանչցվեցավ ան գիտական խոր ուսումնասիրություններով:

Այսօրվան հոբելյարը մեծապես գնահատելի դեր է կատարած և կշարունակի կատարել այս ուղղությամբ, իբրև հեղինակավոր հայագետ և լեզվաբան:

Պրոֆ. Ա. Ղարիբյանը նաև մեր թանկագին գործակիցն է, իբրև Գերագույն Հոգևոր Խորհուրդի անդամ: Ուրախ ենք և հպարտ, որ ան մեր մեջ է. իրեն նման գիտուն և հայրենասեր մարդու ներկայությունը Գերագույն Հոգևոր Խորհուրդի մեջ՝ մեծ նպաստ է և գրավական մեր գործի հաջողության համար:

Պրոֆեսորը մեր ժողովուրդի լավագույն զավակներեն մեկն է և արժանի մեր հարգանքին և երախտագիտության:

Սիրելի՛ պր. Արարատ Ղարիբյան, օրհնելով զՔեզ, ի սրտե կմաղթենք Քեզ հաջողություններկար կյանք, անսպառ ուժ և եռանդ, որպեսզի տակավին շատ տարիներ ծառայեք գիտության, մեր Հայրենիքին և Ս. Էջմիածնին»:

Հանդեսի վերջում հոբելյարին մատուցվեցին նվերներ:

Պրոֆ.-դոկտ. Ա. Ղարիբյանի ծննդյան 60-ամյակին և գիտական-մանկավարժական գործունեության 35-ամյակին նվիրված հոբելյանի հանդիսությունը վերջացավ խմբովին երգված «Տերունական աղոթք»-ով:

Վերջում հոբելյարը ընդունեց բոլորի շնորհավորանքները:

Ժամը 5.30-ին, Վեհարանում, ի պատիվ հոբելյարի, Գերագույն Հոգևոր Խորհրդի կողմից կազմակերպվել էր ընդունելություն, որն անցավ ջերմ և սրտագին մթնոլորտում:

Վ. ԱՌԱՔԵԼՅԱՆ

(Դոցենտ,
Հայկական ՍՍՌ Գիտությունների
ակադեմիայի Լեզվի ինստիտուտի
ավագ գիտաշխատող)

ԱՐԱՐԱՏ ՂԱՐԻԲՅԱՆ

(Մենդյան 60-ամյակի առիթով)

Ազգար ինը հարյուր հիսունինը թվականի հունվարի 27-ին լրացավ ականավոր լեզվաբան, հայ մշակույթի ամենաեռանդուն գործիչներից մեկի, Հայաստանի Գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ պրոֆ.-դոկտ. Արարատ Ղարիբյանի ծննդյան 60 և գիտական-մանկավարժական գործունեության 35-ամյակը։

Ա. Ղարիբյանը երեսուն տարի իր անսպառ եռանդն ու խոր գիտությունը, առանց դուրսն կաթիլ խնայելու, նվիրաբերել է հայ երիտասարդ սերնդի բարձրագույն կրթության և մեծ թվով գիտական աշխատողներ պատրաստելու շնորհակալ գործին։

Շատերն են նրան աշակերտել որպես լեզվաբան, բարձրագույն կրթություն ստացած գիտական աշխատող կամ ուսուցիչ։

Նա ոչ միայն սկզբից մինչև վերջ պատրաստում, սովորեցնում է իր աշակերտներին, այլև անվերապահ հետևում է նրանց ողջ գիտական-մանկավարժական գործունեության ընթացքին։ Այս մարզում նա հանդես է եկել ոչ միայն իբրև գիտնական, որ իր բազմաթիվ գիտական աշխատություններով ու դասագրքերով կրթել ու դաստիարակել է շատերին, այլև իբրև անխոնջ ու հմուտ մանկավարժ երեսուն տարի դասավանդել է Հայաստանի դրեթե բոլոր բարձրագույն դպրոցներում, Անդրկովկասի Հայկական ուսումնական բարձրագույն հաստատություններում։ Այս ճանապարհին նրան ոչ մի արգելք չի կանգնեցրել, նա հաշվի չի առել ճանապարհի դժվարությունները, հեռու տեղեր ճամբորդելու անպատեհությունները, առողջություն և այլ շարժառիթներ, և հասել է ամեն տեղ, ուր գիտության ու կրթության ծարավի հայը նրա կարիքը ունեցել է։ Իսկ իբրև գիտական դրծի կազմակերպիչ, իբրև գիտական-վարչական դեկավար նա անմրցելի է։

Ա. Ղարիբյանը ծնվել է 1899 թվականի հունվարի 27-ին Արտաշատի շրջանի Այգեզարդ (Դարղալու) գյուղում՝ չքավոր գյուղացու ընտանիքում։ Երեխայի վաղ մանկության հասակում, չքավոր ծնողները նկատում են իրենց տղայի զարմանալի ընդունակությունները ու անչափ հետաքրքրասիրությունը և որոշում են անպայման կրթություն ստացած տեսնել իրենց որդուն։ Գյուղում դպրոց չկար, ի՞նչ անեին ծնողները։ Նրանք դիմում են անձնազոհության։ Իրենց չնչին միջոցներով հաջողում են երեխային ընդունել տալ Երևանի արական պրո-գիմնազիայում, որը պատանին ավարտում է փայլուն կերպով։ Գիմնազիան ավարտելուց հետո, գիտության ծարավի պատանին, լցված անսահման հետաքրքրրրությունններով, ձգտում է բարձրագույն

կրթության, սակայն ժամանակները անբարենպաստ էին։ Հետագայում պատահականությունը փրկում է ուսումնատենչ երիտասարդին։

Նման բախտ է վիճակվում ծանոթանալու մեծանուն լեզվաբան Հ. Աճառյանի հետ։ Հայակավոր գիտնականը անմիջապես նկատում է նրա՝ հայագիտության հանդեպ ունեցած բուռն սերն ու հետաքրքրությունը, իր մոտ է հրավիրում և անմիջապես սկսում է նրա հետ պարապել գրաբար, պարսկերեն, ֆրանսերեն և այլ լեզուներ, միաժամանակ ծանոթացնելով հնդեվրոպական գիտական լեզվաբանության սկզբունքներին ու հայերենագիտությանը։

1923 թվականն է։ Հայաստանում կյանքը փոխվել է դեպի լավը, գործում է նորաբաց համալսարանը, այնտեղ են հրավիրված հայ հին մտավորականության կարկառուն ներկայացուցիչները, որոնց շարքում նաև պրոֆ. Աճառյանը։ Ա. Ղարիբյանը այդ թվականից պատմա-լեզվագրական ֆակուլտետի ուսանող է և միաժամանակ վայելում է մեծանուն լեզվաբանի հովանավորությունը։ Այստեղ Ա. Ղարիբյանը, համալսարանական դասընթացի հետ միաժամանակ, խորանում է հայագիտական մի շարք ճյուղերի մեջ։ Իր տաղանդավոր ուսուցչին հետևելով՝ նա հատկապես մասնագիտանում է հայոց լեզվի պատմության, մանավանդ բարբառագիտության մեջ։

1928—1931 թվականներին, Աճառյանի անմիջական ղեկավարության տակ, նա հիմնովին անցնում է ասպիրանտական դասընթացը։ Հայ մտավորական շրջաններում արդեն հայտնի է դառնում ընդունակ ու եռանդով լցված նորապատրաստ լեզվաբանի անունը։ Գրեթե ասպիրանտուրան նոր վերջացրած՝ Ա. Ղարիբյանը սկսում է իր գիտական ու դասախոսական գործունեությունը և անընդմեջ շարունակում է մինչև այսօր։ Բացի հոդվածներից, արդեն 1931 թվականին երիտասարդ լեզվաբանը հրատարակում է իր առաջին գիրքը՝ «Ներածություն հայոց լեզվի պատմությանն»։ Այս աշխատության մեջ հեղինակը խիզախում է նոր տեսակետներ ու ըմբռնումներ հանդես բերելու հայոց լեզվի պատմության ընդհանուր շարադրանքը մշակելիս, միաժամանակ լայն չափով օգտագործվում են հնդեվրոպարանության ընձեռած գիտական նյութերն ու հայտնագործությունները։ Չնայած այժմ այդ գրքում առաջ քաշված որոշ տեսակետներ, որ այն ժամանակվա տիրող լեզվաբանության կողմից էին առաջ մղվում, արդեն հնացել են, սակայն անուրանալի է, որ հիշյալ գիրքը երկար ժամանակ գործածվում էր իբրև հայոց լեզվի պատմության դասագիրք, քանի որ հայոց լեզվի պատմության վերաբերյալ ձեռնարկներ այդ գրքի հրատարակությունից շատ ուշ լույս տեսան։ Այստեղ արդեն հեղինակը հիմնովին շարադրեց հայոց լեզվի պատմության պարբերացումը, գրաբարի համակարգի առաջացման հարցը, ներքին և արտաքին թեքման ձևակերպումը և ըստ այս թեքումների նշեց հայերենի տեղը հնդեվրոպական լեզուների համակարգում։

Հայոց լեզվի պատմության ու մանավանդ բարբառագիտության մարդում Ա. Ղարիբյանի երեսուն տարվա գիտական ու դասախոսական գործունեությունը կարող է չափվել իր երախտավոր ուսուցչի նույն՝ գործունեության հետ։ Երկար տարիներ նա դասախոսական ամբիոնից հայ նորահաս սերնդին սովորեցնում է հայոց լեզվի պատմություն ու բարբառագիտություն, միաժամանակ նրա ձեռքը տալով այդ առարկաների դասագրքերը։ Չհաշված նախորդ հրատարակությունները (1941), 1953 թվականին «Հայ բարբառագիտություն» խորագրի տակ Ա. Ղարիբյանը հրապարակեց մի մեծածավալուրջ աշխատություն, ուր քննվում են հայ բարբառագիտության պատմության, տեսության, հայոց բարբառների դասակարգման, հնչյունական համակարգի վերաբերյալ հարցերը և ուսումնասիրվում են մինչև այդ հայտնի դարձած բոլոր բարբառները։ Այս գիրքը հայ բարբառագիտության մի կատարյալ հանրագիտարան է, ուր հեղինակը նյութը քննել, վերլուծել ու շարադրել է գիտական լրջությամբ ու ծանրակշիռ փաստարկումներով, ցուցադրական նյութերի հարստությամբ ու համոզիչ օրինակներով։

«Հայ բարբառագիտություն» գրքի հեղինակը իր գիտական ամբողջական շարադրանքը չի կազմել ուրիշների կողմից հավաքված նյութերի վրա։ Նա տարիներ շարունակ անդադրում շրջել է Հայաստանի շրջանները, որոնել է առանձին հայ ընտանիքներ ու մարդիկ, որոնք թուրքական յաթաղանից մազապուրծ են եղել և ներգաղթել զանազան երկրներից, և որոնք մի ժամանակ շեն ու ամբողջական համայնքներով խոսել են հայոց չքնաղակերտ բարբառներով, իսկ այժմ մնացել են իբրև առանձին ընտանիքներ կամ անձեր։ Ուսումնասիրել է նրանց խոսվածքները, գրի է առել, ձայնագրել մեքենայական միջոցներով և իր գիտական համարձակ եզրահանգումները կատարել է այդ իսկ նյութերի ու փաստերի վրա։

«Հայ բարբառագիտություն» գրքում արդեն իբրև նորություն հայտնագործված են երկու նոր բարբառային ճյուղեր՝ Կա և Հա։ Հայ բարբառագիտության վիրտուոզ հեղինակը

ուսումնասիրությունը առաջին անգամ լույս է տեսել «Համառոտություն հայ բարբառագիտության» խորագրով։

Այս մարդում հայագիտությանը մատուցած նրա ծառայությունները այնքան շատ են ու մեծ, որ հարկադրված ենք լոկ թվարկումով եզրափակել նրան է պատկանում Ս ճյուղի բարբառների բաժանման ու անվանման և առաջին ուսումնասիրողի պատիվը, որի համար նա 1940 թվականին ստացավ ֆիլոլոգիական գիտությունների դոկտորի աստիճան։ Սրանից հետո նրա անդադրում ջանքերը պսակվեցին նորանոր հաջողություններով։ Մինչև այժմ Ա. Ղարիբյանը հայտնաբերել է 24 նոր բարբառներ, ձևակերպել է չորս բարբառային նոր ճյուղեր (Ա, Կա, Հա և զրաբարակերպ), որոնք նրան հնարավորություն տվեցին կոահելու հայ բարբառների նոր դասակարգում, այն է դերբայավոր, որի մեջ մտնում են ում, Մ, Լ ճյուղի բարբառները և մասնիկավոր, որին ենթակա են Կ, Կա, Հա ճյուղերի և զրաբարակերպ բարբառները։

Հայ բարբառների ուսումնասիրության այս հսկայական նվաճումներով վաստակավոր լեզվաբանը չի գոհացել սակայն։ Անցյալ տարի Գիտությունների ակադեմիայի հրատարակչությունը լույս ընծայեց նրա բարբառագիտական մի այլ աշխատությունը՝ «Հայերենի նորահայտ բարբառների մի նոր խումբ», որ Արամոյի, Քերուսիեի, Եդեսիայի նորահայտ բարբառների ուսումնասիրությունն է։ Այս ամենի մեջ առանձնապես պետք է նշել հայ բարբառների բաղաձայնական համակարգի դասակարգումը գրաբարի և հնդեվրոպական լեզուների համեմատությամբ, որտեղ ուսումնասիրողը աննախադեպ տվյալներ է ընձեռել հնդեվրոպական լեզուների բաղաձայնական համակարգի ցարդ վիճելի հարցերը լուծելու համար։ Հայ բարբառները առանձին-առանձին պահպանել են բաղաձայնական այն բոլոր համակարգերը, որոնք ունեն հնդեվրոպական առանձին լեզուները։ Այժմ արդեն այս նոր հայտնագործման վրա հենվում են եվրոպական որոշ գիտնականներ, որպեսզի բացատրեն հնդեվրոպական լեզուների բաղաձայնական համակարգի շատ առեղծվածներ։ Մենք յուրահատուկ նշանակություն ենք տալիս նաև զրաբարակերպ բարբառների հայտնաբերմանը, որովհետև սրանով հայ բարբառների պատմությունը չի կարող արդեն լրիտվել գիտական ու պատմական նոր լույսով։ Մինչև այժմ հայ բարբառները դիտվում էին իրրև գրաբարի փոփոխված առանձնատիպություններ, սակայն երբ հայտնաբերվել են նոր զրաբարակերպ բարբառներ, այդ նշանակում է, որ մյուս բարբառները տարբերվում են սրանցից թե՛ ըստ իրենց ծագման ժամանակի և թե՛ ըստ այդ ծագման աղբյուրների։

Ա. Ղարիբյանի հայագիտական գործունեությունը այս ամենով չի սահմանափակվում։ Քսանհինգ տարուց ավելի նրա մեթոդական գրքերով ու լեզվի դասագրքերով սովորել ու սովորում են բազմաթիվ դպրոցականներ։ Բավական է նշել, որ 5—7 դասարանների համար կազմված քերականության դասագիրքը 1934 թվականից սկսած մինչև այժմ ունեցել է ավելի քան մեկ միլիոն տպաքանակով տարբեր հրատարակություններ։

Եթե ամեն մի անձի համար նույնիսկ միայն մի գիրք հաշվենք, այդ նշանակում է մեկ միլիոն հայ հայերենի քերականություն է սովորել հիշյալ դասագրքով։ Ա. Ղարիբյանի քերականության դասագիրքը բնորոշ է ոչ միայն նրանով, որ այդքան հրատարակություն է ունեցել և հսկայական ծառայություն է մատուցել ու մատուցում հայերենի գիտելիքների ուսուցման գործում, այլև նշանավոր է նրանով, որ դրանով հիմք դրվեց նորագույն քերականության հիմնական կառուցվածքին։ Այստեղ առաջին անգամ դասդասվեցին հայերենի խոսքի մասերը ժամանակակից ըմբռնումով։ Այսպես՝ դերբայը դետեղվեց բայի համակարգի մեջ, հայտնաբերվեց ժխտական դերբայը և ձևակերպվեցին նրանով կազմվող ժխտական ըղձական ժամանակները հայերենի բայական համակարգում։ Այստեղ էր, որ դերանունը սահմանվեց իրրև ընդհանուր իմաստ արտահայտող բառ և անկախ խոսքի մաս, մակբայները, ածականները միմյանցից տարբերակվեցին և ստացան իրենց հստակ բնորոշումը, ճշտվեց նախադասության կառուցվածքը, ընդգծվեց ստորոգյալի ու ենթակայի միասնության նշանակությունը նախադասության ձևավորման մեջ և վերականգնվեցին սեռական և հայցական հոլովները, որ վտարված էին հայ քերականությունից։

Բացի վերոհիշյալ դասագրքերից, Ա. Ղարիբյանը կազմել է 8 այլ քերականության դասագրքեր հայոց տարրական դպրոցի և ռուսաց դպրոցներում հայերենի ուսուցման, ինչպես նաև ռուսաց լեզուն հայկական դպրոցներում ուսուցանելու համար, որոնք ունեցել են մինչև 18 հրատարակություն։ Նա կազմել է հայերենի ինքնուսուցման ձեռնարկ, որը թափանցում է ամենուրեք տարտրղնված ռուսախոս հայ ընտանիքները և մայրենի լեզու է ուսուցանում նրանց։

Հայոց լեզվի համար կազմված այսքան դասագրքերի հեղինակը բնականաբար պետք

է հետաքրքրվեր նաև հայոց լեզուն դյուրին ու ճիշտ ուսուցանելու եղանակներով, մանավանդ այն ժամանակ, երբ մեզանում իշխում էին իրար հակադիր տարբեր մեթոդներ և ուսուցողական զանազան եղանակներ։ Հեղինակը, օգտագործելով ռուսական մեթոդական գրականության դրական նվաճումները, իր մեթոդական գրքերի ու հոդվածների հիմքում դնում էր անցյալի հայ առաջադեմ մանկավարժների (Աբովյան, Ղալայան և այլք) ուսուցողական մեթոդները։

1947 թվականին լույս տեսավ հեղինակի «Հայոց լեզվի մեթոդիկա» ընդարձակածավալ աշխատությունը, որտեղ մանրամասն ու հանգամանորեն քննված են մեր լեզվի ուսուցման բոլոր հարցերն ու խնդիրները։ Հայոց լեզվի մեթոդիկայի վերաբերյալ տարբեր ժամանակներում հրապարակվել են հեղինակի մոտ երկու հարյուր մամուլ մեթոդական հոդվածները։ Իր կազմած դասագրքերում ու մեթոդական ձեռնարկներում նա առանձնապես ծանրացել է հայոց լեզվի ուղղագրության հիմունքների մշակման ու ձևակերպման վրա և ամեն դպրոցականի քաջ հայտնի են որոշ համակարգի մեջ դրված մեր լեզվի տարբեր բաղաձայնների ուսուցման հստակ ու սպառիչ կանոնները։

Ա. Ղարիբյանը հսկայական ծառայություն է մատուցել նաև բառաբանագրության գործին. բացի այն, որ նա հեղինակակից է Լեզվի ինստիտուտի կողմից հրատարակված Ռուս-հայերեն և Հայ-ռուսերեն համառոտ բառարանների։ Ռուս-հայերեն քառահատոր բառարանը գլուխ բերվեց նրա ղեկավարությամբ, խմբագրական աշխատանքներին նրա անշահախնդիր մասնակցությամբ և բուռնեռանդ օժանդակությամբ։ Սակայն Ա. Ղարիբյանը գերագույն նպատակ էր հետապնդում՝ կազմել հայերենի բացատրական նոր բառարան։

Այժմ արդեն մոտ երկու տարի է, ինչ մկսվել են քարտարան կազմելու աշխատանքները, և շնորհիվ Ա. Ղարիբյանի անսպառ եռանդի ու նվիրվածության, կազմվել է 5 միլիոն քարտ հայ նոր գրական լեզվի բառերի համար։ Ամեն քարտ բառը տալիս է իր նախադասության մեջ հեղինակային վկայությամբ։ Սրան զուգընթաց Ա. Ղարիբյանի գլխավոր խմբագրությամբ կազմվել է հայերենի բացատրական քառահատոր բառարան, որի առաջին հատորը մոտակա երկու ամսում հանձնվելու է տպագրության։ Հայագիտության այսպիսի մեծ ավանդի ստեղծումը արդյունք է Ա. Ղարիբյանի անշահախնդիր նվիրվածության, աշխատանքային անհագ ծարավի, գործը մինչև վախճան հասցնելու վճռականության, հայ մշակույթի գործին զոհաբերվելու անհաշվենկատ ցանկության։

Այսօր, երբ լրանում է Ա. Ղարիբյանի ծննդյան 60-ամյակը և գիտական ու դասախոսական գործունեության 35-ամյակը, հայ մշակույթի գործի ամեն մի նախանձախնդիր մարդ չի կարող իր շնորհավորանքի ու շնորհակալության խոսքը չասել և տասնյակ հազարավոր երիտասարդ կամ արդեն հասակն առած նրա աշակերտները չեն կարող երախտագիտության ազնիվ զգացումով չհիշել իրենց տաղանդավոր ուսուցչին։

Թող երկա՜ր, երկա՜ր ապրի վաթսուն տարին լրացրած, բայց դեռ այնքան երիտասարդ մեր ուսուցիչը՝ ի բարգավաճում հայրենի սրբազան մշակույթի։

ՀԱԿՈԲ ԿՈՉՈՅԱՆ

(Ծննդյան 75-ամյակի առթիվ)

Հակոբ Կոչոյանը ծնվել է Ախալցխայում, 1883 թվականին, Կարինից գաղթած հմուտ ոսկերիչ արվեստագետ Կարապետ Կոչոյանի ընտանիքում։ Նա աչք է բացել հայեցի արվեստի մթնոլորտում, երակների մեջ իսկ ունենալով այդ արվեստը։

Հաղիվ տասնհինգամյա, Հակոբ Կոչոյանը ծնողների հետ տեղափոխվում է Վլադիկավկազ (այժմ Օրջոնիկիձե), որտեղ պատանի արվեստագետը կազմակերպում է իր կիրառական, փորագրական և նկարչական աշխատանքների անդրանիկ ցուցահանդեսը՝ շրջապատի գեղեցիկ բնությունը պատկերող բազմերանգ գողտրիկ էտյուդներով։

Հ. Կոչոյանի առաջին ուսուցիչներն են եղել հայրը և երկու եղբայրները։ Ծնողները սակայն օժտված պատանուն մղում էին դեպի արհեստ՝ ոսկերչությունը։ Հարազատների այդ մոտեցումը այնքան էլ չէր ոգևորում ապագա մեծ նկարչին։ Ոսկ փորագրությունը, մետաղների կամ փայտի վրա, նրա համար արվեստի մի երեսն էր միայն, համեմատած գույների կախարդանքին, որի թելերի ծայրերը բռնել արդեն սովորել էր պատանին։ Վլադիկավկազը, իր ուսուցիչները իրենց կարելին ոչել էին արվեստագետ պատանու հոգուն։ Զարթնող արվեստագետին պարզ էր, որ իր լեռնային նեղ լուսամուտից չէր կարող ընկալել մեծ աշխարհի իրական արվեստը։



Առաջին հանդրվանը Մոսկվան եղավ։ Հ. Կոչոյանը միաժամանակ սովորում է փորագրություն (Գրուզովի մոտ) և նկարչություն՝ ամենամոտ բարեկամներ ունենալով ժամանակի լավագույն ռուս նկարիչներին։

Երկրորդ հանդրվանը Մյունխենն է։ Մոտ երկու տարի Կոչոյանը սովորում է հայտնի բունանկարիչ Ա. Ամբեյի մոտ, հետո փոխադրվում Մյունխենի Գեղարվեստից ակադեմիան, որն ավարտում է 1907 թվականին։

Հայրենիք դարձի ճանապարհին Կոչոյանը շեղվում է դեպի Փարիզ։ Հայտնի «Ֆորտիստ էդգար Շահենի միջոցով նա ծանոթանում է ֆրանսիացի անվանի նկարիչների հետ, ուսումնասիրում համաշխարհային գեղարվեստի գանձերի նմուշները, հետևում ժամանակի արվեստին։

1920—1923 թվականներին Հ. Կոչոյանը գտնվել է Իրանում։ Այդ առիթ է տվել արվեստագետին մոտիկից ծանոթանալու պարսիկ ժողովրդի ստեղծագործություններին, հարստացնելու իր գիտելիքները ևս մի փայլուն արվեստի նվաճումներով։ Նա տվեց պարսկական թեմաներով նկարների մի շարք, ինչպիսիք են՝ «Զայխանա», «Շախսեվախսեն», «Փողոց Թավրիզում» և այլն։ Այդ նկարները ունեն տիպիկ արևելյան կոլորիտ, հետաքրքիր թեմաներ, գույնի կենդանություն և հագեցվածություն ու մանավանդ վարպետ ընդհանրացումներ՝ ժողովրդական կյանքի և բնության։

1924 թվականից Հ. Կոչոյանը հաստատվել է Երևանում։

ՍԱՍՈՒՆՅԻ ԴԱՎԹԻ ՏՆՈՒՆԸ

(1947 թ.)

Միայն սովետական կարգերը հնարավորություն ընձեռեցին Հ. Կոչոյանին լիովին նվիրվելու իր նախասիրած գործին՝ արվեստին։ Այսօր՝ ավելի քան կես դարի վրա տարածվող նրա ստեղծագործությունը հոսում է նրա նկարներից, քանդակներից, գրքերի պատկերազարդումներից։

Հ. Կոչոյանը հանդիսացավ սովետահայ կերպարվեստի լավագույն մշակներից մեկը։

Նրա արվեստանոցից, ուսուցչական ամբիոնից բաղմաթիվ արվեստագետներ ստացել և ստանում են իրենց ուղղությունը և ներշնչումը։

75-ամյա պատկառելի տարիքում, երբ մարմնական տվյալները արդեն սկսել են դավաճանել մեծ վարպետին (նա հազիվ է տեսնում), այնուամենայնիվ նա անդուլ աշխատում է։ Ստեղծագործական ավյունով լեցուն է նրա հոգին։ Դեռ անցյալ տարի ավարտեց իր ծավալուն մեկ նկարը՝ «Սասունցի Դավիթ»-ը։

Հ. Կոչոյանը մեծատաղանդ և բազմակողմանի արվեստագետ է։

Զարմանալիորեն լայն է նրա նկարչական ստեղծագործությունների դիապազոնը՝ պատմական, կենցաղային, ռազմական, բնակնար, դիմանկար, նատյուրմորտ։ Հ. Կոչոյանը նկարել է գլխավորապես հայրենի բնությունը և այդ բնության ֆոնի վրա՝ իր ժողովրդի պատմական կամ այժմյան կյանքը։ Նրա կտավներից աչքառու են՝ «Պարոնի պալատ»-ը, «Դվինի աղատումը արաբներից», «Կոմունիստների գնդակահարումը Տաթևում» (1930 թ.) նկարը իր դրամատիկական բովանդակությամբ և հաջող կառուցվածքով դիտողին հաղթանակի վստահություն է ներշնչում։ «Բերքի տոնը» նկարում լույսով ու բերկրանքով է խայտում մեր օրյա կոլտնտեսականի երջանիկ կյանքը։ «Սասունցի Դավիթը» (1958 թ.) և «Սասունցի Դավթի մնունդը» հերոսական հեքիաթային բովանդակությամբ լավագույն հաջողված կտավներ են։ Սասունցի Դավիթը նրա նախասիրած հերոսն է։

Նուրբ ու ճաշակավոր են Կոչոյանի փայտի վրա կատարած փորագրությունները։ Դրանցից ուշագրավներն են, իրենց արվեստով և բովանդակությամբ, «Կարմիր բանակայինների մուտքը Կարճեան» և «Զորագյուղը Զանգվի ափին»։ Առաջինը մի դեղեցիկ այլաբանություն է— մթնշաղում թաղված գյուղ, որի վերևում ծագում է մանուկ արևը— Կարմիր Բանակայինների անցքը գյուղից, իրենց աղատությունը ողջունող գյուղացիների միջով։

Հ. Կոչոյանի սիրած ժանրերից մեկն է նաև գրքերի պատկերազարդումը, իսկ դրանցից՝ հեքիաթայինը։ Նա անդուգական տաղանդով նկարազարդել է հայ և օտար հեղինակների գրքերը, ինչպես Սայաթ-Նովայի տաղերի ժողովածուն, Ե. Չարենցի «Գիրք ճանապարհի»-ն, Ն. Զարյանի «Արա գեղեցիկ»-ը, Վարդան Այգեկցու «Աղվեսագիրք»-ը, «Սասունցի Դավիթ» էպոսը, «Հազարան բլբուլ»-ը, Մ. Գորկու «Աղջիկն ու մահը» և այլն։

Ինչ թեմա էլ ընտրել է տաղանդավոր նկարիչը՝ նա միշտ էլ կարողացել է ապրել իր ստեղծագործությամբ, գրավել, հուզել դիտողին, վարակել իր հույզերի, որոնումների արտակարգ անմիջականությամբ, բնականությամբ։ Կոչոյանի կտավները կարծես գույներով ու գծերով կազմված, ամենաքաղաղաղան մտահղացումներով և դրանց զուսպ ու ճիշտ վերլուծումով, հարուստ մի աշխարհ լինեն. կախարդական վրձինով կյանքի կոչված, բայց վերին աստիճանի բնական։

Ներունակարդ է Կոչոյանը միայն մարմնով, նրա ստեղծագործող տաղանդը ո՛չ մեռանալ և ո՛չ էլ մեր կյանքից հետ մնալ գիտե։ Նա միշտ առույգ, միշտ կենսախինդ, միշտ իր գործի ու ժողովրդի նկատմամբ հավատով ու պատասխանատվությամբ տոգորված և ստեղծագործական ավյունով լի ստեղծագործող է։

Հ. Կոչոյանի արվեստը լուրջ ներդրում է սովետական արվեստի պատմության դանձարանում։

Մեծ արվեստագետը արժանացել է ամենարարձր գնահատականների և կոչումների. նա ՍՍՌՄ-ի և Հայաստանի վաստակավոր և ժողովրդական նկարիչ է ու ՍՍՌՄ-ի Գեղարվեստների ակադեմիայի անդամ։

Թանկագին հոբելյարին երկար կյանք ենք ցանկանում։

ՆԿԱՐԻՉ ԱԲՐԱՀԱՄ ԳՈՒՐԳԵՆՅԱՆ

Վեհափառ Հայրապետի հրավերով վերջերս Մայր Աթոռ ժամանեց սփյուռքահայ ծանոթ նկարիչ-արվեստագետ Աբրահամ Գուրգենյանը։

Մանուկ հասակից որբանում է և ուղարկվում Նոր-Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքը՝ որպես գիշերօթիկ ուսանող, ուր սովորում է 9 տարի։ Ուսումն ավարտելուց հետո վերադառնում է

Նկարիչ Աբրահամ Գուրգենյանը ծնվել է 1918 թվականին Իրանի Թեհրան քաղաքում։ Թեհրան, աշխատում է լուսանկարչի մոտ որպես ռետուշյոր, դրադվում է նկարչությամբ

և հայկական ու պարսկական մանրանկարչության ուսումնասիրությամբ։

Ինքնաշխատությամբ, իրանական և հայ արվեստի սիստեմատիկ ուսումնասիրությամբ, նա խորանում է իր մասնագիտության մեջ, ուսումնասիրում է իրանական և հայկական կենցաղային սյուժեներ, կազմակերպում է իր ստեղծագործությունների ցուցահանդեսը։ Հատկապես աշխատում է Օմարխայամի, Սաադիի, Բաբա-Թահիրի, Նիզամու, Սայաթ-Նովայի, Հովհաննես Թումանյանի, Ավետիք Իսահակյանի ստեղծագործությունների նկարազարդումների վրա։

Նա ցուցահանդես է կազմակերպում նաև Թեհրանում, Նոր-Ջուղայում։

Նրա տարիների իղձն է եղել իր ստեղծագործությունների ցուցահանդեսի կազմակերպումը Մայր Հայրենիքում՝ հարազատ ժողովրդի համար։ Եվ նա այդ մտածումով էլ եկել է Հայրենիք, Վեհափառ Հայրապետի հրավերով։

ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀՈԲԵԼՅԱՆԸ ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ

ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՐԿՆԱԿ ՅԱՐԵԴԱՐՁՆԵՐՈՒՆ ԱՌԹԻՎ

5 հոկտեմբեր 1958-ի կիրակին, Թեմիս եկեղեցիներուն մեջ մատուցվեցաւ հանդիսավոր սուրբ պատարագ և տեղի ունեցաւ Հայրապետական մաղթանք, Նորին Ս. Օծութիւն Տ. Տ. Վազգեն Ա Վեհափառ Կաթողիկոսի ծննդյան հիսնամյա և գահակալության երրորդ տարեդարձներուն առթիվ։ Բոլոր հոգեվորականներն իրենց քարոզներով պանծացուցին Հայաստանյայց Եկեղեցվո մատուցած անցյալ ու ներկա ծառայությունները ազգու փոքրս-ին, ինչպես նաև անձն ու գործը արժանաբնտիր Հոգևոր Պետին։ Հետ միջօրեի ծուխերն ունեցան նաև հատուկ հանդեսներ, ուր պերճաբան խոսողներ լայնորեն բացատրելով Հայ Եկեղեցիի դերը, իրենց և համայնքին հավատարմությունը հայտնեցին Ս. Էջմիածնի և հանդերձ արևշատության մաղթանքներով հարգանքն ու սերը՝ Հովվապետին։

Միևնույն օրը, առաջնորդարանի հովանավորությամբ և մեծն Նյու-Յորքի մեր յոթն եկեղեցիներու մասնակցությամբ, կեսօրե վերջ ժամը 2-ին, մեծ հանդիսությամբ մատուցվեցաւ սուրբ պատարագ և տեղի ունեցաւ Հայրապետական մաղթանք Սեյնթ Մեյրի Դհը Վիրջին եպիսկոպոսական հոյակապ եկեղեցվո մեջ։ Առաջնորդ սրբազան հոր Ս. Էջմիածին մեկնելուն հետևանքով, սուրբ պատարագը մատուցց առաջնորդական փոխանորդ հոգեշնորհ Տ. Մյուտոն ծայրագույն վարդապետ Կրճիկյան...., ծովածավալ հավատացյալներու ներկայության։

Պատարագիչ հոգեշնորհ հայրն հայերենով, իսկ արժանապատիվ Տ. Լևոն քահանա Առաքելյան՝ անգլիերենով քարոզեցին, բացատրելով իմաստը հայրապետական հեղինակության։ Անոնք Հայաստանյայց Եկեղեցվո և Ս. Էջմիածնի մաղթեցին պայծառություն, Վեհափառ Հայրապետին՝ քաջառողջություն ու երկար հովվապետություն, իսկ Իր սուրբ ծրագիրներուն՝ հաջողություն։

Յոթն եկեղեցիներու խառն դպրաց խումբը դպրապետներու մասնակցությամբ կղեկավարեր Յունիրն Սիթիի հովիվ հոգեշնորհ Տ. Վաչե վարդապետ Հովսեփյան։

Իսկ դպրապետ Խոսրով Համամճյան կերգեր սարկավագի բաժինը Ս. Սեղանեն։ Վերոհիշյալ եկեղեցիներու ծխական խորհուրդներու անդամներեն կազմված մասնավոր մարմին մը, տիար Արմենակ Մարտիրոսյանի գլխավորությամբ, կհսկեր ընդհանուր կարգ ու կանոնին։

Հաջորդ օր առաջնորդական փոխանորդ հոգեշնորհ հայրը, հանուն Թեմիս հայ ժողովուրդի, հետևյալ հեռագիրը հղեց Նորին Վեհափառության.

«Վեհափառ Տեր.

Ձերդ Սրբության բարեբաստիկ ծննդյան հիսնամյակին և գահակալության երրորդ տարեդարձին առթիվ, թեմիս բոլոր եկեղեցիները 1958 հոկտեմբեր 5-ի կեսօրն առաջ, իսկ առաջնորդարանը կեսօրն ետմ Նյու-Յորքի Սեյնթ Մեյրի Դեր վիրջին հոյակապ եկեղեցվո մեջ, Բաղամիս և Նյու-Ջըրզիի մեր յոթը եկեղեցիներու մասնակցությամբ, մատուցին հանդիսավոր սուրբ պատարագ և հայրապետական մաղթանք, ի ներկայության իսոնեռամ ճալատացյալներու:

Այս առթիվ մենք, ճանուն առաջնորդական վիճակիս, համայն ժողովրդական, ծիսական խորհուրդներուն, հարակից մարմիններուն, հոգևոր դասուն, թեմական խորհուրդին, թեմական պատգամավորներուն, սրտագին կշնորհավորենք Ձերդ Վեհափառությունը, հայցելով ի Տյառնն պարգևելու անսասանություն և բարգավաճություն Հայաստանյայց եկեղեցվո, և արեշատություն, բաշտոնյություն ու բարերություն Ձերդ առաքելաշավիղ Հայրապետիդ, որուն խոնարհաբար կբերեմք մեր և վիճակիս որդիական սերն ու ճավատարմությունը ճանկերձ աջաճամբուրիվ»:

(Նյու-Յորք, «ՀԱՅԱՍՏԱՆՅԱՑ ԵԿԵՂԵՑԻ», պաշտոնաթերթ Ամերիկայի հայոց առաջնորդարանի, 1958 թ. նոյեմբեր, № 10):

ԿԱՀԻՐԵ

ՀԱՐԳԱՆՔԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ՆՎԻՐՎԱԾ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՇՆՈՐՀԱՋԱՐԴ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱՋԳԵՆ Ա-Ի

Հինգշաբթի, 16 հոկտեմբեր 1958, երեկոյան ժամը 9.15-ին, Հայ գեղարվեստասիրաց միության «Թեքեյան» սրահին մեջ, տեղի ունեցավ հարգանքի հանդիսություն մը, նվիրված Ամենայն Հայոց Կաթողիկոս Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա-ի, իր ծննդյան հիսնամյակին և գահակալության երրորդ տարեդարձին առթիվ, հովանավորությամբ թեմիս բարեխնամ առաջնորդ գերաշնորհ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Սիրունյանի, և կազմակերպությամբ Ռամկավար Ազատական Կուսակցության Կահիրեի և Հելիոպոլսո ակումբներուն, Հայ գեղարվեստասիրաց միության Կոկանյան սրահին մեջ։

Բացման խոսքը ըրավ Հայ գեղարվեստասիրաց միության երկրորդ ատենապետ պր. Վարդգես Գարտաշյան, որ հիշեց Թորգոմ սրբազանի սա խոսքը, թե «ոչ թե անունը կփառավորե մարդը, այլ մարդն է, որ կփառավորե անունը», և այս խոսքը կիրարկելով մեր Վեհափառին, ճշմարտացիորեն կարելի է ըսել. «Գահը չէ որ կփառավորե Գահակալը, այլ Գահակալն է որ կփառավորե Գահը»։

Ապա պր. Օննիկ Գալուստյան արտասանեց Թումանյանի «Լուսավորչի կանթեղը», խանդավառիով ներկաները։

Հետո բեմ հրավիրվեցավ արժանապատիվ Տ. Պետրոս քահանա Ֆերեճյան, որ ներկայացուց «Արժանավոր եկեղեցականը»։

Իր հոգեոր Հոր հանդեպ երախտագեղ դավկի մը հարգանքի այս տուրքեն ետք, եգիպտահայ երգչախումբեն մաս մը երգեց «Ուրախ լեր»-ը, ղեկավարությամբ Մ. Ե. Հակոբյանի, որ զայն դաշնավորած էր հատկապես այս հանդիսության առթիվ։ Հետո տիկին Նորա Փափազյան, իր սովորական հուզականությամբ, արտասանեց Վահան Թեքեյանի «Եկեղեցին Հայկական»-ը, որմե հետո հայտագիրը վերջ գտավ պր. Համբարձում Գարայանի խոսքով, ներկայացնելով Վեհափառ Հայրապետը իբրև հայրենասեր մարդ։

Ջերմ սիրո և հարգանքի այս երեկույթը փակվեցավ առաջնորդական փոխանորդ արժանապատիվ Տ. Սահակ քահանա Շաքարյանի խոսքերով։ Ան ըսավ. «Վեհափառ Հայրապետին շինարար գործունեության դիմաց, մենք ձեռնածալ չենք կրնար նստիլ, պետք է մենք ևս աշխատինք, մեր բաժինը բերելով անոր ձեռնարկած հոկայական աշխատանքին»։

Ա. Ա.

(Կահիրե, «ԱՐԻՎ» օրաթերթ, 18 հոկտեմբերի 1958 թ.)

ԲՈՒԵՆՈՍ-ԱՅՐԵՍ

Նորին Ս. Օծության Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ծննդյան հիսնամյակի առթիվ, հոկտեմբերի 25-ին, դարաթ երեկոյան ժամը 9-ին, Բուենոս-Այրեսի «ՀԱՅ ԿԵՆՏՐՈՆ»-ի սրահում, նախագահությամբ Հայրապետական պատվիրակ բարձրաշնորհ Տ. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյանի, տեղի բոլոր կազմակերպությունների մասնակցությամբ, տոնվել է Վեհափառ Հայրապետի ծննդյան հիսնամյա և գահակալության երրորդ տարեդարձի հոբելյանը։

Հոբելյանական հանդիսությունների ժամանակ գործադրվել է գեղարվեստական ճոխ հայտագիր։

Վեհափառ Հայրապետի կյանքի և գործունեության մասին բովանդակալից զեկուցումով հանդես է եկել Հայրապետական պատվիրակ Տ. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյանը։

Եղել են արտասանություններ, նվագներ, մեներգներ լավագույն ուժերի կատարմամբ։

Հոբելյանական հանդիսությունների առթիվ ցուցադրվել է նաև Կաթողիկոսական ընտրության և օծման նվիրված խոսուն ֆիլմը։

Այս առթիվ Բուենոս-Այրեսի հայրենասեր հայությունը, ազգային-եկեղեցական կազմակերպությունները, հայրենակցական միությունները և մամուլը երախտագիտությամբ ու սիրով իրենց որդիական հարգանքն են արտահայտել Ամենայն Հայոց Շնորհազարդ Հայրապետի, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Մայր Հայրենիքի հանդեպ։

ՎԵՀԱՓԱՌԸ

(Զույգ տարեդարձներուն առթիվ)

.... Մեր եկեղեցին հպարտ է իր ներկա եպիսկոպոսապետով, որ ունի մարգարեներու հատուկ տեսիլքներ և առաքյալներու նման հավատք, սրբություն և հոգիները ոգևորող խոսք։ Բացի էական այս հատկություններեն Ան, իբրև Հայրապետ, օժտված է միանգամայն առաջնորդելու և կազմակերպելու կարողություններով, որոնց անհրաժեշտ կարիքը կզգա Հայ Եկեղեցին ներկա այս օրերուն։ Մենք երջանիկ ենք փորձառությամբ, կորովով և իմաստությամբ լի մեր հիսնամյա Հովվապետով, որ նոր ժամանակներու ճարտարապետը պիտի հանդիսանա ապահովուրար մեր պատկառելի, մեծ և Ս. Տան վերանորոգության։

Մենք բոլորս առիթ ունեցանք հաղորդվելու Նորին Սրբության մտածումներով՝ ընթերցմամբ Անոր հոյակապ քարոզներուն, որոնք ջերմացուցին մեր հոգիները սուրբ հավատքով, կոնդակները, որոնք հայրական ազնիվ խրատներով սեր և միություն բաշխեցին։ Խոսքեն գործի անցնելով, Նորին Վեհափառությունը երեք տարվան կարճ միջոցին կազմակերպեց Հայաստանյայց եկեղեցվո թեմերը, վերստացավ Վեհարանը և պայծառացուց մեր հավատքի կեդրոն Ս. Էջմիածինը, զայն օժտելով ամենեն արդիական տպարանով։ Ան մանավանդ զարկ տվավ Հոգևոր Ճեմարանին, որուն աշակերտները հաղորդ ըլլալով Մեծ Առաքելորդի սուրբ խորհուրդներուն, պիտի լինին վաղվան արժանավոր դեկավարները Եկեղեցիին։ Ան միանգամայն կարգ ու կանոնի հետ նոր կյանք տվավ միաբանության,

.... Նորին Սրբության զույգ տարեդարձներուն առթիվ Հայ Եկեղեցին ի խորոց սրտի կաղոթե Աստուծո, որպեսզի տիրելի իր Հայրապետին պարգևե երկար հովվապետություն և սուրբ ծրագիրներուն՝ իրագործում։

«Հայաստանյայց Եկեղեցի»-ն, իբրև պաշտոնաթերթը առաջնորդարանիս, հանուն թեմիս հավատացյալ ժողովուրդին, իր խնդակցությունն ու շնորհավորությունը կհայտնի Նորին Սրբություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսին, Իր ծննդյան հիսնամյակին և գահակալության երրորդ տարեդարձներուն առթիվ, մաղթելով անսասանություն Եկեղեցվո, պայծառություն Ս. Էջմիածնին և արեշատություն առաքելատիպ Հայրապետին, որուն կմատուցանե որդիական իր սերն ու հարգանքը։

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

(Նյու-Յորք, «ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ», պաշտոնաթերթ Ամերիկայի հայոց առաջնորդարանի, 1958 թ. Նոյեմբեր, № 10)։

ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆԸ

Ս. Էջմիածնի զարավոր հաստատության ազգային և կրոնական նշանակությունը մեր պատմության մեջ գրավեր է բաղմաթիվ էջեր։

Անոր հաստատման թվականեն մինչև մեր օրերը երկարող հսկայական կամուրջին վրայեն քայլեր են անհամար սերունդներ, տեսեր են մարդկային կյանքին և տառապանքներուն կապված բաղմապիսի ելևէջներ, լացեր ու ժպտեր են և միշտ փարած մնացեր անոր՝ անտեսանելի և անխորտակելի կապերով։

Անառարկելի իրողություն է, որ մոտիկ և հեռավոր դարաշրջաններու մեջ, ի՛նչ պայծառ կամ մթապատ ճակատագիր ալ որ ապրեցավ հայը, ի՛նչ քարքարոտ և արյունաներկ ճանապարհներն ալ որ քալեց՝ Էջմիածինն իրավ իր հավաքական հոգիին կեդրոնը, իր հավատալիքներուն ակնաղբյուրը, անմարելի հույսն ու ապավենը և անոր պլպլացող կանթեղին լույսով առաջնորդվելով գտավ Իր մեծ սրտին աննյութական ապաստանարանը։

Մեր քրիստոնեական բաղաքակրթության լուսափողփող փարոսն եղած է Ս. Էջմիածին, հայը հայուն կապված պահող հրեղեն ոգակը, ամեն ավերումե նաք փյունիկի նման վերածնելու կենսանորոգ ներշնչումը և Մերձավոր Արևելքի քրիստոնեական կրոնին ամենեն հավատավոր և բոլորանվեր առաքյալը։

.... Էջմիածինը լուսապարդ հրեանեն յոթը—ութը մղոն հեռավորությամբ համանուն ավանին մոտ հաստատված է։ Համեստ ու պարզուկ վանքի մը ծրեությեն ունի, շրջապատված պարիսպով մը, որ իր թեներուն մեջ առեր է հայուն հնամենի հոյակապ Տաճարն ու Ճեմարանը, Վեհարանն ու Վեհափառ և ուսանողներու և հոգևոր հայրերու նվիրյալ փոպանդը։

Այս պարիսպեն ներս մտնելու ատեն դուք երևութապես պիտի հիշեք որևէ հայկական հնադավառի մեջ շինված հազարավոր վանքերեն մին, սակայն հոս, մուտքի սեմին վրա, առաջին քայլին իսկ՝ ձեր սիրտը պիտի լեցվի անանուն հուզումով։ Սարսուռ մը պիտի փաթթվի ձեր էության, որովհետև 17 դարերու հայության տոդանցքը պիտի ներկայանա ձեզի և այս պատմական սրբավայրեն պիտի խոսին հայու հավատքին անբեկանելի տոկունությունը, ազգային իղձերն ու ձգտումները, հայու ազնվական առաքելությունները և մեր պատմության մթագույն և լուսավոր իրականությունները։

Աննման և հավիտենական միաք մը ծրարված կմնա հոն, կամ փակած՝ քարերուն, քանդակներուն, սրբատաշ կամարներուն, կանգուն կամ փլատակ սանձարներուն, որոնց մեջ եկեր ու շնչեր են անհամար հայրապետներ, եկեղեցականներ, իմացական բեղուն հոգիներ, ապա մեծ զբաղ մը ձգելով հոն՝ անցեր են կյանքի սահմանեն անդին։

Խորհրդանշան մըն է ուրեմն Ս. Էջմիածինը, ինչպես Արարատը, Արաքը, Օշականը, Ալաղյազը և բազում ուրիշ հորենական սրբություններ։

Ս. Էջմիածինը մինչև այսօր ալ հաստատապես կմնա մեր հասարակության հոգևոր տունը, անոր գերագույն հեղինակությունն ու Ամենայն Հայոց Կարողիկոսին դարավոր բնակավայրը։

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

(Նյու-Յորք, «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՉՆԱԿ», 26 հուլիսի 1958 թ., № 30)

ՊԱՏԻՎ ԾԻՆԵՐՍԸ ՎԵՀԱՓԱՌԻՆ

Երեք տարիներ անցած են միայն այն օրեն ի վեր, որ Ս. Էջմիածնի Ամենայն Հայոց Կաթողիկոսության թափուր մնացած Աթոռը իր նորընտիր և շնորհազարդ Գահակալը ունեցավ։ Եվ արդեն սրտեռանդ ու ոգևորիչ խանդավառություն կտիրե Ս. Էջմիածինեն ներս և կատարածի արտաքսահմանի բոլոր հայ համայնքներեն ներս ու հայ հոգիներուն մեջ, ուր Հայաստանյայց Եկեղեցվո հանդեպ հավատքն ու հավատարմությունը մնացած են անվթար և անխախտ։

Այս խանդավառությունը՝ ծուխը չէ հարդի կրակին, ոչ ալ աղմուկ է և իրարանցում։

Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ամենայն Հայոց Սրբազնագույն Կաթողիկոսի գահակալության երրորդ տարեդարձը և ծնունդյան հիսնամյակը առնակատարելու որոշումը, որ բխած է Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհուրդեն, պարզ կամ պաշտոնական սոսկական ձեակերպության մը ընդառաջ երթալու բաղձանքի մը արտահայտությունը չէ, այլ հոգեկան խոր գոհունակության և գնահատության զգացումի բնական և ազնիվ դրսևորումն է։

Որքա՜ն սփոփանքի և հրճվանքի աղբիւր եղավ համայն հայության համար տեսնել, որ երիտասարդ եկեղեցական անձնավորություն մը Մայր Աթոռի Գահակալը ըլլալու բարձրագույն պատիվին կարժանանար։

Ամենն հայ այս զգացումին ու դատումին մեջ կդներ իր ազնվագույն իղձը և նորընտիր Վեհափառ Հայրապետին երիտասարդ տարիքին մեջ կուզեր տեսնել շնորհ և հատկություն մը, որոնց շնորհիվ հնադարյան Հայասանայց Եկեղեցիին ներս պիտի վերընձյուղեին ուժը, կորովը, գործունեությունն ու կյանքը իրենց ստեղծագործ լիության մեջ և Ս. Էջմիածնի հազարամյա քարերը կյանք պիտի ստանային, կենսատու դառնալու համար։

Երբ այսօր պերճախոս իրականություններն են, որ կուգան փաստել, թե Ամենայն Հայոց Հովվապետը իր անձին հեզինակությամբ և պատկառանքով՝ իր սրբազան պաշտոնն ու դիրքը իրենց վայել բարձրության վրա կպահեն, ուրախության լինչ զգացումներով կցնծա ամեն ազգասեր և հավատավոր հայու հոգին՝ զույգ տարեդարձներու այս գեղեցիկ առթիվ։

Այսօր Ս. Էջմիածինն ու հետևաբար Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին բախտավորված են Շինարար Կաթողիկոսով մը։ Եվ շինարար ըսել, հավասար է իմաստուն, կենսունակ, գործունյա, հեղինակավոր ըսելու, ինչպես մեր այն երանաշնորհ հայրապետները, որոնք Ս. Լուսավորչի օրերեն մինչև մեր օրերը՝ Հայաստանյայց Եկեղեցվո փառքն ու պայծառությունը հոյակերտեցին ապառաժյա անխախտ հիմերու վրա, որպես հավատք և ապրում, որպես խորհուրդ և կյանք, որպես անջնջելի իրականություն և հավերժական խորհրդանշան։

Նկարագիրը կներկայացնե մարդը և մարդուն գործին մեջն է որ կհայտնաբերվի ճշմարիտ և անխարդախ նկարագիրը։

Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ամենայն Հայոց Հայրապետին նկարագիրը Իր շինարար հանճարին մեջ կուրվագծվի և մենք՝ ղինք դիտելով Իր ջանքերուն ու գործին ընդմեջեն, Իր շնորհափայլ անձին մեջ կտեսնենք բազմազան արժանիքներու և առաքինությանց ամբողջության մը հոգեվարյալ ու դրավիչ ներդաշնակությունը։

Իր գահակալության ընդամենը երեք տարիներն իսկ բավական եղան, որպեսզի փայլուն գործունեության մը դրական արդյունքը գրավականը հանդիսանա քաջ և հիշատակելի իրականացումներու ակնկալության և հավատքին։

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

(Կահիրե, «ԱՐԵՎ» օրաթերթ, 11 հոկտեմբերի 1958 թ., № 12 110)

ՎԵՀԱՓԱՌԻՆ ՀՈԲԵԼՅԱՆԸ

Հայ Եկեղեցիին համար ցնծառիթ տոնախմբության նշանակելի օրեր են այս և հաջորդ կիրակիները։ Էջմիածնին, սկսյալ, Հայաստանի և արտասահմանի թեմերուն մեջ կկատարվին հոբելյանական պաշտամունքներ ու հանդեսներ, Ամենայն Հայոց Հայրապետ Վազգեն Ա Վեհափառ Կաթողիկոսի ծննդյան 50-րդ և գահակալության 3-րդ տարեդարձներուն կրկնակ առիթներով։ «Ուրախ լեր, Սուրբ Եկեղեցի» շարականին քաղցրալուր մեղեդիները քիչ անգամ այնքան ինքնաբուխ շնորհակալություն ու խորունկ հրճվանք կարտահայտեն, որքան պիտի արձագանքեն այդ օրերուն, անցյալ դարերու խունկով, հավատքով ու զոհաբերությամբ նվիրագործված և ներկա վերածնունդի լույսով ու տեսիլքով պայծառացած կամարակապ գմբեթներու տակ և խորհրդաշուք խորաններու վրա։

...Բայց, «Ուրախ լեր, Սուրբ Եկեղեցի», Որովհետև անփոփոխակ նահանջի, վհատության ու փլուզումի այդ միջոցին՝ Հայ Եկեղեցիին շնորհվեցավ ունենալ Գահակալ մը Իր Մայր Աթոռին վրա, որ Իր անձնական հմայքով, ներշնչված հարաճուն հավատքով ու վստահությամբ և վերականգնումի հրաշալի իրագործումներով՝ ընկրկումը փոխակերպեց առաջխաղացքի, անիշխանությունը փոխարինեց օրենքով ու հեզինակությամբ, անկումը շրջեց բարձրացումի։

Վեհափառին անձին ու նվիրական պաշտոնին մեջ, ուրեմն, հայ ժողովուրդը այդ դարձակետի հանգրվանն է, որ կտոնախմբե, Անոր ծննդյան 50-րդ և գահակալության 3-րդ տարեդարձներուն առթիվ։ Եվ արտահայտված հպարտությունը, հրճվանքն ու խանդավառությունը չեն սահմանափակվիր նշված ժամանակներու կարճ տարողությամբ։ Հիսուն տարին հասուն կյանքի սկիզբ մըն է դեռ։ Եվ երեք տարվան շրջան մը Հայրապետական Աթոռին վրա՝ հազիվ ծրագրումի պատեհությունը պիտի տար նույնիսկ ձեռներեց Գահակալի մը։

Արտակարգ իրողությունը Վեհափառ Վազգեն Ա Կաթողիկոսի ընտրության ու գործունեության մեջ՝ իրագործված արդյունքի բացառիկ հանգամանքն է,— անոր հոգեկան բովանդակության ու ֆիզիկական ծավալին նշանակելի մեծությունն է։ Մասնավոր ուրախության պատճառ է, անկասկած, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսը երիտասարդ տարիքով, անսպառ եռանդով, հանդուգն

տեսիլքով ու առաքելաշնորհ իմաստությամբ օժտված Հայրապետ մըն է։ Եվ Ան կրնա ոչ միայն հղանալ, ձգտիլ ու ծրագրել որևէ եկեղեցական բարեշրջում կամ վերանորոգում, այլ, ինչ որ անհունորեն ավելի կենսական է՝ կրնա հետապնդել ու գործադրել դանոնք հառաջիկա տասնամյակներուն։

Իսկ տարակույս չկա Հայ Եկեղեցվո ոգեղեն, իմացական ու ֆիզիկական վերականգնումի Իր ձեռնարկներուն իրականացման մասին։ Անհերքելի, սրտապնդիչ ապացույցը՝ անցյալ երեք տարիներու կարճ միջոցին արդեն արձանագրված հսկա նվաճումներն են։ Ուրացության ու հերձվածի ողբասաց բուերը կրնան շարունակել ավիր ու ամայություն տեսնելացող իրենց մահաշուք վայունները։

Մինչ ակնածանքով, երախտագետ սիրով ու հիացումով հայ ժողովուրդը իր գնահատանքն ու շնորհակալությունը կհայտնե այն խոշոր արդյունքներուն համար, որոնք արդեն մարմնացեր են Վեհափառ Վազգեն Ա Հայրապետի անխոնջ ջանքերուն, պայծառ իմաստության և Հայ Եկեղեցվո հոգևոր ու աղդային առաքելության անսասան հավատքին շնորհիվ, երեք խռովահույզ տարիներու սահմանափակ շրջանին։

Կարելի չէ՝ վերաբացված եկեղեցիներու, աճող հոգևորականներու և բարելավված տնտեսական երևմուտքի վիճակագրական թիվերով ճանչնալ ու դնահատել ամբողջական արժեքն ու խորությունը թափված արտակարգ ճիգերուն և շահված վիթխարի իրագործումներուն։ Ոչ իսկ բանավոր է ու արդար, Վեհափառին հետ անձնական հանդիպումներե ստացված, Անոր հմայիչ անհատականության հղոր ու մնայուն ներգործումին տակ ամփոփել, սեղմել Անոր աշխատանքին ու նվիրումին ահագին վաստակը։ Անհրաժեշտ է ավելի համապարփակ, առարկայական դատումով մը անդրադառնալ Վեհափառ Վազգեն Ա Կաթողիկոսի եռամյա գործունեության, կարենալ լիապես ըմբռնելու արդյունքին հսկա տարողությունը և դնահատելու համար հոբելյանին հեռահաս նշանակությունը։

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

(Բոստոն, «ՊԱՅՔԱՐ» օրաթերթ, 3 նոյեմբերի 1958 թ., № 232)

ՎԱՍՏԱԿԻՆ ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ

....Վեհափառ Հայրապետը երիտասարդական սրբազան խանդով և գերազանց, բազմակողմանի զարգացումի մը լուսավոր շնորհներով փարեցավ Հայ Եկեղեցիին ստեղծարար, վերացնող ու եղբայրացնող առաքելության հետապնդումին։ Անցյալ դարերու արհավիրքներուն, խավարին ու փլուզումներուն դեմ՝ լուսաշող փարոսի և վերապրումի ամրոցի նման կանգնած էր Ս. Էջմիածինը։

Եվ Ան դարձյալ պետք էր կառուցաներ Իր ոգեղեն պարիսպները, վերըստին պետք է բոցավառեր Իր հավատքի խարույկը, և կրկին պետք էր վերականգներ իրրև հոգեկան ու մտավորական հրեղեն առանցք մը, որուն շուրջ հարազատ միությամբ համախմբվեր անցյալի փառքերին ոգեշնչվող ու անկումներեն տվյալող և ապագայի տեսիլքով զրահված ու մաքառող հայությունը։

Այդ ահարկու լուծին, այդ առաքելական կոչումին փարեցավ Վեհափառ Վազգեն Ա Հայրապետը, Իր դահակալության օրեն սկսելով, Իր անձին մեջ ներդաշնակ ընդելուզումով համադրված էին բյուրեղացած հավատքը Հայ Եկեղեցվո վերանորոգիչ դերին մասին և վարչական իմաստությունը, անսահման ու խանդակաթ սերը հայ ժողովուրդի զավակներուն հանդեպ և անհուն ներողամտությունը դեպի ակամա սայթաքողներն ու կամավոր մոլորածները, սրտառուչ պաշտամունքը Հայ Եկեղեցիի շքեղ ժառանգության և հայոց ազգային հանճարի ու ոգիի հոյակերտ արժեքներուն համար և անձնուրաց նվիրումը անոնց պահպանումին ու վերածաղկումին ընծայված։

Իր այդ արտակարգ հատկանիշներուն ու բացառիկ առաքինությանց շնորհիվ էր, որ Վեհափառ Վազգեն Ա Կաթողիկոս հաջողեցավ դրավել համակրանքն ու վստահությունը Հայաստանի և Խորհրդային կառավարությանց և հիացումն ու սերը հայ ժողովուրդին։ Եվ ադոնց բնական պտուղներ եղան բոլոր հոյակապ իրագործումները։

Էջմիածնի Տաճարին վերանորոգումը և Ճեմարանի ընդլայնումը, արդիական նոր տպարանի հաստատումը և մտավորական հոգևորականներու պատրաստությունը, հին վանքերու վերականգնումը և եկեղեցիներու վերաբացումը, Անդրկովկասյան նախկին թեմերու վերակազմումը և նորահաս բայց արժանավոր առաջնորդներու նշանակումը,— բոլորը անժխտելի ապացույցներն են Հայ Եկեղեցիի ոգեկան, մտավորական- ու

ֆիզիկական վերանորոգման և լուսեղեն վկաները Ամենայն Հայոց շնորհազարդ Հայրապետին հսկայական վաստակին, Իր գահակալության երեք տարիներու կարճ միջոցին։ Ան սիրազեղ սիրտ մը, տեսլապաշտ հոգի մը, իմաստուն գլուխ մը և անձնուրաց ու ճշմարտախույզ Հովվապետ մըն է, և թող երկար բարախե Ան, թող երկար սավառնի ու առաջնորդե Լուսավորչի փառքի ու զոհաբերության Գահին վրայեն։

ԵՄԲԱԳՐԱԿԱՆ

(Բոստոն, «ՊԱՅՔԱՐ» օրաթերթ, 4 հոկտեմբերի 1958 թ., № 233)

ԽՈՍՔ ՈՐԴԻԱԿԱՆ

.... Երեք շատ կարճ տարիներու դեպքերը եկան անհերքելիորեն ապացուցանելու, թե հայ ժողովուրդը սխալած չէր իր ընտրության մեջ, թե ան Հայաստանյայց Եկեղեցվո ճակատագիրը վստահած էր իր այն զավակին, որ պիտի հավասարեր իր մեծագործ ու շինող նախորդներուն, Իր հանճարեղ մտքին հղացումներովն ու մեծամեծ իրագործումներովը։

Ս. Էջմիածին նոր կյանք ու ավյուն ստացավ բարեջան ու բարեխնամ Հայրապետին առաջնորդության ներքև։

.... Հոգևոր ճշմարտություններու, հայրենատիրական տաք զգացումներու և մարդասիրական վսեմ գաղափարականներու գանձարաններ են Վեհափառ Հայրապետին սրբատառ կոնդակները, գրական գոհարներ, որոնցմե Ան լույս և հույս, հավատք ու սեր հոսեցուցած է հայ հոգիներե ներս և մտրակած Իր ցանուցիր զավակները զոհաբերության և ծառայության՝ Հայրենիքի և Եկեղեցիի վերելքին ու պայծառացումին ի խնդիր։

Վեհափառ Հայրապետը Իր գործունեությունը շպարփակեց Ս. Էջմիածնի պարիսպին ետև։ Քայլ ու կորովի Հովիվը Իր հովվապետական այցելություններով անսահման խանդավառություն ստեղծեց Իր անձին հմայքովը և պերճիմաստ խոսքին զորությունովը։ Եվ ասիկա Մոսկվայեն մինչև Վրաստան, Ադրբեջան ու Արարատյան դաշտ, մինչև Անթիլիաս, Եգիպտոս, Իտալիա, Ֆրանսա և Անգլիա։ Միայն օտարին ծախված ազգադավներն ու հավատուրացները փրենց ապերասան, անոպա և անուղղա դիրքավորումով և դրության ուրացումով տխրեցուցին Վեհափառ Հայրապետի հոգին, և ի վերջո արժանացան Անոր արդար ցասումին ու նզովքին, իբրև Հայ Եկեղեցվո միասնականությունը ամբարիշտ հավակնոտությամբ և անխղճորեն քանդել փորձող թշվառականներ։

Սփյուռքի հայությունը մասնավորապես՝ երախտագիտական ջերմ զգացումներ և անխարդախ սեր կտածե հանդեպ իր Վեհափառ Հայրապետին, այն սքանչելի իրողության համար, որ Անոր ջանքերուն շնորհիվ այսօր կրնա իրեն ուխտավոր այցելել Սովետական Հայաստան և Ս. Էջմիածին, հոն իր հայրենաբաղձ հոգին կենսանորոգելու, ազատ Հայրենի հողեն ուժ, լազվարթ երկինքեն ցոլք և Ս. Էջմիածնի Տաճարեն տեսիլք քաղելու և ներշնչվելու, իբրև իր երազներուն փրկանացումը, երկար տարիներով օտար երկինքներու տակ պանդուխտի տրտում կյանքը ապրելե վերջ։

Համայն հայ ժողովուրդը ավելի քան երբեք համոզված է այժմ, որ լուսապայծառ առավոտ մը ծագեցավ իրեն համար, երբ Վազգեն Ա երեք տարի առաջ բազմեցավ Ս. Էջմիածնի թափուր Գահին վրա։ Նախախնամական անիմանալի և պատմական մեծ դեպք մը, որուն համար շնորհապարտ է հայ ժողովուրդը ի խորոց սրտի, և որ այս փոտակցությամբ կհայտնե իր որդիական խորունկ սերն ու ակնածանքը իր բարի ու արի Հովվապետին և մաղթանքը արևշատության, որ դեռ երկար հովվե Իր հոտը, անոր բաշխելով Իր կյանքեն հորդող բարիքները։

(Ֆրեզնո, «ՆՈՐ ՕՐ», 30 սեպտեմբերի 1958 թ., № 79)

ՀՈՎՎԱՊԵՏԸ

«Վազգէն Սառայ Յիսուսի Քրիստոսի, ողորմութեամբն Աստուծոյ և կամօքն Ազգիս...»։

Եվ մեծ եղավ ողորմությունն Աստուծո, երբ տվավ մեզ Հովվապետ քաջ և իմաստուն, հովվելու Իր բանավոր հոտը ցրված ի սփյուռս աշխարհի։ Եվ իբրև ճշմարիտ Հովիվ, առաջին օրեն Նորին Ս. Օծության ջանքը եղավ, որքան որ կարելի էր, ճանչնալ Իր հոտն ու անոր կարիքները։

.... Եվ բոլոր անոնք, որոնք բախտը ունեցան անձնապես ճանչնալու մեր Վեհափառ Հայրապետը, բարձրաստիճան եկեղեցականներեն մինչև խոնարհ զավակը Հայ Եկեղեցիին ու Ազգին, պահեցին իրենց սրտին ու հոգիին մեջ տպավորությունը անձի մը, որ մեծ է հոգիով, ներշնչումով և նվիրումով։ Առաջին օրեն Իր ձայնը լսելի ըլլալ Իր սրբատառ կոնդակներով՝ ուղղված հոգևորական դասուն, գաղթաշխարհի մեր հայության ու երիտասարդության։ Կճանչնանք Իր ձայնը։ Թուրքիո Հայոց ամենապատիվ պատրիարքը, Տ. Գարեգին արքեպիսկոպոս Խաչատուրյան, խորհրդածելով հոգևորականության ուղղված հայրապետական կոնդակին մասին, կըսե. «Հովվապետ մըն է, որ ունի սրինգ և փող, որոնցմով լսելի կընե Իր դաշն ձայնն ու զգաստացուցիչ սաստը Իր հովվակիցներուն, կատարյալ գիտակցությամբ Իր պաշտոնին ծանր պատասխանատվության»։ Ու գիտնական պատրիարքը Ենորհալիի «Ընդհանրական»-են շունչ մը կտեսնե այդ կոնդակին մեջ։

Երուսաղեմի հայոց ընտրյալ պատրիարքը, ամենապատիվ Տ. Տիրան արքեպիսկոպոս Ներսոյան կըսե. «Մեր ուրախության պատճառներեն մեկն ալ այն է, որ մեր Հայրապետը իմաստուն և խոր հավատքով և սուրբ նախանձախնդրությամբ լի քրիստոնյա Հովվապետ մըն է, զարգացած, խանդավառ, Ազգին և Եկեղեցիին հոգևոր վերելքին նկատմամբ լավատես։ Մեր Ազգը շատ բախտավոր պետք է զգա ինքզինքը, որ Աստված հարույց այս ճգնաժամային օրերուն Վազգեն Կաթողիկոսի պես անձ մը Ս. Լուսավորչի Աթոռին համար»։

.... Իրև Հովվապետ և մարմնացյալ Էջմիածին ու Մայր Աթոռ, Նորին Ս. Օծություն Վազգեն Ա-ի սիրան ու հոգին կխայտա Հայ Ազգին ու Եկեղեցիին դրական այս իրագործումներեն։ Արևոտ ու լավատես մարդը միայն կրնա կյանք, ուժ ու խանդավառություն ստեղծել իր շուրջը։ Մեզք որ սակայն Հայ Եկեղեցվո մարմնույն վրա լճացած արյան պես սեցած ու ընդարմացած անդամ մը ունեցանք։ Մեր բոլորին ազոթքն է, որ հայու այդ արյունը կակուղնա ու դարձյալ շրջագայի ոչ միայն որպեսզի բուժվի այդ անդամը, այլ Հայաստանյայց Եկեղեցին վերագտնե իր առողջությունը իր ամբողջության մեջ, ու երբ սեղանի նստինք քույր եկեղեցիներու հետ, Ս. Գրիգոր Լուսավորչի փառավոր Եկեղեցին իբրև հաշմանդամ Եկեղեցի դուրը չշարժե օտարներուն։ Ու ինչպես որ Քրիստոս իրեն դիմող հիվանդները կբժշկե հրամայելով, որ չար ոգիները դուրս ելլեն անոնց մեջեն, կաղոթենք, որ Միածինը անդամ մը ևս իջնե ու Իր ձեռքի մուրճով խորտակե սանդարամետը մեր հոգիներուն և վերակառուցանե բյուրավոր հայ նահատակներու արյունով սրբացած Հայաստանյայց Եկեղեցվո միությունը՝ իբրև մի հոտ և մի հովիվ։

Աստված շնորհեց Ազգիս Հայոց Հովվապետ քաջ և իմաստուն, և երեք տարիներ ետք, երբ կտոնախմբենք այդ օրհնյալ տարեդարձը Նորին օծման և գահակալության, երևսխտապարտ սրտերե կբխի Հայրապետական մաղթերգը իբրև «Հոսանք ընդ Աստուծոյ»։

«Ձերկարուրիւն կենաց
Հօր մեր ասպուածազգեաց,
Ենորհեա պետին մեր հարց,
Որ զմեզ հովուէ»։

ԱՌՆԱԿ ԵՐԵՑ

(Նյու-Յորք, «ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ», պաշտոնաթերթ Ամերիկայի հայոց առաջնորդարանի, 1958 թ. նոյեմբեր, № 10)

ԴԱՍՏԻԱՐԱԿԸ ՎԵՀԱՓԱՌ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄԵՋ

.... Վեհափառը, որ ահա Իր կյանքի երկրորդ հինգամյակը կթևակոխե, տիրելի է ամենուս, Իր շատ մը ձիրքերով և շնորհներով։ Ան բարետեսիլ է և բարեկիրթ, շնորհալի հյուրընկալ է և բեմախոս, հեզահամբույր և կենցաղագետ։ Սակայն ինձ համար այս բոլորեն վեր կա Անոր նվիրյալ դաստիարակի հանգամանքը։ Ուսուցչի և դաստիարակի կրկնակ դերերը, որոնք Իր կոչումին առաջնորդած են զԱյն, աշխարհական պր. Կարապետ Պալճյանի պաշտոնավարության օրերեն սկսյալ իրենց ծաղկումը կգտնեն տհավասիկ Անոր հայրապետական դիրքին մեջ։ Ան բոլորիս— ըսել կուզեմ հայերուս—դաստիարակն է մեծին, պզտիկին, աշխարհականին թե սկեպտիկին, անուսին թե համալսարանականին։

Դաստիարակը չէ այն մարդը, որ ունի լոկ ակադեմիական տիտղոսներու պաշար մը, կամ հմտություն մասնագիտական, և որ սակայն զուրկ է անկեղծութենե, բարոյական ամուր հիմունքե, նկարագրե և հավատքե։ Թերի դաստիարակներ, բախտի բերումով պատասխանատու դիրքերու տիրացած, աղիտաբեր ազդեցություն գործած են մեր արդի եկեղեցական իրականության մեջ։

Վկա Անթիլիասի և Երուսաղեմի ժառանգավորաց վարժարանները հետ երկրորդ համաշխարհային պատերազմի տասնամյակին։

Վազգեն Կաթողիկոս Կիլանդիսանա մեր մտքին որպես դաստիարակ մը, որ ունի ոչ միայն հմայք, անձնական հրապույր, հապա նաև տեսիլք, և անձնական օրինակի հզոր ներգործություն։ Ջայն ճանչցող պատանին պիտի անվարան ըսեր ինքն իրեն. «Վեհափառը իմ մտատիպարս է»։

Իբրև դաստիարակ Վեհափառը կհայտնաբերեն մտավորականի կշռված խառնվածք։ Ան ծեքծեքում բանաստեղծը կամ հռետորը չէ, ոչ ալ խստադեմ գիտնականը, Ան բանաստեղծ գիտնական է, արվեստագետ մտավորական։ Ան կրնա հասարակաց գետին գտնել թե՛ երաժշտին, թե՛ նկարչին և թե՛ իմաստասերին հետ։ Ահա թե ինչու զԱյն խանդավառ կերպով դիմավորեցին բոլոր տեսակի հայ ուսանողներ և արվեստագետներ, 1956-ի գարնան Արևմտյան Եվրոպա և Միրանան—Եգիպտոս Իր այցելության առթիվ։ Ան գտած էր հայ ուսանողության սրտին ու մտքին լարը, և քնքշորեն թրթռացուց զայն, հայրենասիրության Իր հորդորներով։

.... Վեհափառը ի պաշտոնե հաճախ հիշարդրե կոնդակներ ուղղված անհատներու կամ կազմակերպությանց։ Իբր ոգի և իբր ոճ Վազգեն Կաթողիկոսի գրիչեն կաթած գոհար մըն է 1957 հունվարի 14-ին գրված դաստիարակիչ կոնդակը, ուղղված Հայաստանյայց Եկեղեցվո հոգևորական դասուն, որուն մեջ քաղցր Հոր մը բառերով և Աստվածաշունչեն պատշաճ մեջբերումներով կազդարարե հեռու մնալ արծաթասիրության, նախանձի և փառամոլության սատանեն։ Այս կոնդակի մեջ լուռ և տրտում հանգիմանություն մը կա մեր եկեղեցական ներկա քառասային կացության պատասխանատու մեծ ու պզտիկ կարգ մը սքեմավորներու՝ արքեպիսկոպոսե սկսյալ մինչև քահանա և սարկավագ, որոնք աշխարհիկ հոգերու անձնատուր, շրթնապաշտության առարկա կընեն զԱստված։ Վեհափառ Տ. Տ. Վազգեն Կաթողիկոս՝ դաստիարակը, չէր կրնար անտեսել իրենց կոչումին ներհակ ձգտումներու դերի այս մարդիկը և անոնց լուղղել բարի սաստ մը։

Սերմնացանին առակը պերճախոս է, սերմերեն ոմանք քարքարոտ հողի, ոմանք փուշերու մեջ, և քիչեր ալ «լերկիր բարւոք» կիյնան։ Սերմնացանը, որ այս պարագային մեր սիրելի դաստիարակ Վեհափառ Տ. Տ. Վազգեն Կաթողիկոսն է, պարտք կհամարե Իրեն տրված սերմերը ցանել։ «Բարւոք երկիրս»-ը Անոր հայթայթել մեր՝ հայորդիներուս պարտքն է։ Ու տայր Աստված, որ կարենայինք ստեղծել միջոցները, որ Հայրապետին ցանած սերմերը վերածվեին ատոք հասկերու։ Այս պիտի ըլլար մեր լավագույն նվերը Նորին Ս. Օծության, Անոր ծննդյան տարեդարձին առիթով։

ԱՐՏԵՆ ՔԱՀԱՆԱ ԱՇՃՅԱՆ

(Նյու-Յորք, «ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ», պաշտոնաթերթ Ամերիկայի Հայոց առաջնորդարանի, 1958 թ. նոյեմբեր, № 10)

ՔԱՐՈԶԻՉԸ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՄԵՋ

....Մեծագույն շնորհն ու առաքինությունը Վեհափառ Հայրապետի քարոզներուն այն իրողությունն է, թե Իր բնաբանը և նյութը, ինչպես նաև քարոզին էությունը կրխին Ս. Գրքեն։ Քարոզիչ Հայրապետը լավ գիտե, թե հոգևոր քարոզությանց անսպառ ու շքեղ աղբյուրն է Աստվածաշունչ Մատյանը։ Ան կընտրե Իր նյութերը Ս. Գրքեն, որովհետև հոն ամփոփված է Աստուծո ինքնահայտնության վսեմ երևույթներու և իրողությանց ներշնչից փաղանգը։ ....Վեհափառ Հայրապետը լավ գիտե պարունակությունը Աստվածաշունչին և Իր մեջբերումները Ս. Մատյանեն կհարմարցնե Իր խոսքերուն և ապրած պարագաներուն հետ այնպիսի ճարտարությամբ, որ մարդ կտարվի մտածելու մոդաիկներու կատարյալ ձևերուն և պատկերին մասին։

Ուրիշ հատկություն մը Վեհափառի քարոզներուն կկազմե Իր պերճ ու շքեղ արտահայտությանց կերպը։ Նա ոչ միայն ճշմարիտը և հավիտենական ճշմարտությունը կրնա տալ ու թարգմանել Իր ունկնդիրներուն, այլ նաև ունի շնորհքը բանաստեղծական թռիչքի։ Եվ երբ նշմարիտն ու գեղեցիկն այսպես կմիանան իրարու, կարտադրեն խորքով ու հիմով բարին և այս երեքին միացումը կարող է հուզել, սրտեր, ներշնչել հոգիներ, հրահրել մտքեր ու բանալ զանոնք դեպի արևը հավիտենական ճշմարիտին։ Ու Հայրապետը մեր պերճախոս կարող է ընել դայն։ Վկա են ահա Իր քարոզներուն ձգած տպավորությունները, որոնց նկարագրությունները կարդացած ենք։

....Հայրապետին քարոզները տպավորիչ են, որովհետև, ամեն բանե ավելի, անոնք անկեղծ ապրումներու հարազատ արտահայտություններ են։ Քարոզիչ մը կրնա դպչիլ մտքերուն ու հոգիներուն իր ունկնդիրներուն, երբ իր միտքն ու հոգին կդպչվին Աստուծո

կողմեն։ Լավ քարոզիչը կրնա իր անձը լավապես դարձնել գործիք ու միջոց Աստուծո ձեռքին մեջ՝ արտահայտելու և մեկնաբանելու համար միայն Իր կամքը։ Քարոզիչ Վեհափառին խոսքերեն ու հուզումներեն դյուրին է տեսնել Աստուծո մարդն Իր մեջ։ Ան ինքզինք զրած է Աստուծո ձեռքին մեջ և Աստված Իր Աչը տված է Իրեն։ Վեհափառին հոգևոր կյանքը շատ հատկանշականորեն կցոլա Իր կյանքին ու գործերուն մեջ։ Մենք առդեն կարդացած ենք հավաստումները զինքը մոտեն ճանչցողներու, որոնք անվարան և անզուսպ հուզումով արտահայտած են իրենց արրշռանքը լուսատիպ ու մարգարեատիպ անձի մը ներկայությանը մեջ ըլլալու։

Հայրապետին հզոր հավատքը և լայն լավատեսությունը շարունակ ի հայտ կուգան Իր պատգամներուն մեջ։ Քանիցս գոչած է նման երեելի բանաստեղծին՝ «Ով ճշմարիտ հոգի ունի հայկական՝ ան կտեսնե լույս այսօրը և արևը գալիք պայծառ օրերուն»։

.... Ան ըլլալով հանդերձ տեղյակ մեր ժողովուրդի կարգ մը ժխտական հատկությանց և ներկայի բացասական պայմաններուն, չի դադրիր խիզախորեն և իմաստությամբ շարունակելի Իր լավատեսությունը, որ կբխի Իր լայնատեսությենեն և իրատեսությենեն, ու մանավանդ Իր դանգվածային հավատքեն։

.... Ան իբրև Հովիվ քաջ՝ մտերիմ գիտություն ունի Իր ժողովուրդի հույզերուն և հույսերուն, երազներուն և հավատքին, և առողջ լավատեսությամբ ու հայրաբար անոնց կներկայացնե վիճակը Հայ եկեղեցիին։ Իր լայնագույն և ճշմարիտ պատկերով, որպեսզի ամեն ոք, ամեն մեկ մասնիկը այս փառավոր եկեղեցիին անդրադառնա իր անհատական պարտականության՝ մշակելու համար իր ուրույն հոգևոր կյանքը սկզբունքով Ավետարանին և որինակով մեր Փրկչին։ Որովհետև Ան քաջ գիտե, թե եկեղեցիին ու Ազգին փրկությունը կիրականանա միայն զայն կազմող անհատներու փրկության համար ըրած անկեղծ ջանքով....»։

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՐԿԱՎԱԳ ԴԱՍՊԱՐՅԱՆ

(Նյու-Յորք, «ՀԱՅԱՍՏԱՆՅԱՑ ԵԿԵՂԵՑԻ», պաշտոնաթերթ Ամերիկայի հայոց առաջնորդարանի, 1958 թ. նոյեմբեր, № 10)։

ՎԵՀԱՓԱՌ ՀՈԲԵԼՅԱՐԸ

Ամեն ճշմարիտ հայ, աշխարհի ո՛ր ճանապարհին վրա ալ կանգնած ըլլա ան, անպատմելի հրճվանքով և արդար հպարտության զգացումներով լեցված է այս օրերուն՝ Ս. Էջմիածնեն եկող բերկրարիթ լուրերուն համար, որոնցմե նորագույնը Ամենայն Հայոց Հայրապետին՝ Վազգեն Ա-ի ծննդյան 50-րդ և գահակալության 3-րդ տարեդարձի հոբելյանական մեծաշուք հանդիսությունն էր։ Ու ամեն տեղ, հայ եկեղեցիները զգեցան տոնական օրերու կերպարանք և անոնց խնկավետ կամարներուն տակ հնչեցին մեր քաղցրալուր շարականները, խանդավառությամբ և պայծառ ապագայի հավատքով լեցնելով հայրենաբաղձ հայերու հոգիները։

Ուրիշ ժողովուրդներու նման, հայ ժողովուրդն ալ ունի պատմական, նվիրական վայրեր, որոնք անբաժանելիորեն կապված են մեր պատմության և մշակույթին, մտքին և հոգիին սլացքին հետ։ Հավերժական Արարատն ու Ս. Էջմիածինը կհանդիսանան մեր ազգային մեծագույն սրբությունները, մեր անցյալին անխաբ վկաներն ու հոգևոր միասնականության անեղծանելի խորհրդանշանները։ Տակավին՝ մեր երազին և իրականության, մեր հավատքին ու ազգային դիտակցության թանձրացյալ արտահայտություններն են անոնք, որոնց հառած են ակնարկները բոլոր հայ սիրունդներուն, ուր որ ալ նետած ըլլա զանոնք կյանքին հոլովույթը։ Եթե զանոնք վերցնենք հայոց սրտեն, ի՞նչ կմնա հոն... և ահա թե ինչու անկարելի է ստվեր ձգել Մայր Աթոռին վրա և նսեմացնել անոր արժանաբնտիր Գահակալին դարավոր հեղինակությունը։

Բախտավոր ու երջանիկ է մեր ժողովուրդը, որ Լուսավորչի Գահին վրա կբազմի Վազգեն Ա-ի նման երիտասարդ, զարդացած, խոհուն և հայրենասեր Հայրապետ մը, մանավանդ այս տխուր օրերուն, երբ Սփյուռքի մեջ մեր եկեղեցին կբոլորե տագնապալի շրջան մը, անդին, Հայրենի հողին վրա, Մայր Աթոռը կկերտե նոր վերածնունդ մը։ Արդարև, Վազգեն Ա-ը ոչ միայն արժանավոր ու խրճամիտ ժառանգորդն է Իր մեծ նախորդներուն ստեղծած հոգևոր, իմացական, մշակութային և ազգային բազմատարր հարստությանց, այլ զանոնք ճոխացնող և անոնց հավերժականությունը ապահովելու ձգտող առաքելաշնորհ Հովվապետ մը։ Հավատարիմ մնալով մեկտեղ մեր անցյալին, Ան խորապես կըմբռնե ներկային կենսական իմաստն ու Իր հեռահաս նայվածքը կսևեռե ապագային, որ պիտի գա անպայման և անոր հաստատ քայլերուն արձագանքը կլսվի արդեն, իբրև մեր անմխիթար երեկին՝ մղձավանջային գիշերվան հաջորդող ոսկեշառայլ լուսարացը։

Անցնող երեք տարիներուն, Վեհափառ Հայրապետը ձեռնարկեց համազգային չափանիշով մեծ ծրագիրներու. անոնց իրագործումն գալիք բարիքները պիտի ապրին դարերով, և արդեն իսկ շոշափելի իրականություն դարձած հառաջդիմությունները արժանի են «գրոց հիշատակութեան»։ Իր առաջին մտահոգությունը եղավ Մայր Աթոռի միաբանության վերակազմությունն ու վարչական դրության արդիականացումը։ Հոգևոր Ճեմարանը, երազը Դրանաշնորհ Գևորգ Ջ Մեծագործ Կաթողիկոսին, աճեցավ աշակերտներու թիվով, զորացավ ուսուցչական կազմով, և դարձավ ստեղծագործ աշխատանքի օջախ մը, ուրկե պիտի դուրս գան մեր Եկեղեցիին արի, հավատարիմ և հայրենասեր առաջնորդները։ Մայր Աթոռի պաշտոնաթերթը, «Էջմիածին», ճոխացավ իր բովանդակությամբ և մեծցավ ծավալով և տպաքանակով։ Ան իր կրոնական, պատմական, բանասիրական արժեքով ոչ միայն մեր Աթոռներուն լավագույն հրատարակությունն է ներկայիս՝ այլ՝ իր կոչումով՝ ոսկե կամուրջ մըն է Ամենայն Հայոց Հայրապետության և Սփյուռքի հայ զանգվածներուն միջև։ Ան կբերե մեզի Վեհափառ Հայրապետին սրբատառ կոնդակներն ու գեղահյուս քարոզները, որոնք արքունության, զգաստության և հավատարմության կոչերն են, պատմական իրավունքներու, դարավոր հեղինակությանց և ազգային սրբություններու անեղծ պահպանման հայրապետական հանդուգն ու արդար գրերը։ Կարդալով զանոնք՝ Իր մեջ կհաստատենք բյուրեղացված տարրեր մեր խորհրդավոր հայրապետներեն, տեսլավառ վարդապետներեն և արիասիրտ դրիչներու հայրենասիրական հայրքեն։ Իր գահակալության օրով սկսան վերակառուցման աշխատանքները մեր պատմական վանքերուն ու սրբավայրերուն և Էջմիածնի բարեզարդման, որոնց համար կըրցավ ապահովել նյութական միջոցներ զանազան թեմերե, ազգային բարերարներ և հայրենի կառավարութենեն։

....Տոնելով Վեհափառ Հայրապետին հոբելյանը, նույն ատեն տոնած կըլլանք հայ հոգին անմահությունը, հայ հավատքին անսասանությունն ու հայ մշակույթին կենսանորոգ ուժին փառքը։

Ա. Լ. ՓՈԼԱՏՅԱՆ

(Նյու-Յորք, «ՀՈՒՇԱՐԱՐ», պաշտոնաթերթ Հ. Բ. Ը. Միության Ամերիկայի Կենտրոնական ճանձնաժողովի, 15 հոկտեմբերի 1958 թ., № 20)

ՎԵՀԱՓԱՌ ՎԱԶԳԵՆ Ա ՊԱԼՃՅԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԻՐԵՎ ԳՐԱԳԵՏ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍ

.... Պատմական դերին և պաշտոնին բարձրության գիտակցությունը ունեցող անձնավորությունն մըն է Վազգեն Ա Կաթողիկոս, զուսպ, սակավախոս, փափկանկատ և ամեն ինչ հաշվող, նախատեսող ու բարյացակամությամբ առլցուն։

Իր այս խառնվածքը ես կտեսնեմ նաև Իր գրչին և խոսքին մեջ։ Անհատականություն մըն է Վազգեն Ա։ Գաղտնիք մը պարդած չեմ ըլլար, եթե ըսեմ, որ Իր կարողություններուն հետ՝ Իր ժամանակաշրջանի փափուկ դրությունն է, որ զինք դարձնել այսքան մեծ անհատականությամբ օժտված անձնավորություն մը։ Պահը բախտորոշ հանգամանք ունի և Վազգեն Ա-են կանկալվին հրաշքի նման արարքներ՝ ի շահ Հայ Հայրենիքին, Հայ Եկեղեցիին և ի բարօրություն հայրենի ժողովուրդին ու արտասահմանի պանդուխտ, աստանդական զանգվածներուն։

.... Ու եթե գրագետին և հանրային գործիչին հիմնական և առաջին առաքինությունն է անկեղծություն-արիությունը, ապա ուրեմն պիտի հաստատենք, որ իրեն դրող ի հրապարակախոս՝ Վազգեն Ա անվիճելի տիպար մըն է։

Այս արիությունը, կվկայեն հոգեբաններ, կծագի գիտակցությենե և պատասխանատվության զգացումե, ապա իրերուն ու գաղափարական լիակատար ըմբռնումեն, յուրացումեն։

.... Այս կարճ հատվածը իրավունք կուտա ինձի, որ Վազգեն Ա-ի մեջ տեսնեմ, անկեղծ և արի գրագետեն եաք, նաև առույգ ըմբռնողության տեր գեղագետը, որ արվեստին մեջ միայն կտեսնե անմահացումները, հավիտենական կենդանությունը, ճշմարտությունը և հարազատությունը, ըլլա ադիկա գիր ու գրականություն, ըլլա երգ, վրձին, քանդակ...

.... Իր պատգամները, իբրև քրիստոնեական հավատքի հսկա հրթիռներ, իրենց տեղը ունենալի եաք, իբրև ոգի և միաք, իբրև լեզու և ոճ, ճշմարիտ գոհարներ են։ Իսկապես, Վազգեն Ա մոլեռանդ ոգեպաշտ մը կթվի, ոգեպաշտ մը սակայն, որ ցեղին ու մարդկության աղնվական տրամադրություն-

ներու ոգին կուզե պարփակել իրատեսության և իրապաշտության մեջ։

Մեր գրագետները, մեծ մասամբ, ուտոպիստներ են։ Անցած է ռոմանտիզմի դարը. այժմ հավատքը հող է, հույսը՝ կենսատու ջուրը, սերը՝ արև ու ջերմություն, զգալի, շոշափելի, հաստատ, որպեսզի ծլին ու ծաղկին արգավանդ դաշտերը ու պտղատու ծառերը, որպեսզի երգեն թռչունները ու պարեն երիտասարդները։ Ոգեկանությունը իր իմաստով և դիմագիծով, անեղծ պահված իր հրաշագործությամբ՝ նյութեղենացնելու կարողությունն է, որ կգտնեմ ես Պալճյան Կաթողիկոսի պատգամներուն և կոնդակներուն, ուղերձներուն և քարոզներուն մեջ, գրական տեսակետեն։

Այս զեղեցիկ զոնդողումին (concrétion) և այս զմայլելի միաբանության (agrégation) հրամայականությունը կտարածվի Վազգեն Ա-ի հրապարակային ելույթներուն վրա ալ։ Այսպես, այդ իրատեսության զորությամբ է, որ Իր բերնին մեջ կլիշե թանձրության չեն փարիր, պարպելով բառերը իրենց կենսունակությենեն և իմաստեն։ Այդ իրատեսության զորությամբ է որ կստեղծվի, Իր շրթիներուն վրա, այն հաստատ հավասարակշռությունը, որ այս անգամ պայմանն է հրապարակախոսին։ Դուք իմացաք քարոզները և ուղերձները այս քաղաքին մեջ ևս։ Անոնցմե շատերը հանպատրաստից էին։ Ու մենք, որ ամեն ինչի քննադատական ոգիով և քննադատ միտքով մոտենալու պարտականությունն ենք վերցուցած, իզուր փնտռեցինք Ի verbe-ին մեջ՝ անվավեր բառ մը, նախադասություն մը (կաֆ), իզուր փնտռեցինք ներեռուն, տատանող շեշտ մը, դժպհի ելույթ մը... Իզուր...։

Անկեղծության, արիության և հավատքի նույն ենթահողը հոս ևս, որ կսնանե, կծալկեցնե, կարգասավորե և կպտղավորե անհատին մեջ— խոսող թե ունկնդիր— զեղեցիկ իրականություններն ու միշտ դեղեցիկ բայց կալի ձգտումները։

Տա՛ր երկինք, որ Վեհափառ Վազգեն Ա. Իր եկեղեցական և ազգային առաքելության կողքին, հայկական միասնականության իրագործման մեծ ձեռնարկին առընթեր, արտադրեր գրական առողջ ու վավերական երկեր, որոնց տարրերը՝ իրրև ոգի և նյութ՝ չեն պակսիր Իրեն։

Ըլլա պատմական Իր դերին, ըլլա այս ստեղծագործական աշխատանքին գեղեցկագույն կիրարկման ու արդյունավորման մաղթանքով է, որ կդիմավորեմ Վեհափառ Հոբելյարի հիսնամյակը և դահակալության հրրորդ տարեդարձը։

Հ. ԺԱՄԿՈՉՅԱՆ

(Կահիրե, «ԱՐԵՎ» օրաթերթ, 11 նոյեմբերի 1959 թ., № 12 110)

ՄԱՐԻ ԱԹՄԱՃՅԱՆ

ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵՂՐԱՄՈՄԸ

ՎԱՉԿԵՆ Ա
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

Էջմիածնի խորանեն, գրչի եղբայր մ'ինձ բերավ
Սա մեղրամոմը դեղին.
Ցայն վառեցի իրիկուն մը, լույսին դեմ իր սակավ
Երագելու անձկագին...:
— Մո՛մ, փոքրի՛կ մոմ, բնական տարրերե չես շինված դուն
Ինչպես մոմերն աշխարհի.
Քերթողներու, սուրբերու, գրչագրերու մշտարթուն
Աչքն ես որ մեղմ կարյունի...:
Որ կճալի ու կուլա, բայց շիթերեն ձեղակարած
Դիծ ու գույներ կծաղկին,
Թուշնազգիներ մանկու գան թևերն իրենց փոխ տված
Հայ տառերու ճրաշքին...:
Աչքերս հառած, խորասույզ, քու պլպլուն պատուլգին
Դեմ կմնամ զմայլած.
Կանցնին դարերն հոգիես, և արարքներն Հայ Ցեղին
Կուրվագծվին իմ դիմաց...:
Օ՜, քանի՜ հեղ մարեցար քամիներու դեմ դժխեմ
Վանդալ շունչին ավերող.
Միշտ զաղտնորեն վառեցին շուշան ձեռքեր քեզ՝ վսեմ
Մեր սուրբերուն դողն ի դող...:
Ու մերթ անոնք ձեթի տեղ իրենց սիրտը նետեցին,
Որպեսզի միտքը փայլի,
Եվ ճարակեց բոցերուն դեմ, ճավատքով անմեկին՝
Օրհնեցին փառքը լույսի...:
Ցոլացուցիր, փոքրի՛կ մոմ, գուցե անկյուն մը թափուր
Ուր Շնորհալին աղոթեց,
Ուր Միջին Դարը եկավ քերթողներով քաղցրալուր
Մեր Ոսկեդարը երկնեց...:
Անդաստանին մեջ ծաղկող, դուն կվառիս վերստին
Էջմիածնի խորանեն,
Ա՛լ ապառով, ա՛լ խաղաղ մրրիկներեն մաճածին,
Փարոսի պես լուսեղեն...:
Անտեսելով ա՛յլ ջանքեր, ա՛յլ կերոններ փայլփլուն,
Խորհրդանի՞շ իմ փոքրիկ,
Քեզ մատներուս մեջ սեղմած, ճակած ճակատս խոկուն
Քու տեսիլքիդ բացառիկ՝
Պիտի երթամ քեզ վառել Տաճարին մեջ սրբազուն...:

ՓԱՐԻԶ, 27 հոկտեմբեր 1958

ՍՈՒԴԱՆԱՀԱՅ ԳԱՂՈՒԹԸ ԱՅՍՕՐ

Սուդանահայ գաղութը իր պատմությունը կերտած է վերջին հիսնամյակին։ 1902 թվականեն սկսյալ հայեր սկսած են գաղթել Ափրիկեի կեդրոնը գտնվող երկիրը՝ Սուդան, և հոն կազմել գաղութ մը։ Սկզբնական թվականներուն Սուդան հաստատվող հայերու մեծամասնությունը եղած են արարկիրցիներ և կեսարացիներ։ Այս երկրին մեջ հայ գաղութը աճած է առաջին համաշխարհային պատերազմեն վերջ. այսօր սուդանահայ գաղութը իր մեջ կհաշվե մոտավորապես 800 հոգի, շուրջ 200 ընտանիքի վրա բաշխված։ Ընդհանուր այս թիվեն 635 հոգի կրնակին մայրաքաղաք Խարթումի և Օմդուրման քաղաքին մեջ, իսկ մնացյալ մասը կրնակի գյուղերուն մեջ։

ԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա) Սուդանահայ գաղութային ժողով.— *Սուդանահայ գաղութային ժողովը կբաղկանա յոթը հոգիներե, որոնք կընտրվին երեք տարին անգամ մը գաղութահայության կողմեն։ Ան իրավատերն է ազգային անշարժ և շարժուն կալվածներուն ու պատասխանատուն է պետության առջև՝ որպես ներկայացուցիչը սուդանահայ գաղութին։ Ժողովին կնախագահե օրվան հոգևոր հովիվը։ Սուդանահայ գաղութային ժողովի ներկայի անձնակազմը հետևյալն է. պր. պր. Գրիգոր Պոտուրյան՝ ատենապետ, Թորոս Պարսամյան՝ փոխ-ատենապետ, Տիգրան Հարությունյան՝ ատենադպիր, Միսակ Փափազյան՝ փոխ-ատենադպիր, Նազարեթ Օմյուրյան՝ դանձապահ, Լևոն Զուլաքյան՝ խորհրդական։*

Ըստ կանոնագրի, ժողովը ունի հետևյալ իրավասությունները. վերին հսկողություն սուդանահայ ազգային գործունեությանց և միություններու, հսկողություն գաղութի հանդարտության և համերաշխության վրա, ի պահանջել հարկին միջամտություն գաղութին մեջ որևէ ազգային գործունեության, քննարկում կտակային, ամուսնական և անձնական խնդիրներու։

Սուդանահայ գաղութային ժողովեն կբխին եկեղեցվո և դպրոցի հոգաբարձությունները. որոնք ենթակա են անոր տնօրինության։

Բ) Եկեղեցվո հոգաբարձություն.— *Եկեղեցական հոգաբարձությունը կնշանակվի գաղութային ժողովին կողմեն։ Ան կհսկե եկեղեցվո և գերեզմանատան գործառնությանց։ Ներկայի անձնակազմն է. պր. պր. Պարույր Կյումյուշյան՝ ատենապետ, Վաղինակ Լուսինյան՝ ատենադպիր, Հայկ Տեր-Պետրոսյան՝ դանձապահ, Սդվարդ Ընթապայյան՝ խորհրդական, Ավետիս Մարկոսյան՝ խորհրդական։*

Գ) Դպրոցի հոգաբարձություն.— *Դպրոցի հոգաբարձությունը ևս կնշանակվի գաղութային ժողովին կողմեն. ան կհսկե ազգային վարժարանի ուսումնական, վարչական և տնտեսական գործունեությանց վրա. ներկայի անձնակազմն է. պր. պր. Հայկ Պոտուրյան՝ ատենապետ, Գեորգ Պըլլքյան՝ ատենադպիր, Նշան Բարձիկյան՝ դանձապահ, Հակոբ Խաչիկյան՝ փոխ-դանձապահ, Եփրեմ Պենկյան՝ հաշվապահ։*

Դ) Ս. Գրիգոր Լուսավորիչ Եկեղեցի և Ս) Խարթումի ազգային վարժարան.— *Եկեղեցիին ու դպրոցին շենքերը միացած են առանձին բաժանումներով և հարմարություններով. հողն ու շենքը ազգային կալվածներ են. հողը, մոտավորապես 6 000 քառակուսի մետր, նվիրված է հայ գաղութին Սուդանի կառավարության կողմեն։ Եկեղեցիին ու դպրոցին շենքերը սկսած են շինվիլ 1953-ին և լրացած են 1956-ի վերջավորության։ Եկեղեցվո հիմնարկեքը կատարված է 1953-ին և օծումը՝ 1957-ին, ձեռամբ եգիպտահայոց առաջնորդ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Սիրունյանի, ի ներկայության զպտիներու երկու առաջնորդ արքեպիսկոպոսներուն, Անգլիկան եկեղեցվո առաջնորդին, ազատ եկեղեցիներու դանազան ներկայացուցիչներուն, իսլամական կրոնի պետերու ներկայացուցիչներուն, Սուդանի կառավարության ներքին գործոց նախարարության ներկայացուցչին և Խարթումի նահանգի կառավարչի ներկայացուցչին, անգլիական, ռուսական, հունական և իրաքյան դեսպաններու։*

եկեղեցվո և դպրոցի զույգ շենքերը կառուցվեցան գաղութի ազգայիններու կարևոր այակցությամբը և բարերարությամբը Սեֆերյան ընտանիքի՝ ի հիշատակ ողբացյալ Գրիգոր Սեֆերյանի։ Եկեղեցվո դռան վրա կա հետևյալ արձանագրությունը.

«Ողորմութեամբն Աստուծոյ կառուցաւ տաճարս տէրունական նուիրեալ յանուն Հօրն ճաւատոյ Հայաստանեայց Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին, ի մայրաքաղաքի աստ Սուտանի, ի Խարթում, ի վայելս Ազգին Հայոց, արդեամբ և ծախիւք բարեպաշտուն տիկին Զուարթի Սէֆէրեան և նաւազատի նորին Յակոբայ, Նարդուհւոյ և Եդուարդի, ի ճանգիստ հոգւոյ ամուսնոյն և Հօրն իւրեանց Գրիգորի Սէֆէրեան հանգուցելոյ, որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի։

Ի նայրապետութեան Ամենայն Հայոց Տ. Տ. Վազգենայ Ա Սրբազնագոյն Կաթողիկոսի, ի պատրիարքական տեղապահութեան Սրբոյ Երուսաղեմի Տ. Տիրանայ Սրբ. Աթոռ.ի, ի պատրիարքութեան Կ. Պոլսոյ Տ. Գարեգին Սրբ. Աթոռ.ի, յառաջնորդութեան հայոց Եգիպտոսի Տ. Մամբրէի Սրբ. Աթոռ.ի, յամի Տեառն 1957 և ի մերումս թուականութեան ՌՆԶ»։

Եկեղեցվո շենքը կառուցված է վայելուչ կերպով ու հայկական ոճով. ունի ամեն հարմարություն, զգեստներ, անոթներ և այլ կարասիներ։

Դպրոցի շենքը ունի սրահ մը, տեսչարան մը և չորս դասասրահներ։ Կրթական ծրագիրը բաժնված է մանկապարտեզի և նախակրթարանի բաժիններու։ Մանկապարտեզին մեջ կան երեք դասարաններ տասնմեկ աշակերտներով, իսկ նախակրթարանին մեջ՝ հինգ դասարաններ երեսուներեք աշակերտներով։ Դպրոցի ավագ ուսուցիչն է պր. Հովհաննես Եթենեգյան։ Ուսուցչական կազմը բաղկացած է չորս հոգիներե։

Վարժարանին մեջ կավանդվին հայերեն, արաբերեն և անգլիերեն լեզուները, թվաբանություն, հայոց պատմություն, կրոն, աշխարհագրություն, գիտություն և երգեցողություն։ Եկեղեցվո և դպրոցի համար անշարժ և եկամտաբեր կալվածներ չկան. հանգանակություններով կհակակշռվի անոնց բյուդջեն։

Եկեղեցվո և դպրոցի զույգ շենքերը արժած են 26 000 անգլիական ոսկի։

Զ) Հայկական ակումբ.— Հայկական ակումբը բակ մըն է իր շենքով, որ կծառայե գիշերային ժամանցի. ազգային կալված մըն է, զոր վարձած է ակումբը ազգային իշխանությունեն։ Ակումբը ունի իր վարչությունը հինգ հոգիներե բաղկացած. անդամներուն թիվն է 65։

է) Հայ երիտասարդաց միություն.— Այս միությունը հիմնված է 1940-ին։ Իր տրամադրության տակ ունի «Հրանտ» անունով մարզարան մը. հողը, տարածությամբ 16 000 քառակուսի մետր, նվիրված է միության կառավարության կողմե։ Մտադրված է այս հողին վրա կառուցանել նոր մարզադաշտ մը և շենք մը. ներկա մարզադաշտը և շենքը տարիներե ի վեր կծառայեն իրենց նպատակներուն որոշ բավարարությամբ։ Միության նպատակն է հավաքել երիտասարդությունը և անոր մեջ պահել հայկական ոգին, մարմնամարզության և մշակույթի ուղիներով։

Ը) Հայ բարեսեր տիկնանց միություն.— Միությունը հիմնված է 1952 թվականին. անդամներուն թիվն է 100. ունի իր վարչությունը. միության հավաքավայրն է «Հրանտ» մարզարանը։ Միության նպատակն է աշխատիլ եկեղեցվո բարեգործության համար, ըստ որում իրենց եկամուտին մեկ չորրորդը կհատկացնեն եկեղեցիին, նաև օգնել խեղճերուն, որոնց կհատկացվի եկամուտին կեսը. մնացյալ քառորդը կհատկացվի միության ծախքերուն։

Կոտակված և կոտակելի կալվածներու հարցը կխանդավառե ազգային իշխանությունը։ Սուդանահայ գաղութային ժողովին կողմե մասնավոր ջանքեր կտաբվին կոտակներ ապահովելու ուղղությամբ։

Պետական շրջանակներու և հարևանությանց հետ հարաբերությունները սիրտ են և համերաշխ։ Մինչև հայոց Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցիին կառուցումն ու օծումը, հովվական ու ծխական պարտականությունները սիրով հանձն առնվեցան Անգլիկան և Ղպտի եկեղեցիներուն կողմե։

Սուդանահայ գաղութին հովվական այցելություններ տված են հետևյալ հոգևորականները. ամենապատիվ Տ. Տիրան արքեպիսկոպոս Ներսոյան, Տ. Մամբրե արքեպիսկոպոս Միրունյան, Տ. Պարգև եպիսկոպոս Վրթանեսյան, Տ. Զավեն վարդապետ Արզումանյան, Տ. Խորեն քահանա Մելիք-Շահ, Տ. Հուսիկ քահանա Նշանյան և Տ. Պետրոս քահանա Ֆերեճյան։

ԶԱՎԵՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ



ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԺԸ ԴԱՐԻ ՌՈՒՍԱԿԱՆ ՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ ՄԵՋ*

Ի. Մ. ԻՎԱՆՈՎ

ԺԸ դարի 80-ական թվականների սկզբներին Կովկաս և ապա Հայաստան այցելեց ռուս ականավոր բնանկարիչ Միխայիլ Իվանովը։

Մ. Իվանովը ծնվել է 1748 թվականին Պետերբուրգում։ Ավարտել է Կերպարվեստների ճեմարանը, ապա կատարելագործվել է Փարիզում և Հռոմում։

Մ. Իվանովի նկարները այժմ պահվում են Լենինգրադի Պետական Ռուսական թանգարանում, մասամբ Մոսկվայի Պետական Տրետյակովյան պատկերասրահում, իսկ մի քանի նկար գտնվում է Երևանի Կերպարվեստների թանգարանում։

Նկարիչ Մ. Իվանովի Հայաստանի բնությանը նվիրված նշանավոր նկարներից են «Մեծ Հայքում», «Եկեղեցիների տեսարանը Մեծ Հայքում Արփաչայ գետի վրա», «Եկեղեցիների տեսարանը Արարատ լեռան ստորոտում», «Երևան քաղաքի տեսարանը», «Անտալի բերդի մնացորդները Լոռի գետի վրա», «Երևանի արվարձաններում» և այլն։

Մ. Իվանովի անունը կապված է բնանկարի՝ որպես ինքնուրույն ժանրի՝ ձևավորման և հաստատ սկզբնավորման ժամանակաշրջանի հետ։

Մ. Իվանովը շատ էր ճանապարհորդել, և դա շատ էր նպաստել նրա ստեղծագործական զարգացմանը։ Նրա բոլոր նշանակալից աշխատանքները, դրանց թվում նաև Կովկասյան բնանկարները, արդյունք են նկարչի անմիջական տպավորությունների և դիտումների։

Մ. Իվանովը սիրում էր աշխատել ջրաներկով, իսկ յուղաներկով՝ շատ քիչ։ «Եկեղեցիների տեսարանը Արարատ լեռան ստորոտում», և «Երևան քաղաքի տեսարանը» յուղաներկով են։

«Արարատյան եկեղեցիներ» մատիտանկարում պատկերված են Ս. Շողակաթի, Ս. Հռիփսիմեի և Ս. Գայանեի տաճարները, նաև Ս. Էջմիածնի Մայր Տաճարը։ Երկրորդ նկարը, առաջինի կրկնությունը ջրաներկով, կոչված է «Արարատյան երեք եկեղեցիների տեսարանը Մեծ Հայքում, 1783 թ.»։ Այժմ այդ նկարը գտնվում է Մոսկվայի Պետական Տրետյակովյան պատկերասրահում։

* Քաղված Կ. Գրիգորյանի ռուսերեն համանուն աշխատությունից։— ԽՄԲ.։

ԱՐԱՐԱՏՅԱՆ ԵՐԵՔ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՏԵՍԱՐԱՆԸ ՄԵԾ ՀԱՅՔՈՒՄ (Մ. Իվանով, 1789 թ.)

ՄԱՅՐ ԱՔՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՏԱՃԱՐԻ ՏԵՍԱՐԱՆԸ ԱՐԱՐԱՏ ԼԵՌԱՆ ՄՈՏ ԻՐ ՇՐՋԱԿԱՅՔՈՎ (Գ. Մերզեն, 1796 թ.)

2. ԴԱՎԻԹ ՍԵՐԳԵԵՎ

ԺԸ դարի 90-ական թվականներին Կովկաս այցելեց նաև ռուս նկարիչ Դավիթ Սերգեևը։ Նա թողել է Հայաստանին, Վրաստանին և Ադրբեջանին նվիրված լրանների աշխատանքներ։

Գ. Սերգեևը ժամանակակից էր Մ. Իվանովին։

Կովկասին նվիրված Գ. Սերգեևի նկարները մեզ չեն հասել։ Պահպանվել են նրանցից արված դրավյուրներ, որոնք մտել են Արտեմ Արարատյանցի գրքի մեջ։ Այդ նկարներն են «Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Տաճարի տեսարանը Արարատ լեռան մոտ՝ իր շրջակայքով», «Երևան քաղաքի տեսարանը Արարատ լեռան մոտ, Զանգու գետի վրա», «Թիֆլիս քաղաքի տեսարանը Կուր գետի մոտ» և այլ նկարներ։

«Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Տաճարի տեսարանը» իր բովանդակությամբ հիշեցնում է Մ. Իվանովի նկարը։ Այստեղ առաջին գծի վրա տեսնում ենք սայլը, գյուղացիների մի խումբ և աշխուժորեն զրուցող երկու վարդապետներ։ Էջմիածնի հնադարյան Տաճարը ռուս նկարիչների առանձին ուշադրությունն էր դրավում, որպես Հայաստանի արժանահիշատակ և գեղեցկագույն վայրերից մեկը։ Ռուս նկարիչների համար Ս. Էջմիածինը եղել է քրիստոնեական հնագույն երկրի խորհրդանիշը և կենդանի մարմնացումը։ Ահա թե ինչու այդ թեմային անդրադարձել է Մ. Իվանովի տաղանդավոր աշակերտներից մեկը՝ Մաքսիմ Վորոբևը, իսկ ԺԹ դարի 40-ական թվականներին ռուս նկարիչ Գ. Գագարինը նկարում է «Էջմիածին»-ը։

«Էջմիածնի տեսարանը» և «Երևանի տեսարանը»-ը Գ. Սերգեևը նկարել է բնանկարից 1796 թվականին։

Դժվար չէ նկատել մոտիվների որոշ ընդհանրություն Մ. Իվանովի և Գ. Սերգեևի Հայաստանին նվիրված նկարներում։ Այդ պետք է բացատրել թեմայի և մյուս կողմից ժամանակի էսթետիկական ճաշակի հաստատված սկզբունքների ընդհանրությամբ։

Մ. Իվանովը եղել է իր ժամանակի առաջնակարգ նկարիչը. նա անհամեմատ ավելի ինքնուրույն էր որպես ստեղծագործող, քան Գ. Սերգեևը, որը նույնպես մեծ ընդունակություններ է հանդես բերել, բայց չի կարողացել ազատվել իր ժամանակի շաբլոններից։

***

Մ. Իվանովն ու Գ. Սերգեևը ռուս նկարիչներից առաջիններն էին, որոնք այցելեցին Հայաստան, սիրեցին այդ հնագույն երկիրը և նկարեցին նրա արժանահիշատակ վայրերը։ Այս երկու նկարիչների՝ ԺԸ դարի 80-ական թվականների Հայաստանը պատկերող նկարները խոր և անջնջելի հետք են թողել ռուսական նկարչության մեջ։ Մինչև օրս էլ այդ նկարները պահպանել են իրենց թե՛ գեղարվեստական և թե՛ իմացական արժեքը։

Ս. ԱՎԶՅԱՆ

ԹԲԻԼԻՍԻԻ ՄԵՅԴԱՆԻ ՍՈՒՐԲ ԳԵՎՈՐԳ ԿԱԹՈՂԻԿԵ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԿԱՄ ԲԵՐԴԻ ՄԵԾ ԵԿԵՂԵՑԻՆ

(ԹԲԻԼԻՍԻԻ 1500-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ)

Վրաց ժողովուրդը 1958 թվականի հոկտեմբերին հանդիսավոր և արժանավայել կերպով տոնեց Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիի գոյության 1500-ամյակը։

Թբիլիսին միշտ եղել է անդրկովկասյան ժողովուրդների կենտրոն, ուր դարբնվել են այդ նույն ժողովուրդների կամքը, միասնականությունն ու եղբայրական բարեկամությունը։

Հազարամյակների պատմություն ունի հայ և վրաց ժողովուրդների բարեկամությունը։ Այն օրվանից, երբ հայ ժողովուրդը պատմության ասպարեզ է իջել, նա իր կողքին տեսել է իր հարևան և եղբայրակից վրաց ժողովրդին։ Դարեր շարունակ ամրապնդվել է երկու ժողովուրդների բարեկամությունը, միասնությունը։ Խորունկ և սերտ է եղել մանավանդ հայ և վրաց ժողովուրդների մշակութային կապը։

Հայ ժողովրդի մշակույթի, դրականության, արվեստի և մամուլի զարգացման գործում առանձնապես խոշոր դեր է կատարել Թբիլիսին։

Թբիլիսին եղել է բազմաթիվ հայ գրողների, արվեստագետների, քաղաքական և հասարակական գործիչների ծննդավայրն ու օրրանը։

Մեր պատմիչներից, ինչպես հնում Մովսես Կաղանկատվացին, Ուխտանեսը, Թովմա Արծրունին, Ստեփանոս Օրբելյանը, Թովմա Մեծոփեցին, Վարդան Օձնեցին, մեր օրերում Աղեքսանդր Երիցյանը, Ստեփանոս Քիշմիշյանը, Լեոն, Հովսեփ Օրբելին, Լևոն Մելիքսեթ-բեկը, Սմբատ Տեր-Ավետիսյանը և ուրիշներ ջերմությամբ են խոսել ու գրել Վրաստանի և առանձնապես Թբիլիսիի մասին։

Հայ ժողովուրդը ոչ միայն իր գիրն ու գրականությունն է զարգացրել Թբիլիսիում, այլև իր շինարար աշխատանքով և կառույցներով գեղեցկացրել և պայծառացրել է Թբիլիսին և այդպիսով հատուցել նրա բարեսիրտ հյուրընկալությունը։

Անցյալում, երկար ժամանակ, մինչև 1917 թվականը, արևելահայերի մշակութային արվեստի գլխավոր կենտրոնը Թբիլիսին էր, ուր հայերը միշտ մեծ թիվ են կազմել։

Թբիլիսիի բոլոր թաղամասերում եղել են հայկական եկեղեցիներ։ Նրանց թիվը ԺԸ դարում հասել է 33-ի։ Նախկին թիֆլիսցիներն ունեցել են 29 հայկական եկեղեցի, իսկ Երևանից, էջմիածնից, Նամախորից, Գանձակից գաղթած հայերը ևս շինել են չորս եկեղեցի և այդպիսով դարձել 33 եկեղեցի։ Հիշենք եկեղեցիներից մի քանիսի անունները. Ս. Փոքր Մողնի, Ս. Սահակաշեն, Սասախլու (այսինքն արքունի) Ս. Գևորգ, Թիկենամ Ս. Գևորգ, Ս. Կողմա և Դամիան, Ջրատարի Ս. Հակոբ, Ս. Կիրակի և Ներսի Հավլաբարի Ս. Գևորգ և այլ եկեղեցիներ, որոնք չեն հասել մինչև մեր օրերը։ Այդ եկեղեցիները ունեն հետաքրքիր պատմություն, սակայն մինչև այժմ չեն ուսումնասիրված։

Ո՞րն է առաջին հայկական եկեղեցին Թբիլիսիում։

Ըստ պատմական աղբյուրների ու փաստերի, ամենահին և առաջին հայկական եկեղեցին Թբիլիսիում՝ Մեյդանի Ս. Գևորգ Կաթուղիկե Ս. Աստվածածին կամ ինչպես առհասարակ պատմության մեջ հայտնի է՝ Բերդի Մեծ եկեղեցին է, կառուցված՝ Նարիղալա կոչվող բերդի ստորոտում և ամենամանկանունն է ստացել այն, Բերդի Փոքր եկեղեցուց (Ս. Հրեշտակապետաց) տարբերվելու համար, որը գտնվում էր նույն փողոցում (Ներկարարների փողոց), ընդամենը 100—150 քայլի վրա։

Ակադեմիկոս Հովսեփ Օրբելին եկեղեցու հիմնադրման տարեթիվը նշում է 1251[2]։ Պրոֆ. Լ. Մելիքսեթ-բեկը ևս ընդունում է, որպես Մեյդանի Ս. Գևորգ եկեղեցու հիմնադրման սկզբնական թվական՝ 1251[3]։

Արդ, ի՞նչն է հիմք ծառայել հարգելի գիտնականներին այդ եզրակացության հանգելու։

Հ. Օրբելին հիմնվել է գլխավորապես հիշյալ եկեղեցու բակի շրջապատի արևելյան դռան ճակատին մի ժամանակ եղած խաչքարի մի բեկորի արարքերեն արձանագրության վրա։

Այդ մասին խոսվում է նաև 1925 թվականին Թբիլիսիում հրապարակված մի ռուսերեն ժողովածուի մեջ.

«...Վանքի[4] շարքում գտնվող Մեյդանի Ս. Գևորգ եկեղեցին ներկայացնում է Թիֆլիսի հայկական հնագույն հուշարձաններից մեկը։ Տաճարի հիմնադրումը ըստ պատմական տվյալների և առանձնապես շենքի ճարտարապետական կառուցվածքի՝ կարելի է վերագրել ԺԳ դարին։ Համաձայն իր ճարտարապետական կառուցվածքի՝ նա պատկանում է «կենտրոնագմբեթ» եկեղեցիների շարքին։

Գմբեթի վերևի մասը կառուցված է ԺԷ դարում, որից հետո՝ դարձյալ ենթարկվել է վերակառուցման։

Դժբախտաբար տաճարի արտաքին ճակատը ծեփված է, որը և խանգարում է ճիշտ որոշելու ուշ և տարբեր ժամանակի շերտերը։ Տաճարի շրջապատի ներսում, արևելյան դռան մոտ, պատի մեջ ամրացված է խաչքարի մի բեկոր արաբական գրությամբ, ԺԳ դար[5] և այլն (ընդգծումներն ամեն տեղ մերն են— Ս. Ա.)։

Որո՞նք են այն պատմական տվյալները, որ հեղինակին իրավունք են տալիս շենքի կառուցումը վերագրել ԺԳ դարին։ Եթե այն, որ «Համաձայն իր ճարտարապետական կառուցվածքի՝ նա պատկանում է «կենտրոնագմբեթ» եկեղեցիների շարքին», ապա պետք է ասել, որ այդ «կենտրոնագմբեթ» շենքերի գոյությունը շատ ավելի վաղ շրջանի է պատկանում, քան ԺԳ դարին, ինչպիսին է «Վրաստանում Ջվարին և Հայաստա-

---

1 Տե՛ս Գյուտ ավագ Քահանա Ադոնյանի «Վրաստանի հայերը», «Տարազ», 1919 թ., № № 1—12։

2 Տե՛ս Հ. Օրբելի, «Արաբական գրությամբ խաչքարի մի ֆրագմենտը Թիֆլիսում», «Քրիստոնեական արևելք», Բ, 1918 թ., էջ 198—199 (ռուսերեն)։

3 Տե՛ս պրոֆ. Լ. Մելիքսեթ-բեկ, «Մոռացված առթիվ 1197 թվականին Թիֆլիսում տեղի ունեցած երկպառակության մասին» (ռուսերեն), «Կովկասյան Պատմա-հնագիտական ինստիտուտի տեղեկագիր», 1925 թ., էջ 58—59։

4 Վանք ասելով ներկա դեպքում Թբիլիսիի վանքի մայր տաճարը չպետք է հասկանալ, այլ Ս. Գևորգի շարքում գտնվող Հրեշտակապետաց կամ Հանուն Սրբոց Քառասնից և կամ Բերդի Փոքր եկեղեցին, որի մասին 1795 թվականին ոմն Սերոբը գրել է. «Եվ վանքս սրբոյ տաճարին են սեղանք 40 խորհրդոյն քառասնից. և ես ի հարկաւորին գ'ի Տէր նեչեալ հոգւոց մատուցանել զպատարագս, ի միում աւուր կատարել զ-40-ն ես՝ յիւրաքանչիւր բեմիս» (Տե՛ս Գյուտ ավագ Քահանա Ադոնյան, «Գիվան հայոց պատմության», Ժ գիրք (մասն մատենագիրք մեծ—ԺԹ դար), Թիֆլիս, 1912 թ., սյունակ 372։ Նաև պրոֆ. Լ. Մելիքսեթ-բեկ, «Մոռացված առթիվ 1197 թվականին Թիֆլիսում տեղի ունեցած երկպառակության մասին» (ռուսերեն), «Կովկասյան Պատմա-հնագիտական ինստիտուտի տեղեկագիր», 1925 թ., էջ 54)։

5 Տե՛ս «Թիֆլիսն ու նրա շրջակայքը» (ռուսերեն ուղեցույց), 1925 թ., էջ, 185—186։

նում Հռիփսիմեն»[6]։ Բացի այդ, եկեղեցու դռակի շքեղապատի մեջ եղած ԺԳ դարի «արքաական գրություն» ունեցող խաչքարը դեռևս չի ասում, որ եկեղեցին կառուցված է ԺԳ դարում և ոչ այն պարիսպը, որը եղել է մի ժամանակ և որի մեջ ամրացված է եղել այդ խաչքարը։

կամ Սործորեցին) իր հայտնի ճառը «ձաղագս երկնային շարժմանց» արտասանել է վերոհիշյալ Ս. Գևորգ եկեղեցում և մեծ հավանություն գտնելով իշխան Ումեկի կրտսեր որդու՝ Վախտանգի կողմից, նրա առաջարկով էլ գրի է առել այդ ճառը, որի առաջաբանում Երզնկացին ասում է.



ԹԲԻԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՍՈՒՐԲ ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑԻՆ

Պրոֆ. Լ. Մելիքսեթ-բեկը ի նկատի ունի և՝ Հ. Օրբելու կարծիքը և՝ այն, որ 1284 թվականին մեր հայտնի բանաստեղծ, փիլիսոփա, վարդապետ Հովհաննես Երզնկացին (Պլուզը

«Ի թվին ՉԼԳ պատահեաց զալ ի կողմանս աստուածապահ թագաւորութեանս աշխարհիս վրաց, ի հռչակաւոր և ի մեծ ի մայրաքաղաքն ի Տփխիս, Փայտակարան կոչեցեալ ի դիրս պատմողաց։ Եւ հանդիպեցաւ խօսել մեզ բանս քարոզութեան ի դուռն եկեղեցւոյն մեծապատիւ և խոհեմամիտ և մեծ իշխան հայոց՝ պարոն Քարիմատինին։ Զոր շինեալ

[6] Տե՛ս Ռ. Աղարաբյան, «Վրաստանի և Հայաստանի կենտրոնագմբեթ շենքերի կոմպոզիցիան», Հայպետհրատ, Երևան, 1950 թ., էջ 119։

էր աստուածասէր և բարի հոգի հայր նորա պարոն Ումեկն։ Եւ էր խօսեցեալ բանն յաղագս երկնային շարժմանն»։

Ուրեմն, ըստ Հովհաննես Երզնկացու, եկեղեցին «շինեալ էր աստուածասէր և բարի հոգի հայր նորա պարոն Ումեկնն։ Պարզ է, որ մեր դիտնականները հիմք ունեն հենվելու հեղինակավոր Երզնկացու ասածի վրա, քանի որ Երզնկացին ինքը ժամանակակից է եղել իշխան Ումեկի ժառանգներին, որոնք և ճիշտ տեղեկություններ կարող էին տալ եկեղեցու «շինության» մասին։

Եկեղեցու իշխան Ումեկի ձեռքով «շինվելը» չեն ժխտում և ուրիշ պատմագետներ, որոնց հետ մենք ևս համաձայն ենք։ Սակայն ամբողջ թյուրիմացությունը կայանում է նրանում, որ և՛ Երզնկացին և՛ ուրիշներ «վերաշինել» բառի փոխարեն գործ են ածել «շինել» բառը։

Ումեկ իշխանի մասին խոսում է նաև Կիրակոս Գանձակեցին։ «Մեծատուն վաճառական Ումեկը» 1242 թվականին դադրել է Կարինից Թիֆլիս և վրաց արքունիքում հասել ազդեցիկ դիրքի։

Այս Ումեկը «վերստին շինեց Բերդի Կաթողիկե եկեղեցին Հաղբատա Ս. Նշան տաճարի ձեռով և մեծությամբ և այլ շատ բարեգործություններից հետո վախճանելով՝ թաղվեցավ յուր կառուցած եկեղեցվո դուռն առաջ»[7]։

Իշխան Ումեկը Ս. Գևորգ եկեղեցին ոչ թե շինել, այլ վերաշինել կամ վերստին շինել է մոնղոլների արշավանքից (1238 թ.) 13 տարի հետո, 1251 թվականին։

Պատմությունից հայտնի է, որ Թիֆլիսը բազմաթիվ անգամ ենթարկվել է ավերման, բայց վերստին վերականգնվել են նրա արժեքավոր շենքերն ու եկեղեցիները։

Այդ եկեղեցիների շարքումն է եղել նաև հայոց Ս. Գևորգ եկեղեցին, որն հաճախ ավերվել է, բայց և նորից վերաշինվել է։

Մոնղոլների արշավանքից և իշխան Ումեկի ձեռքով վերաշինվելուց դեռևս շատ առաջ Թիֆլիսի հայոց Ս. Գևորգ եկեղեցին քանդվել է նաև արաբների արշավանքների ժամանակ Ժ—ԺԱ դարում և վերակառուցվել 1037 թվականին։

«...Կաթուղիկե Աստվածածնի եկեղեցին շինել են Վարդան Մամիկոնյանի սերունդները 1037 թվականին դարձյալ հին եկեղեցու տեղը...»,— գրում է Գյուտ ավագ քահանա Աղանյանը։

Ուրեմն դեռևս 1037 թվականից առաջ գոյություն է ունեցել եկեղեցին, որ հիշյալ թվականին «շինել են դարձյալ հին եկեղեցու տեղը»։

Հապա ե՞րբ է հիմնադրվել Ս. Գևորգ եկեղեցին։

625 թվականին խազարաց խաքան թագավորը, միացած բյուղանդացիների Հերակլ կայսեր հետ, ավերում է Թիֆլիսը, կամ, ինչպես Մովսես Կաղանկատվացին է ասում, «...պատեալ, պաշարէին զվեպիկասուն, վաճառաշահ, հռչակաւոր մեծ քաղաքն Տփխիս»։

Այդ այն ժամանակներն էին, երբ կրոնական տարաձայնությունների պատճառով Հայ ու Վրաց եկեղեցիները նոր էին իրարից անջատվել (609 թ.)։

Ահա ինչ է ասում այդ շրջանի մասին պատմագետ Ադեքսանդր Երիցյանը.

«Գնալելով այդ սարսափելի հարվածին (քաղաքի ավերմանը—Ս. Ա.), Թիֆլիսը շուտով վերակենդանացավ և լցվեց բնակիչներով։ Այս անգամ հայերն այնքան շատ ժողովեցան և այնքան նշանակության տեր էին քաղաքիս մեջ, որ չնայելով վրաց դեպի մեզ ունեցած ատելությանը Քաղկեդոնի ժողովի պատճառով, հայք իրավունք ստացան Բերդի մեջ եկեղեցի շինելու հանուն Ս. Գևորգա, որ և մինչև հիմա կոչվում է Բերդի (Կաթողիկե) եկեղեցի։ Այս իրողությունը պատահած է հայոց 80 թվականին (632 թ.)[9], այսինքն քաղաքի ավերումից վեց տարի հետո...»[10] (625+6=631—Ս. Ա.)։

Ս. Գևորգ եկեղեցու «շինելուն» մասին նույն երկու ծայրահեղ թվականներն է բերում նաև բժիշկ-գրականագետ, Սայաթ-Նովայի տաղերի առաջին խմբագիր և հրատարակիչ Գևորգ Հախվերդյանը, նույն գրքի առաջաբանում գրելով հետևյալը. «...Թիֆլիզցու բազմաթիվ եկեղեցիներն էլել են միշտ կախյալ իշխանությունից Հաղբատի առաջնորդին, որն որ ունեցել է իր առաջնորդարանն Մեծ բերդի Կաթուղիկե եկեղեցումն, որս շինելու տարին բնկնում է 631 կամ 1251-ին»[11]։

---

7 Տե՛ս Աղ. Երիցյան, «Թիֆլիսի հայք և նոցա վիճակագրությունք», Ա. Հովհաննիսյանի «Փորձ» ամսագիր, 1879 թ., ժ. էջ 9։

8 Տե՛ս Գյուտ ավագ Քահանա Աղանյան, «Վրաստանի հայերը», Տ. Նազարյանի «Տարազ», 1919 թ., N N 1—12։

9 Տպագրական սխալ է, պետք է լինի՝ 631 թվականին, (80+551=631)։

10 Տե՛ս Աղ. Երիցյան, «Թիֆլիսի հայք և նոցա վիճակագրությունք», «Փորձ» ամսագիր, 1879 թ., ժ. էջ 3—4։

11 Գ. Հախվերդյան, «Սայաթ-Նովա» (առաջաբան), Մոսկվա, 1852 թ., էջ ԺԲ։

1251 թվականի մասին այլևս խոսք չի կարող լինել, քանի որ մեր առաջ բերած մի շարք փաստերն ապացուցում են, որ հիշյալ եկեղեցին այդ թվականից դեռ շատ դարեր առաջ գոյություն է ունեցել և այդ 1251 թվականին վերաշինվել է (գուցե հիմնովին) իշխան Ոմեկի ձեռքով։

Մնում է 631 թվականը, որ նշում են և՛ Երիցյանը և՛ Հախվերդյանը, որն անշուշտ ճիշտ պետք է լինի և ահա թե ինչու. Թիֆլիսի հայկական եկեղեցիներից և ոչ մեկի հիմնադրման տարեթիվը ոչ մի պատմական աղբյուրում չի հիշատակված ԺԴ դարից առաջ, բացի Ս. Գևորգ եկեղեցուց։

Այժմ հարց է ծագում, եթե Ս. Գևորգ եկեղեցին էլ շինված է 1251 թվականին, հապա Թիֆլիսաբնակ հայերը, որոնք Երիցյանի ասելով՝ դեռևս 625 թվականին «այնքան շատ ժողովեցան», և որոնք է դարի սկզբից (609 թ.) արդեն կրոնական տարաձայնությամբ բաժանվել էին վրացիներից, մինչև 1251 թվականը, այսինքն համարյա վեց դար ու կես (642 տարի) ի՞նչ էին անում, ո՞րտեղ էին աղոթում, մկրտվում և առհասարակ իրենց կրոնական ծեսերն ու արարողությունները կատարում։

Մինչև Քաղկեդոնական ժողովը և նրանից հետո էլ մինչև 609 թվականը, պարզ է, որ հայերի ու վրացիների աղոթատները, եկեղեցիները մեկ են եղել և հավանական է, որ դրանք եղել են Սիոն, Անչիխատիի, գուցե և այլ եկեղեցիները, որոնք մինչ այդ 609 թվականը գոյություն են ունեցել։

Իսկ հայերի և վրացիների իրարից բաժանվելուց հետո՝ հայերը անկասկած պետք է իրենց սեփական, հայկական եկեղեցի ունենային Թիֆլիսում և ունեցել են, այդ դեպքից (609 թ.) 22 տարի հետո, 631 թվականին և դա անշուշտ պետք է եղած լինի Ս. Գևորգ եկեղեցին Թիֆլիսի ամենահին քաղամասերից մեկում, Նարիղալա բերդի ստորոտում, որտեղ եղել է ամենախիտ բնակություն։ Որով Թիֆլիսի ամենահին և առաջին հայկական եկեղեցին, Մեյդանի Ս. Գևորգ Կաթողիկե Ս. Աստվածածին կամ Բերդի Մեծ եկեղեցին է, շինված 631 թվականին։

Աղ. Երիցյանն ու Գ. Հախվերդյանն այդ թվականը նշելով, դժբախտաբար չեն հիշել իրենց ձեռքի տակ ունեցած համապատասխան պատմական փաստերը և տվյալները։

Չնայած հետագա դարերում Թիֆլիսում բազմաթիվ հայկական մեծ և փառահեղ եկեղեցիներ են կառուցվել, սակայն պատմական Ս. Գևորգ եկեղեցին երբեք չի կորցրել իր առաջնությունը։ Մեյդանի Ս. Գևորգ եկեղեցին դարեր շարունակ եղել է նաև Հաղբատի առաջնորդարան։ «...Հայտնի է, որ 1114 թվականին Սև լեռան վճռով Հաղբատա վանքը անցավ այն չորս Աթոռների կարգը, որոնց ձեռքով և համաձայնությամբ պիտի լիներ հայոց կաթողիկոսի ընտրությունը։

Գուցե Հաղբատա վանքի բարոյական նշանակության հետ կամենալով բարձրացնել և նյութական դրությունը, Սարգավագ վարդապետը եկավ Թիֆլիս՝ Վրաստանի Հայոցը Հաղբատա վիճակ դարձնելու նպատակով։ Մեր ենթադրությունը հիմնված է այն բանի վրա, որ ինչպես ԺԳ դարուց մնացած գրավոր հիշատակարաններից երևում է, Թիֆլիսը յուր շրջապատ գյուղերայքով այդ միջոցում արդեն Հաղբատա թիմ է կազմում, իսկ Բաղաբիս Բերդի Կաթողիկե եկեղեցում նստած էր Հաղբատա կողմից մի գործակալ եպիսկոպոս կամ վարդապետ՝ առաջնորդի պաշտոնով»[12]։

Ուրեմն ԺԲ դարում, Սև լեռան ժողովից հետո, Թիֆլիսի Ս. Գևորգ եկեղեցին դառնում է Հաղբատի առաջնորդարան։

Այս փաստը մի ավելորդ անգամ ևս ապացուցում է, որ այդ եկեղեցին գոյություն ուներ 1251 թվականից դեռևս շատ ավելի առաջ։

Գևորգ Հախվերդյանն իր «Սայաթ-Նովա» գրքի առաջաբանում, Ս. Գևորգ եկեղեցու Հաղբատի առաջնորդարան լինելը նույնիսկ տանում հասցնում է մինչև Ժ դարը. «...Էսպես լավ տեսնում ենք, որ սկսած Ժ դարուց կարելի է էլ առաջ, մինչև Վրաստանու ռուսաց տերության հովանավորության տակ մտնելն Թիֆլիզու հայերն շարունակ եղել են ժողովուրդ Հաղբատի ու Սանահնա վանքերու, ու սրանց միաբանության եպիսկոպոսներն միշտ Ընդհանրական կաթողիկոսի կամքով նստել են Թիվլիսում Հաղբատի առաջնորդ անունով»[13]։

Ս. Գևորգ եկեղեցու հետ է կապված մեր հանճարեղ աշուղ-բանաստեղծ Սայաթ-Նովայի անունը, որի հայրը, Մահտեսի Կարապետը ԺԸ դարի սկզբներում Հալեպից գալիս է Թիֆլիս, բնակություն հաստատում այդտեղ, և ամուսնանալով հավլաբարցի Սառա անունով մի աղջկա հետ՝ սկսում է պաշտոնավարել վերոհիշյալ Ս. Գևորգ եկեղեցում որպես մոմավաճառ, լուսարար։ Ահա այդտեղ, այդ եկեղեցու բակումն է ծնվում և մեծանում ապագա Սայաթ-Նովան։

Սայաթ-Նովայի մանկությունն ու պատանեկությունն անցել են այդ եկեղեցու շրջա-

12 Աղ. Երիցյան, «Թիֆլիսի հայոց և նոցա վիճակագրությունը», «Փորձ» ամսագիր, 1879 թ., Ժ, էջ 5—6.

13 Գ. Հախվերդյան, «Սայաթ-Նովա» (առաջաբան), էջ ԺԲ։

պատում, ինչպես նաև նրա կյանքի վերջին օրերը։

Թբիլիսիի Մեյդանի Ս. Գևորգ Կաթողիկե Ս. Աստվածածին Բերդի Մեծ եկեղեցու հետ է կապված նաև ԺԸ դարի հայ գիտնական-փիլիսոփա, գրող և թարգմանիչ Փիլիպոս ավագ քահանա Դայթմազյանի անունը, որը միաբան էր հիշյալ եկեղեցու և որը վրաց գրականության և պատմության մեջ հայտնի է Փիլիպե Դայթմագիշվիլի անունով[14]։

Ս. Գևորգ եկեղեցու հետ է կապված նաև մեր մեծ նկարիչ Գևորգ Բաշինջաղյանի անունը։ Մեծանուն արվեստագետը 1922—1923 թվականներին աշխատեց այդ եկեղեցու ներսի պատերի վրա, խորանների գլխներին և նրանց հանդիպակաց պատերի վրա՝ նկարելով չորս մեծադիր նկար. 1) «Հիսուսը Գեթսեմանիի այգում», 2) «Հուդայի զղջումը», 3) «Հիսուսն ու նավավարները», 4) «Հասկաքաղ», և Ս. Գևորգի մի նկարը եկեղեցու հարավային պատին, որը այլի էր ընկնում իր ինքնատիպությամբ— ձիավոր Ս. Գևորգի տակը ոչ թե թեավոր վիշապն էր ընկած, այլ առանց թևերի մի գարհուրելի իժ, որին նիզակահարում էր Ս. Գևորգը։

Գևորգ Բաշինջաղյանը վախճանվեց 1925 թվականին և թաղվեց հիշյալ եկեղեցու գավթում, Սայաթ-Նովայի գերեզմանի կողքին։

Ուրեմն, բացի 1251 թվականին եկեղեցին վերաշինող իշխան Ումեկից, Սայաթ-Նովայից, Փիլիպոս ավագ քահանա Դայթմազյանից, Գևորգ Բաշինջաղյանից, Թիֆլիսի Ս. Գևորգ եկեղեցու գավթում թաղված են նաև Սահակ ավագ քահանա Սահակունին, Մարտիրոս ավագ քահանա Ամիրխանյանցը, Կարապետ արքեպիսկոպոս Թումանյանը (ղրիմեցի հայտնի քննադատ Սուրխաթյանի եղբայրը) և ուրիշները, որոնց տապանագրերը ժամանակի ընթացքում մաշվել, ջնջվել են և դեռևս հետազոտության և ուսումնասիրության առարկա են։

Վերջերս Ս. Գևորգ եկեղեցու բակը փոխադրվեցին նույնպես Թիֆլիսի նախկին վանքի Մայր Տաճարի գավթում եղած հայ զորավարներ Մ. Լորիս-Մելիքյանի, Հովհաննես Լազարյանի, Արշակ Տեր-Ղուկասյանի և Բեհբութ Շեկինսկիի նշխարները։

Թբիլիսիի Մեյդանի Ս. Գևորգ Կաթողիկե Ս. Աստվածածին Բերդի Մեծ եկեղեցու տոնը լինում է միշտ նոյեմբերի 10-ին (հին տոմարով)։

Ինչպես հնում Ս. Գևորգ եկեղեցին առաջնակարգ տեղ է գրավել, միաժամանակ մի տեսակ կենտրոն հանդիսացել Թիֆլիսահայերի համար, նույնպես և այսոր նա համարվում է աթոռանիստ եկեղեցի, ուր նստում է Վրաստանի հայոց Թեմի առաջնորդը։ Ներկայումս մեծ աշխատանքներ են տարվում եկեղեցու բակը և գերեզմանները կարգի բերելու, կանաչապատելու, ծառազարդելու և ասֆալտապատելու, որպեսզի հին, պատմական մեծ արժեք ներկայացնող այդ հուշարձանը՝ Բերդի Մեծ եկեղեցին, ստանա իր պատշաճ բնույթն ու տեսքը։

---

14 Տե՛ս ակադեմիկոս Կոռնելի Կեկելիձե, «Փիլիպե Դայթմագիշվիլի», «Հին վրացական գրականության պատմությունը», հատ. II, Թիֆլիս, 1951 թ., էջ 337—342։—Լ. Մելիքսեթ-բեկ, «Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», հատ. Գ. Երևան, 1955 թ., էջ 96։



Հ. Գ. ԽԱԼԹԱԽՉՅԱՆ

(Ճարտարապետության թեկնածու)

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԿՈՄՊՈԶԻՑԻԱՅՈՒՄ

Հայկական ճարտարապետության ստեղծագործություններում արձանագրությունների դերը անչափ մեծ է։ Շատ դեպքերում արձանագրությունները հանդիսանում են երկրում կատարված այս կամ այն պատմական իրադարձության միակ փաստերը։ Արձանագրությունների բովանդակության շնորհիվ ճշտվում է կառուցվածքի պատմական դերն ու նրա տեղը Հայաստանի ճարտարապետության զարգացման պատմության մեջ։

Շինարարական արձանագրությունները մեզ տեղեկություններ են հաղորդում ոչ միայն պատվիրատուների և կառուցման ժամանակի, այլև շենքի նշանակության և նրա վերակառուցումների մասին։ Երբեմն արձանագրությունների միջոցով կարելի է իմանալ ճարտարապետների և շինարարական աշխատանքները կատարող բարձրորակ վարպետ-որմնադիրների, հմուտ փորագրիչների, նշանավոր հյուսների, տաղանդավոր նկարիչների անունները։

Բայց արձանագրությունները միայն պատմական արձանագրական նշանակություն չունեն։ Ներկայացնելով որոշակի գեղարվեստական հետաքրքրություն, նրանք փոքր դեր չեն կատարել ճարտարապետական կառուցվածքի դեկորատիվ հարդարման մեջ։ Հնուց հայտնի է արձանագրությունների կիրառումը, որպես զարդանոն մաս, հուշարձանների գեղարվեստական հարդարման մեջ։ Օրինակ կարող են ծառայել հին Եգիպտոսի կառուցումները, տաճարները, թաղումային կառուցվածքները, որոնց պատերն ու սյուները հաճախ ծածկվում էին մեհենագրերով (հիերոգլիֆներով)։ Հին Հռոմում արձանագրությունները հաճախ զարդաքանդակների հետ միասին կազմում էին մոնումենտալ շենքերի անքակտելի մասը։

Աքեմենյան շրջանի Իրանի ճարտարապետության մեջ (Զ և Գ դ. դ. մ. թ. ա.) արձանագրություններ կիրառվում էին։ Ավելի ուշ, միջին դարերում, Միջին և Մերձավոր Արևելքի մանավանդ իսլամական երկրների ճարտարապետության մեջ, մեծ տարածում գտան արձանագրությունները, որոնք մեջբերումներ էին պարունակում Ղուրանից և նրանց մեջ հաճախ էլ հիշվում էին ճարտարապետների ու պատվիրատուների անունները։ Արաբական գրերի դեկորատիվ բնույթը, համատեղված երկրաչափական և բուսական զարդանկարների հետ, հնարավորություն էր տալիս առավել չափով օգտագործելու արձանագրությունները՝ տարբեր նշանակության ճարտարապետական կառուցվածքներ զարդարելու գործում։

Հին Հայաստանում արձանագրություններով հարուստ հուշարձաններ պահպանվել են դեռևս Ուրարտական տիրապետության ժամանակներից (Թ—Զ դ. դ. մ. թ. ա.)։

Ուրարտացիների ուրույն և ինքնատիպ մշակույթը զարգանում էր իրենց հարևան

ժողովուրդների՝ ասորիստանցիների, բաբելացիների և ուրիշների մշակույթների հետ սերտ կապակցված։ Այս փոխադարձ կապը իր արտացոլումն է գտել նաև ուրարտական գրերի սեպագրերի մեջ, որոնք շատ ընդհանուր բան ունեն հարևան ժողովուրդների հետ։ Սեպագիրը առաջին անգամ երևացել է Շումերում (Դ հազարամյակից մինչև մեր թվականը)։ սկզբում քարե տախտակների վրա, իսկ հետագայում տրձանագրություններով սկսվեցին ծածկվել քարե պատերի և ժայռերի մակերևույթները։ Ուրարտական արձանագրությունները գրվում էին ինչպես կավի, այնպես էլ քարի վրա։ Նրանք շինարարական բովանդակություն ունեին։ Սեպաձև պրոֆիլով եռանկյուն նշանագրերը խորացվում էին այն նյութի մեջ, որի վրա փորագրվում էին։ Բնորոշ է, որ արձանագրությունները գորդի պես փռվում ու ամրոցությամբ պատում էին արձանագրության համար նախատեսված այս կամ այն նյութի ողջ մակերևույթը։ Արձանագրությունները գրվում էին տող առ տող գծված տողաններով՝ ձախից աջ։ Բառերը տեղավորվում էին անընդմեջ և առանց տողադարձի[1]։ Այն դեպքում, երբ բառը վերջանում էր տողը չլրացած, ավելացնում էին ավելորդ ձայնավորներ և վանկեր։

Ուրարտական սեպագրերը փորագրվում էին քարե պատերի, սյուների, հուշարձանային կառուցվածքների սրբատաշ մակերևույթների վրա։

Ըստ տեքստի մեծության, սեպագրերը տեղավորվում էին պատի մեկ կամ մի քանի իրար կից քարերի վրա։

Երևանի մոտ գտնվող ուրարտական փոխարբայի ամրոց Կարմիր բլրի (Թեյշեբաինի) պատի վրա գտնվող Արգիշտիի որդի Ռուսայի (685—645 թ. թ. մ. թ. ա.) մասամբ պահպանված արձանագրությունը, պրոֆ. Կ. Ղաֆադարյանի կարծիքով, գրադեցրել է առնվազն չորս քար[2]։

Վանի մոտ Զվարթնոց գյուղում հայտնաբերված սյան ներքևի մասում գտնվող Սարդուրի որդի Իշպուինի (Թ դարի վերջը մ. թ. ա.) արձանագրությունը բռնում է երեք տող տարածություն, որը զարդանկար ժապավենի պես պատուրում է սյան ընի սկիզբը։

Սեպագիր արձանագրություններով հարուստ ուրարտական սյուների համանման մանրամասներ պահպանվում են Վրաստանի պատմական թանգարանում, Թբիլիսիում։

Ուրարտուի դեռևս չավարտված հնագիտական ուսումնասիրությունը հնարավորություն չի տալիս լրիվ չափով բնորոշելու Ուրարտուի մոնումենտալ ճարտարապետության մեջ կիրառվող արձանագրությունների լիակատար արժեքը։ Սակայն հաշվի առնելով այն, որ մինչև այժմ համարյա չեն հայտնաբերված քարակոփ դարպաքանգակներ, պետք է ենթադրել, որ հատկապես արձանագրություններն էին հանդիսանում շինությունների դեկորատիվ հարդարման հիմնական միջոցները։ Դատելով սյուների և ամրոցների արտաքին պարիսպների քարերի վրայի արձանագրությունների մնացորդներից, պետք է ենթադրել, որ նրանք գրավում էին կառուցումների երևացող մասերը։ Ուրարտական արձանագրությունների, նրանց կիրառման և գեղարվեստական նշանակության մասին առավել լիակատար գաղափար են տալիս հուշարձանային կառուցումները։ Դրանք կամ առանձին կանգնած սալաններ են, ծածկված համասարած արձանագրություններով, կամ երբեմն ճարտարապետորեն ձևավորված սեպագրերով պատված ժայռերի հարթեցված մակերևույթներ։

Ուրարտական քարե ստելաները քառանիստ կոթողների տեսք ունեն, որոնք դրված են ոչ մեծ պատվանդանների վրա։ Որպես օրինակ կարող են ծառայել Արգիշտիի որդի Սարդուրի (760—730 թ. թ. մ. թ. ա.) ստելան, որ գտնվում է Վանա ժայռի հյուսիսային լանջի խորշում, և Արգիշտիի որդի Ռուսայի (685—645 թ. թ. մ. թ. ա.) Զվարթնոցի ստելան (նկար 1)։ Ի տարբերություն Սարդուրի ստելայի (բարձրությունը 2,27 մ.), Ռուսայի ստելայի վերնամասը կորացած է և ավելի ճշգրիտ երկրաչափական ձև ունի։

Ուրարտական սալաները ճարտարապետական արտահայտչականության էին հասնում երկրաչափական կանոնավոր ձևի հրատակությամբ, որոնք հակադրվում էին կա՛մ շրջապատի ժայռերի անկիրպարանք գանգվածների, կա՛մ հարթավայրերի դաշտանկարի հետ։ Սեպագրի գեղարվեստական հմայքը հիմնված է հուշարձանի երևակոդմի ողջ մակերևույթը մանր նշաններով հավասարաչափ ծածկելու վրա։ Գրերի ոչ խորփորվածքը, բառամիջի տարածությունների և աղատ լուսանցքների բացակայությունը չէին խախտում ստելայի մակերևույթի համակարգությունը, այլ ընդհակառակն ընդգծում էին և ուժեղացնում նրա ճարտարա-

[1] Գ. Բ. Ֆլորովսկի, «Ուրարտուի պատմությունն ա կուլտուրան», Երևան 1944 թ., էջ 287 (ռուսերեն)։

[2] Կ. Ղաֆադարյան, «Կարմիր բլրի նորագույն սեպագիր արձանագրությունը», «Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պատմության և դրականության ինստիտուտի անցեկագիր», գիրք 2-րդ, Երևան, 1937 թ., էջ 235—236 (ռուսերեն)։

Նկար 1
ԱՐԳԻՇՏԻ ՈՐԴԻ ԴՈՒՍԱՅԻ ՍՏԵԼԱՆ ԶՎԱՐԹՆՈՑՈՒՄ

պետական արտահայտությունը։ Այդ բանը կարելի է ստուգել, տեսնելով Ռուսայի մոնումենտալ ստելան, որի 2,70 մ. բարձրության մեջ պարունակվում է 47 տող արձանագրություն։

Ժայռերի հարթեցված մակերևույթների վրա փորագրված սեպագրերի օրինակներ կարող են ծառայել՝ Մենուայի որդի Արգիշտիի (781—760 թ. թ. մ. թ. ա.) Վանա ժայռի վրայի խորիկորյան տարեգրությունը և Սարդուրի որդի Ռուսայի (730—714 թ. թ. մ. թ. ա.) Սևանա լճի հարավային ափի ժայռի վրայի Քալաքրանյան (Սովինարի) արձանագրությունը։

Ճարտարապետական ձևավորում ունի կրոնական բովանդակություն պարունակող Իշպուինի որդի Մենուայի սեպագիր արձանագրությունը (810—781 թ. թ. մ. թ. ա.), որը գետեղված է ժայռի զանգվածում փորված խորշի մեջ և ժողովրդի մեջ հայտնի է «Մհերի դուռ» («Մհեր կապուտ») անունով։

«Մհերի դռան» գեղարվեստական հմայքը հիմնված է ինչպես հսկայական խորշի միջոցով (բարձրությունը 5,18 մ.) արձանագրությունը ընդգծելու, նույնպես և ողջ ներս ընկած մակերևույթը մանր սեպագրերով հավասարաչափ պատելու վրա։

Սեպագիրը առավել ստվերելու համար, խորշը ունի զգալի խորություն (1,27 մ.) և երիզված է հետզհետե խորացող երեք ուղղանկյուն մակերևույթներով։ Եզրակալի խոշոր ջլատումները պարզորոշ կերպով առանձնացնում են խորշը շրջապատի ժայռերից և բևեռում դիտողի ուշադրությունը սեպանկարի վրա։ Դեկորատիվ տեսք է տրված Երևանի մոտ գտնվող ուրարտական Արին-Բերդ (Երեպունի) քաղաքի ամրոցում կրոնական շենքի՝ «Մուսիի տաճ» կառուցման մասին հայտնող, Մենուայի որդի Արգիշտիի արձանագրությանը։ Մուտքի ձախ և աջ կողմերում կրկնված միևնույն արձանագրությունը, որը փորագրված է բազալտի սրբատաշ մակերևույթի վրա, պարզորոշ կերպով առանձնացվելով, իր ռելեֆով զգալի տարր է դառնում ճակատի գեղարվեստական ձևավորման գործում։

Ուրարտական տիրապետության անկումից հետո (Զ դարի սկիզբը մ. թ. ա.) սեպագիրը հետզհետե սկսում է անհետանալ՝ Ուրարտուի պետության մեջ մտնող ցեղերի գործունեության պատճառով։

Երկրորդ դարի սկզբին, մինչև մեր թվագրությունը, Հայկական բարձրավանդակի վրա կազմակերպվեցին անկախ հայկական թագավորություններ՝ Մեծ Հայքը և Սոփաց աշխարհը (Սոփքը)։ Սկսած Գ դարից մ. թ. ա. և մինչև Ե դարի սկիզբը մ. թ., հայերը չունենալով դեռևս իրենց ազգային (հայկական) գրերը, օգտվում էին հարևան ժողովուրդների այբուբեններից։ Մովսես Խորենացին և Ղազար Փարպեցին վկայում են, որ մինչև հայկական տառերի գյուտը, հայերը օգտվում էին արամեական, հունական և պարթևական գրերից[3]։

Օտար գրերը կիրառվում էին պետական գործերը վարելու համար, և չէին տարածվել ժողովրդական զանգվածների մեջ։ Ժողովուրդը հավանաբար գործածել է իր, այսպես կոչված «մինչ-մեսրոպյան» գրերը, որի

3 Մովսես Խորենացի, «Հայոց պատմություն», Մոսկվա, 1858 թ., գիրք Ա, գլուխ Գ։— Ղազար Փարպեցի, «Հայոց պատմություն», Վենետիկ, 1793 թ., էջ 28։— Ա. Ղաֆադարյան, «Հայկական գրի սկզբնական տեսակները», Երևան, 1939 թ., էջ 9։

մասին շատ պարզ հիշատակում է պատմիչ Վարդան Մեծը[4]։ Սրա ապացույցներից մեկը կարող է լինել նաև այն, որ այդ ժամանակ հայերը ունեին իրենց խոսակցական լեզուն։ Այս բանը հաստատվում է հույն պատմիչ Ստրաբոնի վկայությամբ, որը Հայաստանի մասին խոսելիս ասում է, թե «բոլոր բնակիչները... խոսում էին միևնույն լեզվով[5]»։

Ոտար դրերի գործածությունը Հայաստանի համար բացառություն չէր։ Նման երևույթ բնորոշ է առաջավոր Ասիայի, Անդրկովկասի և Բալկանյան թերակղզու հին ժողովուրդների համար, որոնք մինչև սեփական այբուբեն ունենալը օգտվել են հունարենից[6]։

Այն քարերը, որոնց վրա խազված են արամեական արձանագրությունները՝ ծառայել են որպես սահմանային նիշեր[7]. նրանք տաշված հաստ սալեր են, վերի մասում կորություն ատամնաշար ունեն և նման են փոքր աշտարակների. քարերի բարձրությունը շատ չէ՝ 42 սմ. (նկար 2)։

Արձանագրությունները դասավորված են սալի լայն մասում, տող առ տող, հորիզոնական, աջից ձախ։ Տառանիշերի չափը տատանվում է 4 սանտիմետրի սահմաններում։ Ձայնավորները բացակայում են։ Բառամիջի տարածություններ չեն թողնվել, բառերը փոխադրվելիս են եղել մի տողից մյուսը։

Նկար 2
ԱՐՏԱՇԵՍ Ա-Ի ԱՐԱՄԵԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ-ՈՒՅԱՁՈՏՈՒՄ

Մինչև օրս հայտնի են արամեական երեք քարի արձանագրություններ, որոնք գտնվել են Սևանա լճի շրջանում։ Ժամանակագրությամբ նրանք վերաբերում են առաջին հայկական թագավորի՝ Արտաշես Ա-ի (189—160 թ. թ. մ. թ. ա.) ժամանակաշրջանին։

Արձանագրություններով քարերի դեղարվեստական մշակումը հիմք է տալիս ենթադրելու, որ ոչ բոլոր սահմանային սյուներն են եղել աշտարակաձև։ Ըստ երևույթին, մեզ չհասած սովորական, շարքային սյուները ավելի պարզ մշակված են եղել։ Ձևավորվում էին միայն այն սյուները, որոնց արձանագրությունների մեջ հիշվում էր թագավորի անունը։

Հին Հայաստանում հունական արձանագրություններ պահպանվել են համարյա մինչև

[4] Վարդան Մեծ, «Պատմութիւն տիեզերական», Մոսկվա, 1861 թ., էջ 63, ծանոթություններ՝ էջ 80—81 (ռուսերեն)։

[5] Ստրաբոն, գիրք 11, գլուխ 14։

[6] Այս հարցի մանրամասն շարադրությունը տե՛ս Կ. Վ. Տրեեր, «Հին Հայաստանի կուլտուրայի պատմության ակնարկներ», Մոսկվա—Լենինգրադ, 1953 թ., էջ 100—102 (ռուսերեն)։

[7] Կ. Վ. Տրեեր, հիշյալ երկը, էջ 162 և շարունակություն։

Գ դար մ. թ. ա.։ Այն ժամանակից հունարեն լիզուն տարածված է եղել պաշտոնական, գործարար և պետական հարաբերությունների համար[8]։

Հունարեն գրերի գործածությամբ արամեական գրերը չկորցրեցին իրենց նշանակությունը և շարունակեցին կիրառվել հունարենի հետ հավասար։ Հայտնի են դեպքեր, երբ միաժամանակ կիրառվել են թե՛ հունական և թե՛ արամեական նշանները։ Օրինակ կարող է ծառայել Փոքր Հայքում հայտնաբերված հունա-արամեական երկլեզու արձանագրությունը[9]։ Այդպիսի երկլեզու արձանագրություն հայտնաբերվել է նաև Արմազիում[10] (Մցխեթա, Վրաստանում)։

տինական արձանագրություններ, որոնք տարածված են եղել Հայաստանում մեր թվագրության առաջին դարի վերջերից։ Նրանք ունեն պատմական, գրական և կենցաղային բովանդակություն։

Պահպանված հունական և լատինական արձանագրությունները ուրարտական սովորույթների ուղղակի շարունակությունն են, միայն այն տարբերությամբ, որ այս արձանագրությունները պակաս խնամքով են կատարված։

Արմավիրի հունական արձանագրությունները (Ա դ. մ. թ. ա.) փորագրված են ժայռի պանգվածների համարյա չմշակված մակերևույթի վրա, տեղ-տեղ բավականին ան-

Նկար 3
ԷՐԻԱ-ՎԱԼԵՆՏԻ ՀՈՒՆԱՐԵՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Հին Հայաստանում հայտնաբերված են տասից ավելի հունարեն արձանագրություններ։ Բացի այդ, գտնված են նաև հինգ լա-

փոյթ և առանց ձևավորման։ Բովանդակությունն է՝ գրական զեղումներ, հավանական է կրոնական բովանդակությամբ[11]։

Ըստ երևույթին զարգացման հետևյալ փուլը մեմորալ հուշարձանների վրայի արձանագրություններն են։ Անհավանական չէ նման արձանագրությունների գոյությունը նաև ուրարտացիների մոտ, սակայն առայժմ այդպիսիք չեն հայտնաբերվել։

Մինչև այժմ հայտնաբերված են երեք մեմորալ հուշարձան, մեկը հունարեն (Էրիա-Վալենտի, Բ դ. մ. թ. ա.) (նկար 3) և երկուսը

---

8 Ս. Տ. Ներսյան, «Հայաստանի հասարակական կարգի հիմնական գծերը հելլենիստական դարաշրջանում», «Տեղեկագիր», Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հասարակական գիտություններ, Երևան, 1948 թ., № 11, էջ 72 (ռուսերեն)։

9 Ա. Յա. Բորիսով, «Արտաքսես (Արտաշես) թագավորի հայոց արձանագրությունը», «Հին պատմության Բանբեր», Մոսկվա, 1942 թ., № 2, էջ 99 (ռուսերեն)։

10 Գ. Վ. Ցերեթելի, «Արմազից բիլինգվան» (արձ.) Թբիլիսի, 1941 թ., (ռուսերեն)։

11 Կ. Վ. Ցուլեր, հիշված երկր, էջ 113 և շարունակություն։

յատիներեն (Բ դարի վերջը մ. թ. ա.) արձանագրություններով, բոլորն էլ էջմիածնում։ Արձանագրությունները ճարտարապետորեն ձևավորված են։ Նրանք դասավորված են ուղղանկյուն տապանաքարերի վրա, որոնք երիզված են ոչ մեծ ելուստավոր շրջանակներով։ Արձանագրությունների կատարման որակը բարձր չէ. տողերը ուղիղ չեն և մասամբ տարբերվում են բարձրությամբ, հավասարաչափ չի ծածկված մակերևույթը տառերով. կան դատարկ տողեր, իսկ հունական արձանագրությունում տեքստի մի մասը և մի քանի տառերը տեղավորված են շրջանակի վրա։ Այս ամենը խախտում է արձանագրությունների ամբողջությունը և նրանց նշանակությունը հուշարձանի դեկորատիվ հարդարանքի մեջ։ Արձանագրությունները ուղղանկյուն երիզակալով պատելու ձևը հետագայում իր զարգացումը ստացավ։ Հայկական տաճարների պատերի վրա կարելի է տեսնել նման ձևի ուղղանկյուն հուշատախտակներ։

Ամրոցների պատերի վրայի (Տիգրանակերտ և Գառնի) արձանագրությունները կիրառվում էին նույնպես, ինչպես ուրարտական ժամանակաշրջանում։ Գառնիում պահպանվել է Տրդատ Ա-ի հունարեն արձանագրությունը, որտեղ խոսվում է ամրոցի վերականգնման մասին։ Կ. Տրևերի ենթադրությամբ այդ արձանագրությունը զետեղված է եղել պարսպի մեջ, որը շարված է սրբատաշ բազալտի խոշոր հատաքարերով։ Այն գտնվելիս է եղել աշտարակի կցորդման տեղում, կամ «հենց աշտարակի վրա, այն տեղում, որտեղ նա կցորդվում էր պատին»[12]։ Չի բացառվում այն, որ արձանագրությունը փորագրված է եղել գոյություն ունեցող պատի մակերևույթի վրա, վերականգնման աշխատանքները վերջացնելուց հետո։

Գառնիի ամրոցում հունական արձանագրությունները պահպանվել են նաև մի փոքրիկ շենքի խճանկար հատակի վրա, որը եղել է բաղնիքի հանդերձարան։ Խճապատկերի սյուժեն, որը կազմված է գունավոր փոքրիկ քարերից, ծովային դիցաբանությունից վերցված բովանդակություն է պատկերում։

Մակագրությունները, որոնք բովանդակում են զանազան ծովային աստվածությունների անուններ, հստակորեն այքի են ընկնում իրենց մուգ գույնով բաց ֆոնի վրա և զեղեցիկ կերպով դասավորված են՝ ձկնապատկերներով ու երկրաչափական հյուսվածքներով շրջապատված մարդկանց պատկերների շուրջը։ Գառնիի խճանկար մակագրությունները, առայժմ, միակ հունական խճանկար արձանագրություններն են Հայաստանում։

Հունական արձանագրությունները, որպես հին ժամանակների արձագանք և հայ ավագանու առանձին ներկայացուցիչների հունամոլության արտահայտություն՝ փորագրվում էին նաև ավելի ուշ շրջանի, հատկապես է դարի կեսերի հուշարձանների վրա։ Ավանի երկլեզու ծածկագիր արձանագրության մեջ, որտեղ հիշատակվում է Եզր կաթողիկոսի անունը (638 թ.) բառերի մի մասը գրված էր հունարեն[13], իսկ Զվարթնոցի տաճարում (641—661 թ. թ.) հունարեն լեզվով գրված են Ներսես Գ Շինողի կողմից տաճարը կառուցելու մասին արձանագրությունը[14] և իր՝ Ներսեսի փակագրերը, որոնք դասավորված են կենտրոնական աբսիդը ձևավորող խոյակների վրա (նկար 4)։

Նկար 4
ԽՈՅԱԿ ԶՎԱՐԹՆՈՑՈՒՄ
ՆԵՐՍԵՍ Գ ՇԻՆՈՂԻ ՓԱԿԱԳՐԵՐՈՎ

Փակագրերը դասավորված են մուտքին անմիջապես մոտ, տեսանելի տեղում, սյունագլխի երկու խոյակների միջև զետեղված հյուսվածքաքանդակի գլխին։ Փակագիրը իր խոշոր չափերով և սյունագլխով գրված կենտրոնական դիրքով ըմբռնվում է որպես մի զարդաքանդակ, որը բաղկացած է ուռուցիկ տառերից և վարդաքանդակից։ Փակագրի բովանդակությունը, համեմատած նրա

12 Կ. Վ. Տրևեր, հիշված երկը, էջ 208։

13 Կ. Ղաֆադարյան, «Ավանի երկլեզվյան ծածկագիր արձանագրությունը», Երևան, 1945 թ.։

14 «Հայկական ՍՍՌ պատմական հուշարձանները, Վաղարշապատի շրջան», Երևան, 1938 թ., § 3, էջ 12։

դեկորատիվ նշանակության հետ, դարձել է երկրորդական։

Հունական արձանագրությունները կիրառելու ուրիշ օրինակներ էլ են հայտնի, բայց փորագրված լինելով ավելի ուշ քան կառուցումը, նրանք էական դեր չեն կատարում վերջիններիս գեղարվեստական ձևավորման մեջ։

Դ դարի վերջերում և Ե դարի սկզբում Հայաստանում տեղի ունեցավ խոշոր իրադարձություն. Մեսրոպ Մաշտոցը կատարեց հայոց գրերի գյուտը։ Այլևս ոչ միայն կարիք չէր լինում օգտվելու օտար նշաններից, այլև լայն հնարավորություններ էին ստեղծվում գիտության զարգացման և այդ գիտությունը ժողովրդական հոծ զանգվածների մեջ տարածելու համար։ Տառերի գյուտը հնարավորություն տվեց ժողովրդին մայրենի լեզվով ուսում ստանալու, ձուլվելու վտանգից հեռու մնալու, և ժողովրդի մեջ հաստատելու քրիստոնեությունը, որը պաշտոնական կրոն էր դարձել Հայաստանում 301 թվականներից։

Մենք չգիտենք, թե որքան շուտ հայ գրերը կիրառվեցին ճարտարապետական հուշարձանների արձանագրությունների մեջ. հավանական է, որ տառերի գյուտից ոչ անմիջապես հետո։ Սրա ապացույցն է արձանագրությունների համարյա լրիվ բացակայությունը Դ դարից մինչև Զ դարի սկիզբը ընկած ժամանակաշրջանում։ Բայց հետագա դարերում հայկական ճարտարապետության հուշարձանների վրա պահպանվել են, իրենց բովանդակությամբ, գծագրությամբ և տեխնիկայի կատարմամբ տարբեր, անհամար թվով արձանագրություններ, որոնց մեծագույն մասը ընկնում է հայ ճարտարապետության աճի ու վերելքի առավել գործոն շրջանների վրա, այն է՝ Զ և Է դարեր, Ժ և ԺԱ դարերի սկիզբը և մանավանդ ԺԲ դարի վերջը և ԺԴ դարի սկիզբը։

Քանի որ հնարավոր չէ ընդգրկել արձանագրային ամբողջ ժառանգությունը, մենք ստիպված եղանք սահմանափակվել մի շարք օրինակներով, որոնց հիման վրա կարելի էր բավականաչափ ցայտուն կերպով ցույց տալ հայկական արձանագրությունների յուրահատկությունը, այն է՝ ճարտարապետական-գեղարվեստական ձևավորման բնորոշ հատկություններն ու կատարման տեխնիկայի բազմատեսակ ձևերը։

Ըստ գծագրական առանձնահատկությունների, հայկական գրերը բաժանվում են հետևյալ խմբերի. 1) երկաթագիր՝ 2) ուղղագիծ գիր՝ 3) բոլորագիր, 4) եռագիր և 5) շղագիր։

Հիշված խմբերը միանգամից առաջ չեն եկել։ Նրանք մշակվել են հնագույն գրից՝ երկաթագրից հայկական գրերի զարգացման ընթացքում։ Մասնավորապես քարի վրա փորագրելիս տառերի ուրվագծերը ստանում էին իրենց ձևերը, որոնք որոշ չափով զատվում էին գրքային տառաձևերից։

Ինչպես ցույց են տալիս քարի վրայի հայկական արձանագրությունների ուսումնասիրության հնագրական հատկությունները, տարբեր ժամանակներում կիրառվելիս են եղել տարբեր տառաձևերը[15]։ Սկզբում օգտագործվում էին գլխավորապես երկաթագրից. մի քիչ ուշ սկսեցին կիրառել նաև բոլորագիրն ու շղագիրը։ Հայտնի են դեպքեր, երբ միևնույն արձանագրության մեջ կիրառվել են տարբեր տառաձևեր. այսպես օրինակ՝ Թալինի կաթողիկե եկեղեցու գմբեթի աջ մույթի արևմտյան կողմի վրայի 783 թվականի արձանագրությունները գրված են երկաթագրով, տեղ-տեղ բոլորագրով և շղագրով։ Տարբեր ոճերի խառնուրդով այլի է ընկնում նաև Երերույքի տաճարի հարավային դռան մոտի 1088 թվականի արձանագրությունը (նկար 5)[16]։

Քարի վրա արձանագրություններ կատարելիս՝ միշտ չէ, որ փորագրիչ վարպետները ճշտորեն պահպանում էին տառաձևի ոճական առանձնահատկությունները։ Մեծ մասամբ այս վերաբերում է առավել վաղ օրինակներին, ինչպես Տեկորի գերեզմանատան տապանաքարի վրայի 964 թվականի արձանագրությունը, որ իր ոճով մոտ է շղագրին[17]։ Քարի վրա արձանագրությունները դասավորվում էին ձախից աջ, հորիզոնական տողերով, համեմատաբար հավասար բարձրությամբ։ Աշխատանքների ծավալը պակասեցնելու նպատակով և արձանագրության երկարությունը կարճացնելու համար, թույլատրվում էր մի տառանիշով փոխարինել երկուսը և հազվադեպ՝ երեքը և չորսը[18]։ Կիրառվում էին նաև հայկական արձանագրություններում ընդունված կրճատված բառեր, որտեղ գրվում էին միայն բառասկզբի և բառավերջի տառերը և որոնց գլխին դրվում էր պայմանական մի գծիկ՝ պատիվ, երբեմն ձախ ծայրը ծռած վեր, իսկ աջը՝ ցած։ Երբ տեղը չէր բավարարում, գիտակցորեն կրճատվում էին բառերի միջին մասերը։

---

15 Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյան. «Գրչության արվեստը հայոց մեջ», Վաղարշապատ, 1914 թ., մաս Գ, էջ 10։

16 Նույն տեղում, էջ 13։

17 Նույն տեղում, էջ 12։— Կ. Ղաֆադարյան, «Հայկական գրի սկզբնական տեսակները», էջ 46—47։

18 Համատեղված տառերի ազդանակը տե՛ս. Կ. Ղաֆադարյանի հիշյալ երկում, էջ 75—82։

ճատում էին նաև ուրիշ բառեր։ Բառերը գրվում էին մեկը մյուսի հետևից անընդմեջ։ Տողադարձը կատարվում էր առանց վանկերի բաժանելու, որն անհրաժեշտ էր ընդմիջումների և աղատ տարածությունների վերացման համար, քանի որ վերջինները խախտում էին արձանագրությամբ զբաղեցրած մակերեսության միասնությունը։

Ռելեֆ մակագրությունների հատվածքը փորվում էր երկու ձևի, խորացվող և ուռուցիկ պրոֆիլներով։

բարձրությունը, որոնք նշվում էին պատի վրա, մետաղյա խազերով, ընդորում խազի խորությունը լինում էր տարբեր, որոշ դեպքերում, այն հազիվ նշմարելի է, մի այլ դեպքում նշանակալից խորն է (մինչև 2 մմ.)։ Տառերի խորությունը շատ չէ, մինչև 10 մմ.։

Բարձրաքանդակ արձանագրություններում տողերը հաճախ իրարից զատվում էին գծիկով, որի ելուստը հավասար էր լինում տառի ելուստին։ Նման կերպով է ձևավորվում 1184 թվականի արձանագրությունը,



Նկար 5

ԵՐԵՎԱՆԻ ՏԱՃԱՐԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԴՌԻՆ ԶԱԿ ԿՈՂՄԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Արձանագրությունների փորագրումը քարի վրա հոգնեցուցիչ, մանակրկիտ ճշտություն պահանջող աշխատանք էր, որը կարող էին կատարել միմիայն բարձրորակ փորագրիչ-վարպետները, կառուցվածքները զարդաքանդակող մասնագետները։ Իրենց կատարման տեխնիկայով, արձանագրությունները շատ ընդհանուր բան ունեն զարդաքանդակների հետ, քանի որ երկուսն էլ քանդակվում էին միևնույն գործիքներով, միևնույն նյութի՝ քարի վրա։ Արձանագրությունների փորագրման ընթացքը քարի վրա կարելի է պատկերացնել հետևյալ կերպ։ Այն մակերեսությունը, որի վրա պետք է փորագրվեր արձանագրությունը կամ զարդաքանդակը՝ խնամքով հարթեցվում և տաշվում էր։ Նախապես որոշվում էին տողերի քանակն ու

բարձրությունը, որոնք նշվում էին պատի վրա, մետաղյա խազերով, ընդորում խազի խորությունը լինում էր տարբեր, որոշ դեպքերում, այն հազիվ նշմարելի է, մի այլ դեպքում նշանակալից խորն է (մինչև 2 մմ.)։ Տառերի խորությունը շատ չէ, մինչև 10 մմ.։

Բարձրաքանդակ արձանագրություններում տողերը հաճախ իրարից զատվում էին գծիկով, որի ելուստը հավասար էր լինում տառի ելուստին։ Նման կերպով է ձևավորվում 1184 թվականի արձանագրությունը,

որն ասում է, թե պարսպի աշտարակը կառուցված է կանդիտատ[19] խաչոտի հիշատակին։ Նույն կերպ է ձևավորված Նորավանքի Ս. Աստվածածին եկեղեցու (1339 թ.) արևմտյան ճակատի քառատող արձանագրությունը (նկար 6)։

Տողերը որոշելուց հետո, նշվում էին տառերը, որոնց տեղադրությունն ու ձևերը գծագրվում էին խազերով և որի վրայից հետո փորվում էին տառերը։

Սկսած ԺԳ դարից, տողերի նշելն ու տառերի ուրվագծելը կատարում էին ներկերով։ Այս բանը զգալի արագացնում և թեթևացնում էր փորագրության աշխատանքը, մա-

[19] Կանդիտատ— Հունական զինվորական տարիճան, ԺԲ դար։

նավանդ երբ քարերը ամուր էին՝ բազալտ, տրախիտ։ Նոր-Գետիկի ճարտարապետական կոմպլեքսի շատ արձանագրություններ նախ գրված են եղել ներկերով, ապա փորագրվել էն։ Բնորոշ է, որ նրանց մեջ հանդիպում են տառեր, որոնք այս կամ այն պատճառով մնացել են գրված միայն ներկով[20]։

Տառերի գծագրման յուրահատկությունները առիթ են տվել Հ. Օրբելուն ենթադրելու, որ հայկական միջնադարյան արձանագրությունները գրվել են նախապես պատրաստված կաղապարների միջոցով։ Այս ենթադրությունն իր հաստատումն է գտել Հ. Ջանփոլադյանի Նոր-Գետիկի արձանագրությունների տառերի չափերին ու ձևերին նվիրված մանրամասն աշխատության մեջ։ Ուսումնասիրելով նրանց հնագրական յուրահատկությունները, նա հաստատում է, որ «...մի բանիսր նրանցից շատ լավ պահպա-

Նկար 8
ՆՈՐԱՎԱՆՔԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԻՐԿՐՈՐԴ ՀԱՐԿԻ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՇՔԱՄՈՒՏՔԻ ԲԱՐՁՐԱՔԱՆԴԱԿ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

[20] Հ. Ջանփոլադյան, «Մխիթար Գոշը և Նոր-Գետիկ վանքը», «Հայաստանի Պետական պատմական թանգարանի աշխատություններ», Երևան, 1948 թ., հատ. I, էջ 156։

նել են տառերի գծագրումների առանձնահատկությունները. պարզ երևում են կաղապարների միջոցով՝ նախապես ներկով գրված տառերի հետքերը»[21]։

Ինչպես ասվեց վերևում, փորագրվող արձանագրությունների տառերը տաշվում էին խորացված կամ ուռուցիկ պրոֆիլով։

Խորացված տառերը ուրարտական սեպագրերի նման եռանկյունի հատվածք ունեն՝ հավասարասրուն, երբեմն հավասարակողմ եռանկյան ձևով, որի գագաթը թաղված է պատի մեջ։

Ուռուցիկ պրոֆիլի տառերը ստացվում էին տառամիջի տարածությունները փորելու միջոցով։ Տառերի հատվածքը ուղղանկյուն է։ Տառերի հաստությունը հավասար է մոտավորապես տառագծի լայնության երկու երրորդին և հազվագեպ՝ լայնությունը։ Երբեմն, ավելի ուշ ժամանակներում, հանդիպում են կոր պրոֆիլով ուռուցիկ տառեր, որոնց կորությունը մոտավորապես կիսաշրջանի է ձգտում։ Որպես օրինակ կարող է ծառայել Հին-Ջուղայի գերեզմանատանը գտնվող խոջա Սարգիս Թումիջյանի տապանաքար-խաչքարի արձանագրությունը (1600 թ.)։

Շատ հազվադեպ, բացառիկ դեպքերում, ուռուցիկ պրոֆիլի տառեր էին փորագրվում պատերի մակերևույթի վրա որպես վերդիր։ Այդպիսի մակագրությունների տարածումը չգտնելը կապված է եղել նրանց կատարման դժվարության հետ։

Հայաստանում տարածված արձանագրությունների առավել հին տեսակը պատի մեջ խորացված մակագրություններն են. դրանք ավելի հարատև են, համեմատած ուռուցիկ պրոֆիլի մակագրությունների հետ։ Հեշտությամբ փորագրվելով, նրանք չեն պահանջում աշխատանքի կատարման մանրակրկիտ ճշտություն, իսկ փորագրության որակը ավելի բարձր է լինում։

Ուռուցիկ պրոֆիլով արձանագրությունները փորելիս ամենաչնչին սխալը ուղղելու համար, որը կարող է լինել մի փոքր ավելորդ տաշվածքի կամ անզգույշ հարվածի հետևանքով, հարկադրված են լինում ամբողջ քարը կամ շարվածքը փոխարինել նորով։

Ուռուցիկ արձանագրությունները երևացին բավականին ուշ, մոտավորապես ԺԲ դարում, հավանաբար հայկական ձեռագրերի արծաթյա կամ ոսկյա կազմերի վրայի ուռուցիկ մակագրությունների ազդեցության տակ։ Առավել հնագույններն են Մաշիթլու գյուղի (Արթիկի շրջան) հարավային ճակատի հնգատող և վերը հիշված կանգիտատ խաչտի արձանագրությունները։ Վերջինս փորագրված լինելով միևնույն շարքի երեք քարերի վրա, ունի տեքստի մի փոքր տարբերակ դասավորություն. նախ լրացված է երեք տողով առաջին քարի մակերևույթը, չորս տողով՝ երկրորդինը և վերջապես հեգով՝ երրորդինը[22]։

Հիշյալ օրինակը, յուրահատկության իմաստով, բացառություն չէ։ Տեկորի տաճարի արևմտյան դռան քովատարի (արխիտրավ) վրայի Սահակ Կամսարականի շինարարական արձանագրությունը աչքի է ընկնում նրանով, որ տեքստի տողերը դասավորված են վարից վեր[23]։

Բացի փորագրվող արձանագրություններից՝ մոտավորապես ԺԲ—ԺԳ դարերին գործածվում էին նույնպես ներկերով գրված արձանագրություններ։ Նրանք սովորաբար դասավորվում էին շենքի ներսում, պատի հարթված մակերևույթի վրա, որ երբեմն, արձանագրությունը լավ երևալու համար, ներկում էին քարից զանազանվող գույնով։ Օրինակներ կարող են ծառայել ԺԳ դարի արձանագրությունները։ Առաջինը նրանցից՝ Նոր-Գետիկ վանքի Ս. Աստվածածին եկեղեցու արևելյան մույթի մոտի խորանի վերին մասի արձանագրությունն է, որ գրված է կարմիր ներկով, մուգ-երկնագույն ֆոնի վրա։ Երկրորդը՝ նույն եկեղեցու հյուսիսային դռան վրայինն է, որ գրված է սպիտակ ֆոնի վրա կարմիր ներկով։

Պատերի ծեփված մակերևույթների վրա արձանագրությունները կատարվում էին միայն ներկերով։ Թալինի կաթողիկեի ներսում (Է դ.) առավել ուշ ժամանակի արձանագրությունը գրված է սև ներկով, հարավ-արևելյան խորանի մուտքի վերը, որով և նա գատվում էր կարմիր գույնի զարդանկարից։

Մաստարայի Ս. Հովհաննես եկեղեցու (1866 թ.) հարավ-արևելյան խորանի մուտքի վերևում եղած վերանորոգման մասին արձանագրությունը նույնպես գրված է սև ներկով։

21 Հ. Ջանփոլադյան. հիշված երկի նույն էջում.

22 Հ. Ա. Օրբելի. «Քարերի վրա հայկական արձանագրությունները», «Քրիստոնեական արևելք», Պետրոգրադ, 1917 թ., հատ. 5, § 2, էջ 17 (ռուսերեն).

23 Ն. Ցա. Մառ, «Տեկորի տաճարի կտիտորական արձանագրության ժամանակագրության շուրջը», «Քրիստոնեական արևելք», Պետրոգրադ, 1914 թ., հատ. 5, § 1, էջ 58—71։

(Շարունակելի)

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՎ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՄԵՍԻՆ ՍԽԱԼ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ՄՏՔԵՐ

Նյու-Յորքում հրատարակվող «Արմինյան գարդյան» ամսագրի 1958 թվականի հոկտեմբերի համարում, մեր ուշադրությունը գրավեց մի գրություն, որտեղ կային մեր Եկեղեցու և ժողովրդի մասին շփոթ, վտանգավոր և անհարազատ մտքեր։

Վեհափառ Հայրապետը տխրությամբ կարդաց այդ հոդվածը։

Նորին Ս. Օծության անունից, Հյուսիսային Ամերիկայի հայոց Արևելյան Թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյանին տրվեց հետևյալ հեռագիրը.

«Վեհափառ Հայրապետը վշտով կարդաց «Արմինյան գարդյան»-ի հոկտեմբերի խմբագրականը, ուր կան սխալ և վնասակար, ինչպես և մեր Եկեղեցուն ու ժողովրդին անհարազատ մտքեր։ Ցանկալի է, որ առաջնորդարանդ չեղվանավորի նման վատառողջ գրություններ և լուսավորն հավատացյալներին ուղիղ վարդապետությամբ՝ հավատարիմ Հայ Եկեղեցու ավանդական նկարագրին ու ոգուն»։

Ուրախալի է և գովելի, որ ԱՄՆ-ում ծնած և հասակ առած հայ նոր սերունդը ջերմորեն հետաքրքրվում է Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու դավանությամբ, պատմությամբ, նրա արդի վիճակով, քրիստոնեական դաստիարակության հարցերով և աշխատում է իր մտքի ու սրտի նպաստը բերել՝ «բուժելու համար չափազանց ծանր հիվանդ մեր Եկեղեցին»։ Բայց «Արմինյան գարդյան» ամսագրի հոդվածագիրը, որ փորձել է վերլուծել մեր Եկեղեցում ներկայիս տիրող տագնապի բնույթը, ցույց տալ նրա պատճառները և նշել դարմանները, ընկել է ոչ ճիշտ և մեր ժողովրդին անհարազատ եզրակացությունների մեջ։

Ահա մեր ճշտումները, որ կուզենայինք կատարել այս առթիվ և ամենալուրջ ուշադրությանը հանձնել վերոհիշյալ հոդվածագրի և մեր Եկեղեցու նկատմամբ շփոթ կարծիքներ ունեցող մեր սիրելի երիտասարդների.

ա) «Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցի» մեր Եկեղեցու պատմական անունն է և այդ անունը այսօր ոչ աշխարհագրական և ոչ ալ քաղաքացիական իմաստ ունի։ «Հայաստանյայց Եկեղեցի» անունը համազոր է «Հայ Եկեղեցի» անվան և ունի զուտ հոգևոր գաղափարական բովանդակություն։ Այս իմաստով է ահա, որ ամեն հայ, որտեղ էլ ապրելիս լինի, եթե նա քրիստոնյա հավատացյալ է, ապա ուրեմն անդամ է «Հայաստանցիների» Եկեղեցուն։

բ) Հայ Եկեղեցին ազգային Եկեղեցի է, որովհետև այդ Եկեղեցու անդամները միևնույն Ազգի զավակներն են։ Հայաստանից ներս և դուրս, աշխարհում ցրված բոլոր հայերը միատեղ կազմում են մի Եկեղեցի՝ անհատ և անբաժանելի։ Հայաստանյայց կամ Հայ Եկեղեցին հայ քրիստոնյա ժողովրդի լրությունն իսկ է։ Այս իմաստով, «Հայ ժողովուրդը Եկեղեցի ժողովուրդ է»,— ինչպես ասել է Վեհափառ Հայրապետը Իր քարոզներից մեկում,— որն իր քրիստոնեական վավերականությունը հիմնում է Հայաստան աշխարհի սուրբ հողի վրա, որտեղ քարոզեցին ու նահատակվեցին Թադեոս և Բարթողիմեոս սուրբ առաքյալները և ուր Ինքը՝ Աստուծո Միածին Որդին իջավ լուսաշող փառքով։

գ) Այս գիտակցությունը ունեցել է և ունի մեր ժողովուրդը և հենց դրա համար էլ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու դրությունը սերտորեն կապված է եղել Ազգի բախտի հետ։ Եթե մի օր Հայ Եկեղեցու ազգային նկա-

բագիրը վերացվի, հայությունը բնորոշող զգացմունքների և ապրումների շենքը փուլ կգա, հայ քրիստոնյաների հոգեբանությունը կկորցնի իր ջերմությունը, իր գույնը, իր խկությունը։

դ) Օրթոդոքս եկեղեցիները համախմբվել են ըստ ազգությունների և այդ իմաստով էլ նրանք ավտոկեֆալություն են հռչակել։ Սրանից հետևում է այն, որ վերոհիշյալ հոդվածի բերած այս օրինակը իր տեսակետի ճիշտ հակառակն է ապացուցում։

Օրթոդոքս եկեղեցու հովանու տակ, փաստորեն այսօր ազգային եկեղեցիներ են կազմակերպված՝ Հույն Օրթոդոքս եկեղեցի, Ռուս Օրթոդոքս եկեղեցի, Արաբ Օրթոդոքս եկեղեցի, Ռումեն Օրթոդոքս եկեղեցի, Բուլղար Օրթոդոքս Եկեղեցի և այլ անունների տակ։

ե) Ազգային լեզվի մոռացումը և նրա «փոխարինումը ուրիշ լեզվով կամ լեզուներով», ինչպես առաջարկում է «Արմինյան գարդյանց»-ի հոդվածագիրը, շատ անհարազատ և վտանգավոր միտք է, որն արմատախիլ պետք է անել բոլոր հայ հոգիներից։ Մարդ միայն մայրենի լեզվով կարող է աղոթել։ Հայը, ինչքան ժամանակ հայ է, երբեք չի կարող ուրիշ լեզվով աղոթել։ Որով Հայ Եկեղեցու պահպանության համար իսկ անհրաժեշտ է հայ լեզուն պահել ու պահպանել։

Հայ գրով ու հայ լեզվով է, որ քրիստոնեությունը վերջնականապես հաղթանակեց Ե դարում։

Հայ գրով ու հայ լեզվով է, որ քրիստոնեությունը մեր աշխարհում մնաց և տոկաց տարբերի հորձանքների դեմ։

Հայ գրով ու հայ լեզվով է, որ Սփյուռքում այսօր կարելի պիտի լինի պահպանել հայ քրիստոնյաների Եկեղեցին, այսինքն Հայաստանյայց Եկեղեցին։

զ) Եվ փոխադարձաբար հայ ժողովուրդը ազգային լեզվով պաշտամունքի և աղոթքի մեջ՝ տեսել է իր ազգային գոյության հզոր ազդակներից մեկը։

«Ա՜խ, լեզո՛ւն, լեզո՛ւն, լեզուն որ չըլի, մարդ ինչին նման կըլի։ Մեկ ազգի պահողը. իրար միացնողը ԼԵԶՈՒՆ ա ու ՀԱՎԱՏԸ։ Լեզուդ փոխիր, հավատդ ուրացիր, էլ ինչո՞վ կարես ասել, թե ո՞ր ազգիցն ես։ Ինչ քաղցր պատվական կերակուր էլ տաս ուրիշին, էլի իր մոր կաթը նրա համար շատարից էլ ա անուշ, մեղրից էլ» (Աբովյան)։

Դարեր շարունակ հայոց մեծասքանչ լեզուն և հայ ժողովրդի հարուստ գրականությունը, քաղաքականապես անշատ ապրող կամ աշխարհագրականորեն օտար միջավայրում ցրված հայ ժողովրդի պանդուխտ բեկորների համար հանդիսացել են համազգային միության, ազգային ընդհանրության պատմական ամենամեծ գործոնները։

է) Եկեղեցու և լեզվի միջոցով պահվել է ազգային միությունը «մրրկաց» բաժանված նույն ժողովրդի զավակների միջև։

Միայն և միայն ինքնուրույն եկեղեցու, մայրենի լեզվի, հայկական մշակույթի և հայրենաբաղձ զգացմունքների պահպանմամբ կարելի կլինի զորավոր պատնեշ կանգնեցնել ուծացման և ցրումի դեմ, և այսպիսով պաշտպանել և պահպանել Սփյուռքի հայությանը։

Վեհափառ Հայրապետը քաղցր և պատասխանատու պարտականություն է դրել մեր բոլոր թեմերի առաջնորդների, թեմական խորհուրդների և հավատացյալ ժողովրդի վրա՝ դուրգուրել և աչքի լույսի պես պահել մեր սուրբ հավատը իր ուղղափառ դավանությամբ, իր բոլոր սուրբ ավանդություններով, իր ազգային նկարագրով և մեր մեծասքանչ լեզվով։

Լուսավորված մեր նախնյաց սուրբ հավատով, շեն, կենդանի և ամբողջ պահել մեր Մայր Եկեղեցին, խոսել ու խոսեցնել մեր մայրենի քաղցր լեզուն, տարածել մեր փառավոր մշակույթի հազարամյա արժեքները, ուրախանալ ու ոգևորվել մեր Հայրենի երկրի վերածնունդով, նրա շինարար առաջընթացով և ծաղկումով. ահա հայ ժողովրդի պահպանման ու փրկության միա՛կ ճանապարհը։

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ
ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ